ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 81'276.6:34
ԳՄԴ 81.2+67.0
Ա 791

Հրատարակության են երաշխավորել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը և հայոց լեզվի ամբիոնը։

Խմբագիր *՝ Լ. Ավետիսյան (բ. գ. թ., դոց.)*

Գրախոսներ *՝ Ա. Վաղարշյան (հ. գ. դ., պրոֆ.), Լ. Թելյան (բ. գ. թ., դոց.), Մ. Ֆելեքյան (բ. գ. թ., դոց.)*

Յու. Ավետիսյան, Ա. Մկրտչյան, Լ. Սարգսյան
Ա 791 Իրավաբանական գրագրության լեզուն/ Յու. Ավետիսյան, Ա. Մկրտչյան, Լ. Սարգսյան: Եր., ԵՊՀ հրատ., 2019, 202 էջ:

Գիրքը մեզանում իրավական փաստաթղթերի լեզվին նվիրված առաջին աշխատանքներից է: Այստեղ նկարագրվում են գրագրության լեզվական հատկանիշները, տրվում են իրավական տեքստի մշակման և խմբագրման հանձնարարականներ:

Նախատեսված է իրավաբանների և հարցով հետաքրքրվող լսարանի համար:

ՀՏԴ 81'276.6:34
ԳՄԴ 81.2+67.0

ISBN 978-5-8084-2370-1

© ԵՊՀ հրատ., 2019
© Ավետիսյան Յու., Մկրտչյան Ա., Սարգսյան Լ., 2019

Օրենքի մեկնաբանության եզակետը
հենց օրենքի լեզուն է։

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գործնական գրագրության ձևերը բազմազան են՝ հրաման, որոշում, ծանուցագիր, դատական ակտ և այլն։ Բազմազանությամբ հանդերձ՝ ունեն ձևակերպման և շարադրանքի ընդհանրություններ։ Դրանցում կարևոր են ոչ միայն հաղորդվող նյութի բովանդակությունը, փաստերն ու փաստարկումները, ձևավորումը, այլև շարադրելու մշակույթը, լեզվական անհրաժեշտ միջոցների ու ձևերի ընտրությունը։ Ըստ էության, մեծ չափով հենց այդ ընտրությունն է պայմանավորում տեքստի հաջողվածությունը։ Սխալ դրված կետադրական նշանը, դրա բացթողումը կամ մեկ բառի անճիշտ գործածությունը կարող են էապես խաթարել շարադրանքի էությունը, նրա բովանդակային որակները։

Իրավաբանությունը, բազում առաքելություններից զատ, կոչված է նաև յուրահատուկ երկխոսություն ունենալու հանրության հետ։ Այդ երկխոսությունը ապահովող կարևոր բաղադրիչներից են իրավական տեքստի **մատչելիությունը, ճշգրտությունը**։ Տեքստը

պետք է հասկանալի լինի միջինից ցածր կարգ ունեցող իրավաբանին և միջինից բարձր իրավագիտակցություն ունեցող ոչ իրավաբանին: Այն չպետք է խճողված լինի անհասկանալի բառերով ու արտահայտություններով: Իսկ այդպիսի իրավական փաստաթուղթ կազմելը դյուրին գործ չէ: Հեղինակից պահանջվում է շատ որոշակի հմտություն, որը իր հերթին ձևավորվում է մասնագիտական կարողությունների և լեզվական գիտելիքների ներդաշնակ համադրությամբ: Դա **ճշգրիտ, հստակ** և **մատչելի** իրավաբանական **տեքստ** կազմելու ունակությունն է:

Գրագրությունների հղկված լեզուն, պարզ խոսքը, փաստաթղթերի մշակված ձևաչափը պետաիրավական հիմնարկի համար երաշխավորում են նաև որոշակի **վարկանիշ**. գրագետ և համակարգված խոսքը ապահովում է տեղեկատվության արագ և անմիջական ընկալում, հնարավորություն է տալիս խուսափելու տարընթերցումներից, վստահություն է ներշնչում, ձևավորում է գործընկերային կայուն հարաբերություններ, ի վերջո դառնում է բարձր վարկանիշ ձևավորելու միջոց:

Այս ձեռնարկը մեծ մասամբ կազմված է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի և իրավական տարբեր կառույցների փաստաթղթերի լեզվական նյութի հիման վրա: Առաջին անգամ փորձ է արվում համակարգված և ամփոփ ներկայացնելու իրավական գրագրության լեզվական առանձնահատկություննե-

ը՝ արժանիքներն ու թերությունները[1]: Փաստական նյութը ներկայացվում է ճիշտ ու սխալի զուգորդումներով. լեզվական յուրաքանչյուր անճիշտ կամ ոչ նախընտրելի դեպքի համար առաջարկվում է ճիշտ կամ նախընտրելի տարբերակ, որը իր հերթին ապահովում է խոսքի ճշտությունը, ճշգրտությունը, մատչելիությունն ու սեղմությունը:

Քննարկվող երևույթի վերաբերյալ լեզվական կանոնը մատուցվում է խիստ անհրաժեշտության դեպքում և ընտրողաբար՝ առանց ավելորդ քերականագիտական բեռի: Եվ քանի որ ձեռնարկը կազմվել է **գործնական ուղեցույցի սկզբունքներով ու նմանողությամբ,** ուստի ոչ լեզվաբան մասնագետին արագ կողմնորոշելու համար շարադրանքում երբեմն մեկտեղվել են լեզվի տարբեր մակարդակների միավորների նկարագրությունները: Օրինակ՝ բառային սխալ կազմությունների մեջ ներկայացվում են նաև ձևակազմական որոշ անճշտություններ, բառաձևերի սխալ կիրառություններ:

---

[1] Հայերենի գործառական ոճերին նվիրված աշխատանքներում (**Մելքոնյան Ս.**, Ակնարկներ հայոց լեզվի ոճագիտության, Եր., 1984: **Եզեկյան Լ.**, Ոճագիտություն, Եր., 2003: **Ավետիսյան Յու.,** Պաշտոնական ոճ, Եր., 2011 և այլն) ներկայացվել են նաև իրավաբանական ենթաոճի լեզվական առանձնահատկությունները: Դրանցում անդրադարձներ են եղել նաև տեքստերի լեզվական սխալներին, դրանք շտկելու հնարավոր ձևերին: Այս ձեռնարկը մեզանում բուն իրավական փաստաթղթերի լեզվի քննության, խմբագրման և մշակման գործին նվիրված առաջին աշխատանքն է:

Այս ձեռնարկ-ուղեցույցը կոչված չէ նրան, որ իրավաբանական խոսքի նմուշներով նկարագրվեն հայերենի քերականական կանոնները. դրանք վաղուց և հանգամանորեն տրված են տասնյակ դասագրքերում ու տեղեկատուներում: Ընդհակառակը, լեզվական նյութի ընտրությունը թելադրվել է իրավաբանական խոսքի առանձնահատկություններով: Համոզված ենք, որ այսպիսի ձևաչափը առավել արդյունավետ է ծառայելու իր նպատակին:

Ձեռնարկում տրվում է իրավաբանական գրագրության համընդհանուր և ամփոփ նկարագիրը, և դա արվում է իրավական տարաբնույթ փաստաթղթերի կառուցվածքային ու բովանդակային ընդհանուր հատկանիշների համակարգված վերլուծությամբ:

Սիրով կընդունենք այն դիտողություններն ու առաջարկները, որոնք կնպաստեն ձեռնարկը հետագայում մշակելուն:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Յուրաքանչյուր իրավաբանի համար մասնագիտական գրավոր խոսքին տիրապետելը անհրաժեշտություն է: Իհարկե, դատական գործընթացում դատավարության մասնակիցները իրենց դիրքորոշումներն ու առարկությունները հայտնում են բանավոր ելույթներով, սակայն դատավարության ընթացքը ընդգրկում է գրավոր մեծածավալ աշխատանք՝ հայցադիմում կամ դիմում, հայցադիմումի պատասխան, բողոք, գրավոր առարկություններ, միջնորդություններ, դատական ակտ և այլն: Երբ դատավարությունն ավարտվում է, և կողմերը լռում են, դատարանի ձայնը հանրությանը լսելի է դառնում հենց գրավոր խոսքի՝ դատական ակտի միջոցով, որը միակ համապարփակ վկայությունն է դատավարական ամբողջ ընթացքի:

Դատական ակտը արդարադատության գործընթացի մանրակերտն է:

Սա ապրող և ժամանակի ընթացքում չհնացող իրողություն է. պատահական չէ, որ նախադեպային իրավունքի մեջ տասնամյակների վաղեմություն ունեցող դատական ակտերը կիրառվում են նաև այսօր և մեծ համբավ են վայելում: Դատական ակտի դերը

խիստ կարևոր է քաղաքացիական շրջանառության կայունությունը ապահովելու գործում: Այն, օրինական ուժ ստանալով, կարծես վերածվում է «պատվիրակված օրենքի»՝ առարկայացնելով նորմատիվ իրավական կարգավորումների ներգործությունը հասարակական հարաբերությունների վրա: Դատարանի որոշումը կամ վճիռը ոչ միայն կատարում է հասարակական հարաբերությունները կարգավորելու, անձանց իրավունքների և օրինական շահերի խախտումները կանխարգելելու գործառույթներ, այլև նպաստում է օրենքի նկատմամբ հարգալից վերաբերմունք ձևավորելուն:

Դատական ակտերի կառուցվածքային և բովանդակային ճիշտ ձևակերպումը մեծ նշանակություն ունի արդարադատությունը պատշաճ իրականացնելու համար:

Դատական ակտերի կառուցվածքին ներկայացվող պահանջները առաջին անգամ օրենսդրորեն ամրագրվեցին 1998 թ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Սահմանվեց դատական ակտի կառուցվածքը. այն բաղկացած է **ներածական, պատճառաբանական** և **եզրափակիչ** մասերից, ինչպես նաև ներառում է այնպիսի տվյալներ, որոնք պարտադիր պետք է տեղ գտնեն դատական ակտում: Դրանով օրենսդրորեն հիմք դրվեց մի համընդհանուր սկզբունքի, որի համաձայն՝ դատական ակտը կազմվում էր օրենսդրությամբ սահմանված չափորոշիչների և

դատավորի անհատական իրավակիրառ հմտությունների համատեղումով:

Զարգացման հաջորդ փուլը նախանշվեց ՀՀ Սահմանադրության՝ 2005 թ. փոփոխություններով: Անհրաժեշտ էր օրենսդրությամբ սահմանել այնպիսի չափորոշիչներ, որոնք կապահովեին ոչ միայն դատական ակտերի կառուցվածքի միասնականությունը, այլև դրանց հստակությունը և որոշակիությունը: Այս շրջանում կարևորություն տրվեց դատական իշխանության հանրային ընկալմանը, առաջնային նշանակություն ձեռք բերեց արդարադատության մատչելիությունը: Մշակվեցին քաղաքացիական դատավարության ձևաթղթեր, որոնք դատարան ներկայացվող փաստաթղթերի օրինակելի, ոչ պարտադիր ձևեր են: 2008 թ. հունիսի 13-ին ընդունվեց Դատարանների նախագահների խորհրդի որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի կառուցվածքը հաստատելու մասին»:

2005 թ. սահմանադրական բարեփոխումները ինստիտուցիոնալ հիմք դարձան նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի ձևավորման համար: Վճռաբեկ դատարանի որոշումները ևս որոշակի փոփոխության ենթարկվեցին. որոշումների պատճառաբանական մասը բաժանվեց չորս առանձին հատվածների՝ **գործի դատավարական նախապատմություն**, **գործի փաստական հանգամանքներ** և **վճռաբեկ բողոքի քննության համար էական նշա-**

նակություն ունեցող փաստեր, վճռաբեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջներ, վճռաբեկ դատարանի պատճառաբանություններ և **եզրահանգում**:

Փաստաթղթի կառուցամասերի այսպիսի փոփոխությունը կոչված էր ոչ միայն դատական ակտերը համակարգված, միատեսակ և դյուրընկալելի դարձնելուն, այլև իրավական խոսքը է՛լ ավելի **տրամաբանական, մատչելի և գրագետ մակարդակի հասցնելուն**: Այս միտումը շարունակական է:

Ակնհայտ է, որ լեզուն հասարակական հարաբերությունների ազդեցությունը կրող հարափոփոխ երևույթ է, ուստի իրավաբանության ոլորտում այն մշտապես վերանայվելու, բարելավվելու և շտկվելու կարիք ունի: Այս պատճառով է, որ դատական ակտերի կառուցվածքային և լեզվական խնդիրները դառնում են հատուկ ուշադրության առարկա:

Պետք է նկատել, որ միայն լեզվաբանական կանոնների ճշգրիտ կիրառությունը կամ գրագետ խոսքը բավարար չէ որակյալ դատական ակտ կազմելու համար: Կան մի շարք այլ գործոններ, որոնց շատ հաճախ առերեսվում ենք: Օրինակ՝ նախադեպային որոշումների երկարաշունչ մեջբերումները ծանրաբեռնում են դատական ակտերը՝ դրանց ընդհանուր բովանդակությունը դարձնելով դժվարընկալելի և աղճատված: Ուստի այսօր դատական ակտի **մատչելիությունը**՝ որպես իրավական որոշակիության սկզբունքի կարևոր բաղադրատարր, շարունակում է մնալ խիստ արդիական խնդիր: Անշուշտ, իրավա-

կան լեզվի բարդ և յուրօրինակ բառապաշարը, տերմինների բազմազանությունը, վերամբարձ, նաև հնացած լեզվական միջոցները, բազմաբարդ նախադասությունների կուտակումները, անընդմեջ հղումները՝ ձևակերպված խրթին նախադասություններով, իրավական խոսքը դարձնում են չոր, կաղապարված, դժվարըմբռնելի: Եվ այս համատեքստում իրավական ոճի մատչելիության հարցը ձեռք է բերում առանցքային նշանակություն:

Մեկ այլ խնդիր. օրենսդրական փոփոխությունները և թարգմանական գրականությունից անհաջող մեջբերումները դարձել են լեզվական «նորամուծությունների», հայերեն լեզվամտածողությանը խորթ միավորների ստեղծման աղբյուր: Դատական ակտերում տարիների ընթացքում ձևավորվել են օտարաբան լեզվակաղապարներ, որոնք սպառնում են դուրս մղել պարզ ու հասկանալի խոսք կառուցելու՝ հայերենի կանոններն ու օրինաչափությունները:

Լեզուն մտածողություն և աշխարհայացք ձևավորող կարևորագույն միջոց է և պետք է օգտագործվի մեծ զգուշությամբ ու պատասխանատվությամբ: Հայերենը հարուստ է ու ճկուն. բառային կամ շարահյուսական մեկ միավորի (նույնիսկ մեկ կետադրական նշանի) ճիշտ ընտրությունը կարող է որոշիչ դեր կատարել հայեցի լեզվամտածողությամբ հյուսված դատական ակտ ունենալու համար:

Շարադրանքի **պարզ, հստակ և ճշգրիտ** ոճը կարևոր է հատկապես իրավական նորմերի լեզվաբանական մեկնաբանման եղանակը կիրառելի դարձնելու առումով: Անհրաժեշտ է ձերբազատվել արհեստածին

և օտար միավորներից և ձևավորել իրավական լեզվի մի նոր որակ, որը կապահովի մեր հասարակության համար արդարադատության մատչելիությունն ու հասանելիությունը:

Ի՞նչ է տալիս մեզ մատչելի և պարզ լեզվով կազմված դատական ակտը:

Իրավական խոսքի մատչելիությունը շահավետ է և՛ դատարանի, և՛ հասարակության համար: Ընթերցողը, լինի նա դատավարության կողմ թե մի ուրիշ անձ, հեշտությամբ և առանց լրացուցիչ իրավաբանական օգնության ընկալում է դատական ակտի բովանդակությունը, իսկ դատարանը հասնում է իր հիմնական նպատակներից մեկին. ոչ միայն իրականացնում է արդարադատություն, այլև այն հասանելի է դարձնում լսարանին: Ի վերջո, դատական ակտը այն միակ գործուն միջոցն է, որով իրականանում է **դատարան - դատավարության կողմեր – հասարակություն** եռակողմ հաղորդակցությունը: Դատական ակտերի մատչելիությունը և հստակությունը կնպաստեն, որ իրավունքի գերակայությունը ավելի հասանելի և կանխատեսելի դառնա հանրության համար, կբարձրացնեն թե՛ հասարակության իրավագիտակցության մակարդակը, թե՛ դատական իշխանության հեղինակությունն ու նրա նկատմամբ հանրային վստահությունը:

ՄԱՍ 1. ՄԵԾԱՏԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Հատուկ անուններ

Փաստաթղթերում հատուկ անունների գրությունը և մեծատառերի գործածությունը աչքի են ընկնում որոշակի անմիօրինակությամբ: Կանոնից շեղումները հաճախակի են: Երբեմն նույն փաստաթղթում հանդիպում է միևնույն բառի երկակի գրություն, որը անհետևողականության կամ անուշադրության հետևանք է, ինչպես՝ ***Վճռաբեկ/վճռաբեկ դատարան, Վերաքննիչ/վերաքննիչ դատարան, Կառավարություն/կառավարություն*** և այլն: Մինչդեռ նշվածների վերաբերյալ սահմանված են գործածության հստակ կանոններ. պետությունների կենտրոնական ղեկավար օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն մարմինների բաղադրյալ (երկու և ավելի բաղադրիչ ունեցող) հատուկ անուններում մեծատառով պետք է գրել **միայն առաջին բաղադրիչը**[2]:

Ճիշտ են՝

(ՀՀ) Ազգային ժողով
(ՀՀ) Վճռաբեկ դատարան

---

[2] Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, էջ 291:

(ՀՀ) Կառավարություն
(ՀՀ) Սահմանադրական դատարան

Իսկ վերոնշյալ կանոնի մեջ չմտնող բաղադրյալ անունները՝ որպես հասարակ անուններ, պետք է գրել փոքրատառով: Խոսքը վերաբերում է նախարարությունների, դատարանների, տեսչությունների, տարատեսակ խորհուրդների, կոմիտեների, կրթական հաստատությունների և դրանց ստորաբաժանումների, պետական, զինվորական, գիտական և այլ պաշտոնների ու կոչումների անվանումներին[3]:

Ճիշտ են՝

արդարադատության նախարարություն
պաշտպանության նախարարություն
գլխավոր դատախազություն
վերաքննիչ քրեական/քաղաքացիական դատարան
քննչական կոմիտե
բարձրագույն դատական խորհուրդ
արդարադատության ակադեմիա
իրավագիտության ֆակուլտետ
գլխավոր դատախազ
գերագույն գլխավոր հրամանատար

Ծանոթություն: Վերը նշված գրությունը կարող է չպահպանվել մեծարման և քաղաքավարական ոճերում[4]:

---

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 292-293:
[4] Տե՛ս նույն տեղը:

Իրավաբանական գրագրություններին բնորոշ է նաև այս կամ այն բառի պայմանական մեծատառ գրությունը, ինչպես՝ *Նախագահ, Պատվիրատու, Օրենք, Դատարան, Դիմումատու, Հոդված 2, Հայցվոր* և այլն: Այսպիսի գրությունը նպատակ ունի նախ՝ շարադրանքում ընդգծելու, մասամբ առանձնացնելու առանցքային նշանակություն ունեցող բառը, ապա՝ անհարկի կրկնությունից խուսափելու: Օրինակ՝ վերաքննիչ դատարանի դատական ակտում **առաջին ատյանի դատարան** կայուն կապակցությունը անընդհատ չկրկնելու համար փաստաթղթի սկզբում *առաջին ատյանի դատարան*-ի դիմաց՝ փակագծերում, նշվում է՝ (այսուհետև նաև՝ *Դատարան*): Ընդ որում, հենց այս՝ պայմանական մեծատառ գրությամբ էլ տարբերվում է մյուս՝ **վերաքննիչ դատարան**-ից: Կամ՝ դատական ակտը, օրինակ, վերաբերում է *ֆինանսների բաշխման ծրագրին.* ակտի սկզբում նախ՝ նշվում է՝ *«Ֆինանսների բաշխման ծրագիր (այսուհետև՝ Ծրագիր)»*, ապա՝ խոսքը չծանրաբեռնելու համար գործածվում է մեծատառով գրված *Ծրագիր* բառը: Նման դեպքերում խոսքի ճշգրտության, նույնության և հստակության համար ողջ շարադրանքում պետք է հետևողականորեն **նույնությամբ պահպանել** բառի գրությունը: Հակառակ դեպքում չի բացառվում, որ անմիօրինակ գրությունը շփոթության առիթ տա:

1.2. Հապավումներ

Հայտնի է, որ տառային հապավումները գրվում են մեծատառերով, ինչպես՝ **ԲԴԽ, ՔԿ, ՓԲԸ, ՊԵԿ, ՍՊԸ, ԲԲԸ, ՔԿԱԳ** և այլն (բացառություն են՝ *բուհ, ատկ, ջէկ, հէկ*):

Իրավաբանական գրագրության մեջ ինչ-որ չափով խնդրահարույց է հապավումները մասնակի բացելու հարցը: Փաստաթղթերում այդ երևույթը հաճախ է հանդիպում հատկապես այն հապավումների գործածության դեպքում, որոնց վերջին բաղադրիչը ներքին փոփոխության ենթարկվող կամ հնչյունափոխված բառ է, ինչպես՝ ***ՍՊ ընկերության*** *ներկայացուցիչը*, ***ՓԲ ընկերության*** *փաստաբանը*: Խնդիրն իհարկե առավելաբար կապվում է հապավումների քերականական փոփոխություններին, մասնավորապես հոլովմանը: Պետք է հիշել, որ **հապավումը բառային միավոր է**, և քերականական փոփոխության համար պետք է օգտվել գործող կանոնից: Ըստ հայերենի տերմինաբանական կոմիտեի որոշման՝ «Ուղիղ ձևով (առանց հոլովական վերջավորության) գործածվում են միայն հատկացուցչի պաշտոնում կիրառվող այն տառային հապավումները, որոնց բաղադրիչ տառերն արտասանվում են առանձին–առանձին (բաղաձայններն ուղեկցվում են չգրվող **ը**–ով)»[5]: Օրինակ՝ ***ՀՀ*** *Ազգային ժողով,* ***ԱԺ*** *պատգամավոր,* ***ԱԳՆ*** *վարչություն,* ***ՍՊԸ*** *ներկա-*

[5] Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», էջ 203-204:

յացուցիչ, ***ԿԲ*** *հայտարարություն*: Մյուս բոլոր դեպքերում, ըստ նույն որոշման, տառային հապավումները պետք է գործածել հոլովումներին հատուկ վերջավորություններով (կամ հոդերով), օրինակ՝ ***ՄԱԿ–ի*** *Անվտանգության խորհուրդ, անձի և* ***ՄՊԸ–ի*** *միջև,* ***ՀՀ–ից*** *արտաքսված,* ***ՄԻԵԴ-ի*** *ներկայացուցիչ,* ***ՊՈԱԿ–ը*** *հայցադիմում է ներկայացրել:*

Այսպիսով, հնարավոր շփոթից խուսափելու, նաև խոսքի միօրինակությունը պահպանելու համար խորհուրդ չի տրվում հապավումը մասնակի բացել, մանավանդ որ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավական ակտերի վերնագրերում հապավումներ և կրճատագրություն կատարելն արգելվում է[6]: Ուստի գրագրություններում յուրաքանչյուր հապավում առաջին գործածության դեպքում տրվում է բացված՝ ամբողջական անվանումով, ինչպես՝ ***փակ բաժնետիրական ընկերություն*** *(այսուհետև՝* ***ՓԲԸ),*** ***ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն*** *(այսուհետև՝* ***ՈՒՎԿ ՓԲԸ),*** ***պետական ոչ առևտրային կազմակերպություն*** *(այսուհետև՝* ***ՊՈԱԿ),*** ապա հետագա շարադրանքում գործածվել է հապավումը:

Կանոնի համաձայն՝ օտարալեզու տառանուններով կազմված հապավումներում մեծատառ են գրվում յուրաքանչյուր տառանվան առաջին տառը, ինչպես՝

---

[6] Տե՛ս «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 2018 թ. մարտի 21-ին: (https://www.arlis.am/document view.aspx? docid= 120733)

ԷյՀԷյԲիՄի, ԲիԲիՄի, ՄիԷնԷն և այլն: Ընդ որում, անհրաժեշտության դեպքում հայերեն հապավման կողքին՝ փակագծերում, կարող է տրվել նաև դրանց լատիներեն կամ օտարալեզու տարբերակը[7]:

Ծանոթություն: Երբ անունը կամ անվանումը հաստատող փաստաթղթերում գրության սխալ կա (օրինակ՝ անձնագրում՝ **Մարյամ** (փոխ.՝ **Մարիամ**), կազմակերպության անվանումը փաստաթղթերում՝ **Նայիրի** (փոխ.՝ **Նաիրի**)), ապա այդ սխալը իրավաբանական փաստաթղթեր է փոխանցվում չխմբագրված:

1.3. Թվարկվող միավորներ

● Եթե թվարկվող միավորները բառեր կամ բառակապակցություններ են, ապա թվարկումը պետք է սկսել **փոքրատառով**: Թվարկմանը նախորդող բառի վրա դրվում է բութ (կարող է դրվել նաև միջակետ): Օրինակ՝

Մնանկության վարույթում առկա է հավաքած գումարների 2 ուղղություն՝

*1) **ս**նանկության վարույթը իրականացնելու համար անհրաժեշտ ծախսեր,*

*2) **գ**րանցված պահանջատերերի պահանջների բավարարում:*

Սրանց՝ մեծատառով գրությունը **հանձնարարելի չէ** :

---

[7] Տե՛ս նույն տեղը:

● Եթե թվարկվող միավորները առանձին նախադասություններ են, ապա պետք է սկսել **մեծատառով**: Թվարկմանը նախորդող բառից հետո դրվում է միջակետ, իսկ թվարկվող յուրաքանչյուր նախադասությունից հետո՝ վերջակետ: Օրինակ՝

Ծրագրով նախատեսվել է X դրամ, որից.

ա) Չապահովված պարտատիրոջ պահանջները մարելուն հատկացվել է X դրամ:

բ) Կառավարչին որպես վարձատրություն տրվել է X դրամ:

գ) Գույքը պահպանելու և տնօրինելու համար հատկացվել է X դրամ:

● ***Կարելի է նաև*** թվարկվող միավոր նախադասությունները սկսել **փոքրատառով**: Այս դեպքում թվարկվող նախադասություններն անջատվում են ստորակետով կամ միջակետով: Վերջին թվարկվող նախադասությունից հետո դրվում է վերջակետ: Օրինակ՝

Ծրագրով նախատեսվել է X դրամ, որից.

ա) չապահովված պարտատիրոջ պահանջները մարելուն հատկացվել է X դրամ,

բ) կառավարչին որպես վարձատրություն տրվել է X դրամ,

գ) գույքը պահպանելու և տնօրինելու համար հատկացվել է X դրամ:

Չի հանձնարարվում թվարկվող միավորներից յուրաքանչյուրը սկսել մեծատառով, եթե այդ միավորնե-

ը միմյանցից տրոհում ենք ստորակետով կամ միջակետով:

Ծանոթություն: Նորմատիվ իրավական ակտերի կազմության մեջ գործում են այլ սկզբունքներ: Հոդվածները, գլուխները և մասերը համարակալելու և կետադրելու համար հստակ սահմանված են կանոններ, որոնց համաձայն՝ «Օրենսդրական ակտի հոդվածները, մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հոդվածում ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով: Հոդվածում ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից բաժանվում են միջակետով»[8]: Բերենք մեկ օրինակ:

*«**Հոդված 52.** Դատարանում որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավունք ունեցող անձինք*

***1.** Դատարանում ներկայացուցչությունն իրականացնում են փաստաբանները, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով հավատարմագրված օտարերկրյա փաստաբանները:*

***2.** Դատարանում ներկայացուցիչ կարող են լինել նաև՝*

[8] Տե՛ս «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը:

1) սույն օրենսգրքով ուղղակիորեն նախատեսված անձինք.

2) սույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-5-րդ մասերով նախատեսված անձանց լիազորած այն անձինք, որոնք ներկայացվող իրավաբանական անձի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ են.

3) անձինք, որոնք՝

***ա.** անվճար ներկայացնում են իրենց ծնողի, զավակի, պապի, տատի, թոռան, հորեղբոր, հորաքրոջ, մորեղբոր, մորաքրոջ, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, վերջիններիս ամուսնու կամ զավակի, ինչպես նաև իր ամուսնու կամ նրա ծնողի, զավակի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ շահերը,*

***բ.** վճարովի կամ անվճար ներկայացնում են այն իրավաբանական անձի շահերը, որի կանոնադրական կապիտալի բաժնեմասերի կամ բաժնետոմսերի քսան և ավելի տոկոսը պատկանում է իրենց կամ սույն կետի «ա» ենթակետում նշված անձանց»[9]:*

Ինչպես տեսնում ենք, լեզվական կանոնը երբեմն տարբերակային ձևերի ընտրության հնարավորութ-

---

[9] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 2018 թ. փետրվարի 9-ին, ուժի մեջ է մտել 2018 թ. փետրվարի 9-ին: Այս և մյուս դեպքերում օրենքներին արված հղումները տրվում են առանց խմբագրման:

յուն է տալիս: Միօրինակության և կառուցիկ փաստաթուղթ կազմելու համար պարզապես նախապատվությունը պետք է տալ հարմար տարբերակին:

ՄԱՍ 2. ԲԱՌԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՌԱԳՈՐԾԱ-ԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Բառի անհարկի գործածություն

Իրավաբանության մեջ գործում են իրավական տեքստի մեկնաբանության մի քանի եղանակներ: Դրանցից կարևորագույնը **լեզվաբանական եղանակն է**, որի համաձայն՝ իրավական նորմը մեկնաբանվում է նախ և առաջ բառային ու քերականական միջոցների տեսանկյունից: Հստակեցվում են բառի իմաստը, իրավաբանական և այլ մասնագիտական տերմինների նշանակությունը, պարզաբանվում է շաղկապների նշանակությունը, որպեսզի ճշգրտվի՝ տվյալ նորմում պահանջվում է կապվող բոլո՞ր բաղադրիչների, թե՞ դրանցից միայն մեկի առկայությունը: Ուշադրություն է դարձվում բազմիմաստ բառերի, բայերի ժամանակաձևերի, կետադրական նշանների գործածությանը: Ուսումնասիրվում է նաև առանձին բառերի, տերմինների շարադասությունը՝ պարզելու համար, թե օրենսդիրը ինչ նպատակ է հետապնդել՝ դրանք այս կամ այն հերթականությամբ ամրագրելով: Ընդ որում, լեզվաբանական եղանակը դառնում է ելակետային իրավական մեկնաբանության մյուս՝ տրամաբանական, համակարգային, պատմաքաղաքական և մյուս

եղանակների համար[10]: Ըստ էության, փաստաթղթի լեզուն, դրա խոսքային որակները իրավաբանական տեքստի պարզաբանության համար դառնում են կարգավորող առաջնային գործիքներ:

Դեռևս 2002 թ. ընդունված «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում էր՝ իրավական ակտերի լեզուն պետք է լինի **ճշգրիտ**, **հստակ** և **մատչելի**[11]: Հետագա տասնամյակում օրենքը փոփոխվել է: 2018 թ. ընդունված և ներկայումս գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում նշված կետը բացակայում է[12]: Անկախ այս հանգամանքից՝ իրավաբանական տեքստի համար **ճշգրտությունը**, **հստակությունն** ու **մատչելիությունը** միշտ էլ պարտադիր որակներ են: Հետևաբար իրավական գրագրության մեջ կարևոր են ոչ միայն հաղորդվող նյութի բովանդակությունը, փաստերն ու փաստարկումները, ձևավորումը, այլև շարադրելու մշակույթը, լեզվական անհրաժեշտ միջոցների ու ձևերի նպատակային ընտրությունը:

---

[10] Այս մասին մանրամասն տե՛ս **Григорьев А. С.**, Юридическая техника: учебное пособие (электронное издание), Тюмень, 2015. https://lawbook.online/yuridicheskoy-tehniki-osnovyi/sposobyi-metodyi-tolkovaniya-normativno-67548.html

[11] Տե՛ս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մաս, ընդունվել է 2002 թվականի ապրիլի 3-ին: Ուժը կորցրել է 2018 թ. ապրիլի 7-ին (www.arlis.am/documentview.aspx?docID=90941):

[12] Տե՛ս «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը:

Այսպես: Խոսքի վերը նշված որակներն ունենալու համար անհրաժեշտ է **ընտրել ճիշտ բառը և այն ճիշտ գործածել**: Շատ բառեր իմանալը դեռևս բավարար պայման չէ դրանք ճիշտ ու տեղին գործածելու համար: Հարկավոր է տիրապետել բառիմաստներին, բառային զուգակցումների նրբությանը, բառի գործառական հնարավոր իրացումներին:

Տեքստի որակական հատկանիշները պահպանելու համար ընդհանրապես պետք է խուսափել ավելորդ բառերի՝ ավելորդաբանությունների գործածությունից, ոչ ճիշտ բառընտրությունից և անտեղի կրկնություններից: Այդ նպատակով անհրաժեշտ է հետևել որոշակի սկզբունքների:

1) Հրաժարվել վերաբերմունք արտահայտող բառերի անհարկի գործածությունից:

Նախ՝ անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր բառ իր տեղին կիրառությամբ ապացուցի հենց **այդտե՛ղ հայտնվելու և այդտե՛ղ կիրառվելու իր իրավունքը**: Ապա՝ պետք է խուսափել այնպիսի բառերի գործածությունից, որոնք ոչ միայն որևէ նոր բան չեն ավելացնում տեքստին, այլև անհարկի ծանրաբեռնում են այն:

Հայտնի է, որ կան փաստաթղթեր՝ դատական ակտ, ծանուցագիր, արձանագրություն և այլն, որոնք պետք է **չեզոք** լինեն: Մինչդեռ երբեմն գործածվում են բառեր, արտահայտություններ, որոնք արարքի, որոշման, եղելության, անձի և այլնի հանդեպ այդպիսի վերաբերմունք չեն ապահովում: Ավելին՝ ընդգծում

են իրավակիրառողի սուբյեկտիվ վերաբերմունքը: Օրինակ՝

*Հայցադիմումը **արդարացիորեն** չի ընդունվել վարույթ:*

Նախադասությունը դատական ակտից է. խոսքը ավելի տեղին և անաչառորեն համոզիչ կլիներ առանց հաստատական վերաբերմունք արտահայտող մակբայի՝

Հայցադիմումը չի ընդունվել վարույթ:

Ակտի հետագա մեկնաբանությունը պիտի ցույց տա, թե որքանով էր արդարացված հայցադիմումը վարույթ չընդունելը:

Կամ՝

*Տուժողը, **բարեբախտաբար** տեղում լինելով, կարողացել է ընդունել....: ⇒ Տուժողը, տեղում լինելով, կարողացել է ընդունել....:*

Վերաբերմունքային բառերի գործածության այլ օրինակներ՝

*Բողոքը բավարարելու հիմքերը **իրավացիորեն** բացակայում են:*

*Հայցվորը **միանգամայն** իրավաչափ **կերպով** իրացրել է ....իր իրավունքը:*

*Հայցվորը, որը **անառարկելիորեն** ծանուցվել էր դատական նիստի մասին....:*

*Դատարանը **անվերապահորեն** ընդունել է այն, որ....:*

*Օրենսդիրն **ավելի քան** պարզ է սահմանում այն....:*

Երբեմն մեկ նախադասության մեջ գործածվում են սուբյեկտիվ վերաբերմունք ընդգծող մեկից ավելի բառեր, ինչպես՝

***Պարզ երևում է**, որ գործի քննությունը **ակնհայտորեն** կատարվել է **խիստ** մակերեսային:*

Այս նախադասությունը կարելի է վերաձևակերպել մի քանի տարբերակով: **Հմմտ.**՝

⇒ Գործի քննությունը մակերեսայնորեն է կատարվել:
⇒ Գործի քննությունը կատարվել է ոչ պատշաճ:
⇒ Կատարվել է գործի ոչ համակողմանի քննություն:

2) Հոմանշային շարքի միավորներից ընտրել չեզոք՝ համագործածական և հանրահասկանալի տարբերակը:

Հայտնի է, որ պաշտոնական խոսքը ինչ-որ առումով կաղապարված է. պատրաստի կաղապար-արտահայտություններ, քերականական կրկնվող ձևեր, հնաբան կառույցներ, որոնք նպաստում են միօրինակ, նաև հանդիսավոր ոճ ձևավորելուն: Այսուհանդերձ, չպետք է անտեսվի մի հանգամանք. փաստաթղթերի մի մասը հասցեագրված է ոչ իրավաբանական (նաև ոչ մասնագիտական) կրթություն ունեցող անձանց, և հնարավոր է՝ դժվար ընկալվի: Հետևաբար նախ և առաջ կարևոր է, որ տեքստը լինի ոչ միայն **ճիշտ,** այլև **հասկանալի**: Միտքը պարզ ձևակերպելու համար ճիշտ կլինի ընտրել բառարանում արձանագրված հոմանշային շարքի առաջին՝ համագործածական միավորը: Օրինակ՝

*Դրանք **վերաբերելի** չեն ներկայացված այն գործով, որը....: Պատասխանող կողմի ներկայացրած փաստարկները **վերաբերելի** չեն այն գործին....:*

Անշուշտ, տեղյակ ենք, որ այս բառը տարածված է իրավաբանության լեզվում, գործածվում է օրենքներում. վերջիններից էլ թափանցել է դատական ակտեր, որոշումներ: Սակայն ավելորդ չենք համարում նշել, որ **վերաբերելի** բառը արդի հայերենի բացատրական բառարաններում արձանագրված չէ[13]. **մեռած/հզվդ.** նշումով հանդիպում է Ստ. Մալխասյանցի բացատրական բառարանում (Եր., 1944 թ.)[14], իսկ Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ում (Եր., 2009) տրվում է **տե՛ս** հղումով, ինչը նշանակում է, որ հանձնարարելի և կամ ճիշտ տարբերակ չէ: Ընդ որում, բառարանում որպես հոմանշային տարբերակներ բերված **առնչակից**, **հարաբերական**, **վերաբերող** բառերը այս դեպքում չեն համապատասխանում նախադասության բովանդակությանը: Այստեղ հարմար է **վերաբերել, առնչվել** բայերից որևէ մեկի գործածությունը. այսպես՝

*Դրանք **չեն վերաբերում/առնչվում** ներկայացված այն գործին, որը....:*

---

[13] Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Եր., հ. IV, 1974: **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

[14] Տե՛ս **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հ. Դ, Եր., 1944:

Մասնագիտական խոսքում այսպիսի բառերի կիրառությունը արդարացվում է, եթե գործող բառային տարբերակները իմաստային առումով չեն բավարարում միտքը հստակ արտահայտելուն: Այս դեպքում մեր առաջարկած **վերաբերել/առնչվել** տարբերակները առավել որոշակի և ճշգրիտ են արտահայտում երևույթի բովանդակությունը և հաջողությամբ կարող են փոխարինել **վերաբերելի** բառին: Բացի այդ, իրավական ակտերում թերևս տեղին չէ նաև հնացած բառերի, արտահայտությունների անհարկի գործածությունը:

Կամ՝ հաճախ է չարաշահվում **սույն, վերոգրյալ, վերոնշյալ** բառերի գործածությունը: Ճիշտ է, դրանք՝ որպես հնից եկած բառեր (հնաբանություններ), որոշ հանդիսավորություն ու պաշտոնականություն են հաղորդում խոսքին, բայց դրանց կուտակումը և անհարկի գործածությունը խոսքը դարձնում են միօրինակ ու արհեստականորեն հանդիսավոր. երկուէջանոց փաստաթղթում երբեմն հանդիպում են այդ բառերի 10-ից ավելի կիրառություններ՝ **սույն** պահանջը, **սույն** հայցը, **սույն** անձը, **սույն** պարագան, **վերոգրյալ** հանգամանքը, **վերոնշյալ** օրենքի **սույն** մեկնաբանությունը և այլն: Ավելին, սրանցից պետք է հրաժարվել հատկապես հղումներ կատարելիս: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի՝ «Արգելվում է կատարել՝

1) անորոշ հղումներ, մասնավորապես միևնույն ակտի այլ մասերին հղումներ կատարելիս չեն կարող

առանձին կիրառվել «վերոհիշյալ», «վերոգրյալ», «նախկինում նշված», «նման», «սրանով», «նշված», «սույնում», «սույնով» բառերը»[15]:

Այսպիսի դեպքերում ճիշտ է կրկնել օրենքի անվանումը. բացառված չէ, որ դատական ակտի նկատի առնված մասում հիշատակված լինեն օրենքի մի քանի հոդվածներ, և **վերոնշյալ/սույն/վերոգրյալ** բառերը չեն կարող հստակ ցույց տալ, թե որին է հղում արվում:

Մյուս դեպքերում առավել տեղին է չեզոք և համագործածական **այս** դերանվան գործածությունը կամ հասկացության/անվան կրկնությունը: Օրինակ՝ *Հայցվորը* ***սույն*** *⇒* ***այս*** *պահանջով դիմում է ներկայացրել….,* ***Սույն*** *⇒* ***այս*** *հանգամանքը նկատի չի առնվել աշխատավարձը հաշվարկելիս,* ***նշված*** *ՍՊԸ-ն ⇒ «****XXX****» ՍՊԸ-ն* և այլն:

3) Խուսափել խոսքը ծանրացնող նախդրավոր կառույցների հաճախակի գործածությունից:

Փաստաթղթի որոշ հատվածներում կարելի է դրանք փոխարինել համապատասխան հոմանշային ձևերով կամ ընդհանրապես չկիրառել, եթե այդպիսիք «ասելիք» չունեն, նոր բան չեն հավելում արդեն ասվածին: Ավելին՝ ինչպես նշվեց, օրենքն է պահանջում հրաժարվել անորոշություն առաջացնող բառերի կիրառությունից: Օրինակ՝

---

[15] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docid=120733

Ի հավաստումն վերոգրյալի՝ *դատարանը նշում է, որ....:*
*⇒**Հիմնավորման/պատճառաբանական մասի X հատվածը հաստատելով՝*** *դատարանը նշում է, որ….:*

*Դատարանը, **հղում անելով առ այն,** որ անտեսվել է պայմանագրի ժամկետը, որոշում է....:*

*⇒ Դատարանը, **հղելով/նշելով/նկատի առնելով պայմանագրի ժամկետի անտեսումը**, որոշում է….:*

Վերջին նախադասության մեջ կարելի է նաև նշված բայերը փոխարինել **քանի որ** շաղկապով, որը ամենից հարմար տարբերակն է: **Հմմտ.**՝

***⇒ Քանի որ** պայմանագրի ժամկետն անտեսվել է, դատարանը որոշում է....:*

Մեկ այլ օրինակ՝

*Դատարանը որոշում է կայացրել՝ **ի բավարարումն պահանջատերերի պահանջների**:*
*⇒ Դատարանը **պահանջատերերի պահանջները բավարարելու** որոշում է կայացրել:*
*⇒ Դատարանը որոշում է կայացրել **բավարարելու պահանջատերերի պահանջները:***

Իհարկե, նախդրավոր կառույցները սովորաբար նպաստում են հանդիսավոր ոճ ձևավորելուն, բայց նույն փաստաթղթում հնավանդ լեզվատարրերի և կառույցների հաճախակի գործածությունը հանգեցնում է կուտակումների, թողնում է հակառակ ազդեցությունը. նվազում է պարզ հանդիսավորությունը, ստեղծվում է անհարկի և կեղծ վերամբարձություն,

շեղվում է ընթերցողի ուշադրությունը, տուժում է տեքստի արագ և ճիշտ ընկալումը: Այս առումով հատկանշական է իրավաբան ուսումնասիրողների դիտարկումը: «Իրավաբանները կարծում են, որ երբ բառերի որոշակի համակարգ ապահովում է այս կամ այն գործի կատարումը, ապա նման ձևով կկատարվեն մնացած բոլոր գործարքները, և դրանք գոյություն ունեցող միակ բառերն են, որոնք օժտված են նման (իմա՝ **կախարդական** - հեղ.) ունակությամբ: ....Հին լեզվի հետ կապված այդ վստահությունը սխալ է: ....Իրավունքը դինամիկ է և լինելով հասարակության կարևոր մաս՝ պետք է մատչելի լինի տվյալ հասարակության համար: Այն չպետք է թաղված լինի ավանդական իրավաբանական «կախարդանքի» բորբոսնած և կաղապարված ձևերում»[16]:

4) Հրաժարվել ավելորդ կամ մակաբույծ բառերի կիրառությունից:

Լեզվում իրականում գոյություն չունեն ավելորդ կամ մակաբույծ բառեր. դրանք այդպիսիք դառնում են խոսքաշարում անհաջող կիրառության պատճառով:

ա) Դրանք ոչինչ չեն տալիս խոսքին, անհարկի ձգձգում են ասելիքը: Ընդ որում, այդպիսի բառերի գործածությունը հնարավոր չէ կանխել որևէ կանոնի սահմանմամբ: Ստուգելու լավագույն միջոցը թերևս բառի արժեքը, նախադասության մեջ ունեցած նրա դերն ու կշիռը որոշելն է: Իսկ դրա հիմնական նախա-

---

[16] **Մոլիտերնո Ջ., Մելիքյան Ռ., Մելքոնյան Դ.,** Իրավաբանական գիր և վերլուծություն, Եր., 2010, էջ 15-16:

պայմանը բառի նշանակության իմացությունն է և ի-մաստային նրբերանգներին ըստ ամենայնի տիրա-պետելը: Օրինակ՝

Դատարանը հետամուտ չի եղել այդ իրավունքը ***ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում*** *ապահո-վելու* ***նպատակի իրագործմանը****:*

Անհարկի ձգված՝ ճապաղ խոսք է. դժվար է ասել՝ ինչ կարևորություն կամ կշիռ ունեն ***ոչ միայն տեսակա-նորեն, այլև գործնականում, նպատակի իրագործ-մանը*** արտահայտությունները: Պարզ է, որ դատա-րանի առաջնային գործառույթներից մեկն էլ հենց տեսականորեն սահմանված իրավունքը գործնա-կանում ապահովելն է: Ընդգծված բառերի գործածու-թյունը միանգամայն ավելորդ է: **Հմմտ.**՝

⇒ Դատարանը հետամուտ չի եղել այդ իրավունքը ապահովելուն:

Մեկ այլ տեղում կարդում ենք.

....լինելու փաստի ***առկայությունը չի եղել անվիճելի****:*

Հայտնի իրողություն է, որ լեզվում կրկնակի ժխտու-մով ընդգծվում է դրական նշանակությունը: Հետևա-բար **չի եղել անվիճելի** կառույցը առավել դյուրին ու հստակ կընկալվի, եթե փոխարինվի **վիճելի է եղել** համարժեք տարբերակով. դրական կառույցը ավելի որոշակի է դարձնում ասելիքը: Ավելորդ է թվում նաև **առկայություն** բառը: **Հմմտ.**՝

⇒ ....լինելու ***փաստը վիճելի է եղել****:*

Կամ՝ *....**քաղաքացու մոտ անբարեխղճության բացակայության դեպքում,** նրան որպես գոյության միջոց տրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարները....:*

Տարակուսելի միտք է. պատճառը **քաղաքացու մոտ անբարեխղճության բացակայություն** արտահայտությունն է: Անհարկի ձգձգված խոսք է՝ կազմված ռուսերեն լեզվամտածողությամբ: Անձը կարող է լինել բարեխիղճ կամ անբարեխիղճ: Նաև հանգամանքներով պայմանավորված՝ անձը կարող է բարեխղճություն կամ անբարեխղճություն դրսևորել: Հետևաբար շարադրանքը կարող է լինել հետևյալ կերպ.

⇒ *Եթե քաղաքացին **բարեխիղճ է (եղել)**....: // Եթե քաղաքացին **բարեխիղճ չէ (չի եղել)**....:*

Կամ՝

⇒ *Եթե քաղաքացին **բարեխղճություն է դրսևորել**....: // Եթե քաղաքացին **անբարեխղճություն է դրսևորել**....:*

Ավելորդ բառերի գործածության այլ օրինակներ.

*Հայցը **հետ** է վերադարձվել: ⇒ Հայցը **վերադարձվել է**:*

*Քանիցս **անգամ** ծանուցվել է....: ⇒ **Քանիցս/մի քանի անգամ** ծանուցվել է.....:*

*Ներկա **դրությամբ** գործի վարույթը կասեցվել է: ⇒ **Ներկայիս/ներկայումս** գործի վարույթը կասեցվել է:*

*Ժամկետները կրկին **անգամ** հետաձգվել են: ⇒ Ժամկետները **կրկին** հետաձգվել են:*

*Փաստաթուղթն **ամբողջության մեջ** վերանայման կարիք ունի: ⇒ Փաստաթուղթն **ամբողջությամբ/հիմնովին** պետք է վերանայվի: // **Անհրաժեշտ է փաստաթուղթը հիմնովին վերանայել:***

*Նախագիծն **իր մեջ** վտանգ է պարունակում: ⇒ Նախագիծը **վտանգ է պարունակում:***

*Ստեղծված իրավիճակից **դուրս գալու** ելքը: ⇒ Ստեղծված իրավիճակից **ելքը:***

*Գործն **իր մեջ** ներառում է/պարունակում է մի հանգամանք, որի համաձայն....: ⇒ Գործը **ներառում է/պարունակում է** մի հանգամանք, որի համաձայն....*

*Առկա էր նաև **վճարումը կատարված լինելու մասին** կտրոնը: ⇒ Առկա էր նաև (կատարված) **վճարման** կտրոնը:*

*Վերոնշյալը **գալիս է** ապացուցելու, որ....: ⇒ Վերոնշյալը **ապացուցում է,** որ....:*

*Իր **ապագա** կատարելիք քայլերի մասին չի զեկուցել: ⇒ Իր **կատարելիք** քայլերի մասին չի զեկուցել:*

*ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը դիմումը **դիտում է որպես** հատուկ վարույթի հարուցման հիմք: ⇒ Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ դիմումը հատուկ վարույթ հարուցելու հիմք է:*

բ) Ավելորդաբանությունների մեջ կան այնպիսիք, որոնք ակնհայտ ռուսաբանություններ են, հայերեն լեզվամտածողությանը՝ խորթ: Դրանք, սակայն, խոր

արմատներ են ձգել մեր խոսքում, մասնավորապես պաշտոնական ոճում: Այսուհանդերձ, տարածվածությունը անպայման հիմք չէ դրանք ընդունելու և հայերենին «հարմարեցնելու» համար: Օրինակ՝ իրավական փաստաթղթերում հաճախադեպ է **....հիմքում դրել է այն հանգամանքը, որ....** կառույցը: Սա կարելի է արտահայտել մեկ բառով՝ **հիմնավորմամբ/հիմքով: Հմմտ.՝**

*Դատարանը հայցադիմումի ընդունումը մերժելու **հիմքում դրել է այն հանգամանքը,** որ տվյալ դեպքում չի պահպանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը:*

*⇒ Դատարանը մերժել է հայցադիմումի ընդունումը այն **հիմնավորմամբ/հիմքով**, որ տվյալ դեպքում չի պահպանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը:*

Կամ՝ զգալի տարածում ունեն **հարցի հետ կապված, հանդիսանալ, համարվել, կազմել, կայանալ, մասով** (**մասին** նշանակությամբ), **դա, բանը նրանում է, իրենից ներկայացնել** բառերի ու արտահայտությունների գործածությունները: **Հմմտ.՝**

*Այդ փաստաթուղթը **հանդիսանում է** բավարար ապացույց գործը կարճելու մասով: ⇒ Այս փաստաթուղթը գործը կարճելու մասով բավարար ապացույց **է**:*

*Մյուս պահանջները **հանդիսանում են** ածանցյալ **պահանջներ**: ⇒ Մյուս պահանջները **ածանցյալ են**:*

Տրված տեղեկանքի համաձայն՝ նրա աշխատավարձի ամսական չափը ***կազմում է*** *244.000 դրամ: ⇒ ....նրա աշխատավարձը ամսական 244.000 դրամ է:*

Նախադեպային իրավունքը ***դա*** *իրավաբանական* ***տեսանկյունից*** *բացատրվում է....: ⇒ Նախադեպային իրավունքը իրավաբանության մեջ բացատրվում է....:*

Կողմերի միջև խնդիրը ***կայանում է նրանում****, որ.....: ⇒Կողմերի միջև խնդիրն* ***այն է****, որ....:*

Բողոքը վերանայելու ***հետ կապված*** *դիմումը,* ***հարցի հետ կապված*** *առաջարկը ⇒ Բողոքը վերանայելու* ***վերաբերյալ*** *դիմումը, հարցի* ***մասին/վերաբերյալ/ առնչությամբ*** *առաջարկը.....:*

...որը, ***ըստ էության, իրենից ներկայացնում է*** *քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող պահանջ: ⇒ ....որը քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող պահանջ* ***է****:*

Որոշումն ***իրենից ներկայացնում է*** *մի փաստաթուղթ, որում....: ⇒ Որոշումը մի փաստաթուղթ* ***է****, որում...:*

գ) Պետք է հիշել, որ հայերենում առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի՝ ածականների, և գործողության հատկանիշ ցույց տվող բառերի՝ մակբայների սահմանները որոշ դեպքերում հստակ առանձնացված չեն: Եթե ածականը դրվում է գործողություն ցույց տվող բառի կողքին, ապա բնորոշում է գործողության կերպը, ձևը: Ուստի **կերպով, ձևով, կարգով, բնույթի** և նման բառերի գործածությունները այս օրինակներում ավելորդ են: Ինչպես՝

Բողոք բերող/ներկայացրած անձը պատշաճ ***կարգով/ձևով/կերպով*** *ծանուցվել է: ⇒* ***Բողոքաբերը/հայցվորը պատշաճ*** *ծանուցվել է:*

Բողոք ներկայացրած անձը բողոքը հիմնավոր ***կերպով*** *հիմնավորում է....: ⇒* ***Բողոքաբերը/հայցվորը*** *բողոքը* ***հիմնավորում է****.....:*

Դիմումատուն գրավոր ***կերպով/ձևով*** *տեղեկացվել է: ⇒ Դիմումատուն* ***գրավոր*** *տեղեկացվել է:*

Հայցը արագ ***կերպով*** *քննվել է: ⇒ Հայցը քննվել է* ***արագ(որեն):***

Խստիվ կերպով *արգելվել է մուտքը: ⇒* ***Խստիվ/խիստորեն*** *արգելվել է մուտքը:*

Մեղադրողական ***բնույթի*** *շարադրանք ⇒* ***մեղադրական*** *շարադրանք:*

5) Հրաժարվել բառերի և բառակապակցությունների անհարկի կրկնությունից:

Իհարկե, կրկնությունը պաշտոնական խոսքի ճշգրտությունը ապահովող կարևոր պայմաններից է: Կարող են կրկնվել բառը, բառակապակցությունը, նախադասությունը: Բայց կան դեպքեր, երբ կրկնությունն անտեղի է, չպատճառաբանված. իմաստային կամ արտահայտչական որևէ նրբերանգ չի հավելում խոսքին, ավելին՝ ծանրացնում է այն, ձգձգում, թուլացնում խոսքի ազդեցությունը: Ստորև բերված օրինակում հայցի հակընդդեմ լինելը շեշտելու նպատակով **հակընդդեմ** բառի կրկնությունը խոսքը ակնհայտորեն դարձրել է պարզունակ՝

Հակընդդեմ հայցվորի կողմից ներկայացված ***հակընդդեմ*** *հայցադիմումը վերադարձվել է:*

⇒ ***Հակընդդեմ հայցվորի*** *ներկայացրած հայցադիմումը վերադարձվել է:*

Կրկնություններից խուսափելու համար կան տարբեր միջոցներ:

ա) Կարելի է օգտվել համապատասխան դերանուններից և կամ նույն միտքը **ձևակերպել** այլ կերպ: **Հմմտ.՝**

Պայմանագիրը ուշադիր չկարդալու պատճառով չի տեսել ***նույն այդ պայմանագիրը*** *լուծելու ժամկետը:*
⇒ ....չի տեսել ***այն*** *լուծելու ժամկետը:*

Սեփականատերն իրավունք ունի պահանջելու ճանաչել իր սեփականության իրավունքը, իսկ ***իր սեփականության իրավունքը չճանաչելու դեպքում*** *իրավունք ունի.....:*
⇒ ....իսկ ***այն*** *չճանաչելու դեպքում...., // ....իսկ* ***հակառակ դեպքում****.....:*

Փաստաթուղթը կցված է հայցադիմումին, ***հայցադիմումում*** *նշվող պահանջը.....:*
⇒ Փաստաթուղթը կցված է հայցադիմումին, ***որում/դրանում*** *նշվող պահանջը.....:*

Վերջին օրինակում դերանվան գործածությունը ոչ միայն փրկում է անհարկի կրկնությունից, այլև ստեղծում է լեզվական ավելի բարեհունչ միջավայր. **հայցադիմումում** բառաձևը ոչ միայն կանոնական չէ, այլև խիստ անբարեհունչ է, հետևաբար միանգամայն

արդարացված է դրա փոխարինումը հոմանիշ կառույցով՝ **հայցադիմումի մեջ:**

բ) Կրկնվող բառը կարելի է գործածել **փոխանվանաբար**, ինչպես՝

Նշված հատկանիշները բնութագրում էին...., իսկ ***մյուս հատկանիշները*** *(⇐* ***մյուսները****).....:*

Ի տարբերություն ***նախկին քրեական օրենսգրքի*** *(⇐* ***նախկինի/նախորդի****)՝ ՀՀ գործող քրեական օրենսգիրքը.....:*

Դատական ակտերում երբեմն հանդիպում են **բառագործածության սխալներ**:

ա) Բառի սխալ գործածության հիմնական պատճառներից մեկը բառիմաստը չիմանալն է կամ բառային հնարավոր զուգակցումներին չտիրապետելը: Օրինակ՝ **ավարտել** և **լրանալ** բառերը թեև 4-րդ նշանակությամբ մոտ իմաստներ ունեն, բայց միշտ չէ, որ կարող են միմյանց փոխարինել: **Ավարտել** նշանակում է *ավարտին հասցնել, վերջացնել*: **Լրանալ՝** 1. *լրիվ դառնալ, ամբողջանալ*, 2. *որևէ ժամկետ՝ տարի և այլն իր այս կամ այն շրջանը բոլորել*, 3. *կատարվել*, 4. *վերջանալ, ավարտվել* և այլն[17]: Հետևաբար առաջինի գործածությունը երկրորդի փոխարեն երբեմն սխալ է. տարընթերցման տեղիք է տալիս, ինչպես հետևյալ օրինակում՝ *Ժամկետը* ***ավարտելուց*** *հետո պայմանագիրը կորցնում է ուժը:* Հարց է ծագում՝ ո՞վ պետք է ժամկետն ավարտի. թվում է՝ խոսքը մի նոր

[17] Տե՛ս նշված բառարանները:

սուբյեկտի մասին է, մինչդեռ նախադասության ենթական՝ սուբյեկտը, հենց **պայմանագիր**-ն է: Ուստի ճիշտ է՝ *Ժամկետը **լրանալուց** հետո պայմանագիրը կորցնում է ուժը:*

Բառընտրություն կատարելիս պետք է ճշգրիտ իմանալ բառիմաստները, հնարավորինս խուսափել այնպիսի դեպքերից, երբ բազմիմաստ բառը գործածվում է միաժամանակ իր երկու նշանակությամբ: Օրինակ՝ **հայտնվել** նշանակում է *ի հայտ գալ, երևան գալ*: Այս բայը գրեթե չի գործածվում **տեղեկություն տալ, տեղեկացնել, իրազեկել** բայերի կրավորական նշանակությամբ: Մինչդեռ իրավաբանական փաստաթղթերում երբեմն կիրառվում է հենց այս նշանակությամբ՝ հանգեցնելով տարընկալման: Օրինակ՝

*Հարցը պարզ է դառնում ....կայացած դատական նիստում հենց հայցվորի կողմից Դատարանին **հայտնված** տեղեկություններից, որոնցով ըստ էության հաստատվել են....:*

Մի պահ թվում է, թե տեղեկություններն իրենք են եկել **հայտնվել** դատարանում, մինչդեռ խոսքը հայցվորի **հայտնած** տեղեկության մասին է: Իմաստային այս շփոթից խուսափելու համար ճիշտ կլինի հոմանշային այլ տարբերակ ընտրել կամ օգտագործել ներգործական նախադասություն: Երկու դեպքում էլ նախադասությունը ենթակա է որոշակի փոփոխության: **Հմմտ**.՝

⇒ *Հարցը պարզ է դարձել ....կայացած դատական նիստում հենց հայցվորի՝ Դատարանին* ***հայտնած/տված*** *տեղեկություններից, որոնցով հաստատվել են....:*

● Երբեմն **կայանալ** բառի փոխարեն գործածվում է **տեղի ունենալ** բառը: Սրանք որոշ դեպքերում, իհարկե, կարող են մեկը մյուսի փոխարեն հանդես գալ, ինչպես՝ ***Տեղի ունեցավ*** *դատական նիստ: //* ***Կայացավ*** *դատական նիստ*: Մինչդեռ բառային որոշակի զուգորդումներում դրանք միմյանց չեն կարող փոխարինել: **Սխալ են՝** ***Տեղի է ունեցել*** *դատական սխալ վճիռ,* ***Տեղի է ունեցել*** *դատական որոշման կայացում:* **Ճիշտ են՝** *Դատական սխալ վճիռ* ***է կայացվել, Կայացվել է*** *դատական որոշում:*

● **Անհարկի**-ն հաճախ գործածվում է **անհիմն** բառի փոխարեն: Մինչդեռ երբեմն այդ փոխարինումը տրամաբանորեն չի արդարացվում: Օրինակ՝ *Դատարանը* ***անհարկի*** *սահմանափակել է հայցվորի իրավունքը:* **Հմմտ.՝**

⇒ *Դատարանը* ***անհիմն/առանց հիմնավորման*** *սահմանափակել է հայցվորի իրավունքը:*

Հայցվորը ***անհարկի*** *մեղադրում է ԱՊՊԱ ընկերությանը....:*
⇒ *Հայցվորը* ***անհիմն/առանց հիմնավորման*** *մեղադրում է ԱՊՊԱ ընկերությանը....:*

● Տարբեր են **տեղափոխել** և **հետաձգել** բառերի իմաստները, հետևաբար չեն կարող գործածվել մեկը մյուսի փոխարեն: Առաջինն ունի 8 իմաստ (*տեղը*

փոխել, փոխադրել, բնակավայրը փոխել, ուրիշ պաշտոնի նշանակել, հավասարության անդամներից մեկի տեղը փոխել և այլն), որոնցից ոչ մեկը հոմանիշ չէ **հետաձգել** բառին: Վերջինս ունի *ժամկետը փոխել սահմանվածից՝ նախատեսվածից ուշ, հետ գցել, ուշացնել, երկարաձգել* իմաստները[18]: Հետևաբար սխալ է *Գործի քննությունը/Նիստը* ***տեղափոխվել է*** արտահայտությունը: Ճիշտ է՝ *Գործի քննությունը/Նիստը* ***հետաձգվել է:***

● Միմյանց չեն կարող փոխարինել **հավաքել** և **հավաքագրել** բառերը: **Հավաքել**-ն ունի *խմբել, ժողովել, հրավիրել, կանչել* իմաստները, իսկ **հավաքագրել** նշանակում է *շատերին վարձել մի բանի համար, համալրել, համախմբել*[19]*:* Միանշանակ սխալ է ***հավաքագրված*** *գումարներ/փաստաթղթեր/տվյալներ* կապակցությունը: Ճիշտ է՝ ***հավաքած*** *գումարներ/փաստաթղթեր/տվյալներ:*

● Դյուրին է շփոթել **վերաբերել** և **վերաբերվել** բառերը: Առաջինը նշանակում է **առնչություն ունենալ**, երկրորդը՝ **վերաբերմունք ցույց տալ**: Իսկ վերաբերմունք ցույց տալ, այսինքն՝ վերաբերվել կարող է միայն անձը՝ գործողություն կատարող անձը: Սխալ են՝ *Ինչ* ***վերաբերվում է*** *դիմումի բովանդակությանը, ապա....: Ամուսնու պնդմամբ՝ ինքը միշտ էլ լավ* ***է վերաբերել*** *կնոջը....:* Ճիշտ են՝ *Ինչ* ***վերաբերում է*** *դիմու-*

---

[18] Տե՛ս նշված բառարանները:
[19] Տե՛ս նույն տեղը:

մի բովանդակությանը, ապա....: Ամուսնու պնդմամբ՝ ինքը միշտ էլ լավ ***է վերաբերվել*** *կնոջը....:*

● Պաշտոնական խոսքում (և այլուր) հաճախ սխալ կիրառություններ են «արձանագրում» **արդյունքում, հետևանքով, պատճառով** բառերը. **արդյունքում** բառը հանիրավի զավթում է մյուս երկուսի՝ **հետևանքով** և **պատճառով** բառերի գործածության իրավունքը: Վերջին երկուսն էլ երբեմն անտեղի փոխարինում են առաջինին:

Արդյունք բառի դիմաց բառարաններն արձանագրում են *հետևանք, որևէ գործից բխած արգասիք, շահ, եկամուտ, օգուտ, ձեռքբերում* իմաստները: Այսինքն՝ բառի իմաստային դաշտը ակնհայտորեն դրական բովանդակություն ունի: Հետևաբար միանշանակ **սխալ են՝**

Վթարի ***արդյունքում*** *⇒* ***հետևանքով/պատճառով*** *մահացել է 2 մարդ:*

Գործը ոչ պատշաճ քննելու ***արդյունքում*** *⇒* ***հետևանքով*** *անտեսվել է այդ հանգամանքը:*

Պայմանագիրը ուշադիր չկարդալու ***արդյունքում*** *⇒* ***պատճառով*** *չի տեսել այն լուծելու ժամկետը:*

Պատահում է նաև հակառակը. **պատճառով** բառն է գործածվում **արդյունքում/շնորհիվ** բառի փոխարեն, ինչպես՝

Վերը նշվածի ***պատճառով*** *⇒* ***արդյունքում/շնորհիվ*** *հնարավոր եղավ սեփականատիրոջ հայցը բավարարել իր օգտին:*

Կարծում ենք՝ այս նախադասության համար առավել հարմար տարբերակ է հետևյալը.

*Քննությունը/Գործը պատշաճ վարելու **արդյունքում** հայցը բավարարվեց՝ հօգուտ/ի շահ սեփականատիրոջ:*

Որոշ դեպքերում հնարավոր է խոսքն անսխալ կառուցել առանց **արդյունքում** բառի «միջամտության», ինչպես՝ ***Քննությամբ** պարզվեց, որ....*:

● Հաճախակի են **կապակցությամբ** բառի սխալ կիրառությունները **համար** բառի փոխարեն: **Կապակցությամբ** նշանակում է **առիթով** և գործածվելիս էլ կարող է փոխարինել միայն այդ բառին: Սխալ է, օրինակ՝ *Գրավոր նկատողություն ստացավ մասնագիտական ոչ պատշաճ գործունեության* **կապակցությամբ**: Նկատողություն ստանում են ոչ թե ինչ-որ բանի առիթով/առթիվ կամ կապակցությամբ, այլ **ինչ-որ բանի համար** (ինչո՞ւ/ինչի՞ համար):

Այլ օրինակներ.

*Գումարը վերադարձնելու **կապակցությամբ** ⇒ **համար** ապահովագրական ընկերությունը դիմում չի ստացել:*

*Ընտանիքը գտնվել է անապահով վիճակում, և այդ **կապակցությամբ** ⇒ **դրա համար** ՍՊԸ տնօրենն առաջարկել է դրամական որոշակի օգնություն:*

Բացի այդ, կան նաև լեզվամտածողությամբ թելադրվող բառային զուգակցումներ, որոնց խախտումները արդարացված չեն: Օրինակ՝ հայերենում **կասկած ու-**

նենալ արտահայտության հետ զուգակցվում են *որևէ բանի* **մասին/վերաբերյալ** կապակցությունները: Հետևաբար տեղին չէ դրանց փոխարեն գործածել **կապակցությամբ** բառը: Օրինակ՝

Եթե դատարանը կասկած ունի պարտավորության չափի ***կապակցությամբ****, ապա պարտավոր է 15-օրյա ժամկետում նիստ նշանակել այդ հարցը պարզելու* ***կապակցությամբ****:*

⇒ Եթե դատարանը կասկած ունի պարտավորության չափի ***վերաբերյալ****, ապա այդ հարցը պարզելու* ***համար/նպատակով*** *պարտավոր է 15-օրյա ժամկետում նիստ նշանակել:*

⇒ Եթե դատարանը կասկած ունի պարտավորության չափի ***վերաբերյալ****, ապա պարտավոր է 15-օրյա ժամկետում նիստ նշանակել այդ հարցը պարզելու* ***համար/նպատակով****:*

● Հաճախադեպ են **նկատմամբ** և **համեմատությամբ/համեմատ** բառերի սխալ գործածությունները: Դրանք ունեն տարբեր իմաստներ և կիրառություն. **նկատմամբ**-ը ունի *ինչ-որ մեկի/բանի հանդեպ, վերաբերյալ, վերաբերմամբ* իմաստները, **համեմատությամբ**-ը՝ *բաղդատությամբ, զուգահեռությամբ* իմաստները: Օրինակ՝

Նախորդ տարվա ***նկատմամբ*** *⇒* ***համեմատությամբ/համեմատ*** *բողոքարկումների թիվը ավելացել է:*

Եթե նախկին պայմանագրի ***նկատմամբ*** *⇒* ***համեմատությամբ/համեմատ*** *որոշ կետեր փոխվել են....:*

● Պաշտոնական խոսքում **դիմաց** բառը շատ է գործածվում *փոխարեն* կամ *համեմատությամբ* բառի նշանակությամբ: Դա վերածվել է, այսպես ասած, ամրապնդված սխալի: Օրինակ՝

Պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթերի ***դիմաց*** ⇒ ***փոխարեն*** *ներկայացվել է միայն պետական տուրքը վճարելու մասին հայցվորի գրավոր դիմումը, որը բավարար պայման չէ....:*

● **Ուղղությամբ, գծով** բառերը հաճախ սխալ են գործածվում՝ դրվելով *նպատակով, մասին, վերաբերյալ, համար* բառերի փոխարեն, ինչպես՝

Արտոնություն կիրառելու ***ուղղությամբ*** ⇒ ***համար/ վերաբերյալ*** *միջնորդություն չի ներկայացրել:*

Գործը վարույթ ընդունելու ***ուղղությամբ*** ⇒ ***նպատակով*** *ներկայացված հիմքերը բավարար չեն:*

Վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի ***գծով*** ⇒ ***վերաբերյալ*** *արտոնություններ կարող են սահմանել միայն դատարանները:*

6) Խոսքը սխալ է կառուցվում, եթե անտեսվում են բառի կապակցական հնարավորությունները:

Բառերն ունեն կապակցական որոշ հնարավորություններ, որոնք հատկապես պաշտոնական խոսքում սահմանափակ են: Եթե մեկ այլ ոլորտում կարող է հնարավոր և անսխալ լինել հոմանշային այս կամ այն տարբերակի գործածությունը, ապա պաշտոնական խոսքում կան ընդունված կաղապարներ, լեզվական կուռ կառույցներ, որոնցում բառի ընդուն-

ված գործածության խախտումը խոսքը դարձնում է անճիշտ կամ ոչ ճշգրիտ: Օրինակ՝ **արձանագրություն ստեղծել** կապակցության մեջ սխալ է **ստեղծել**-ը. ավանդված է **արձանագրություն կազմել** կաղապարը: Կամ՝ **վարույթ կատարել** (*Գործի վարույթը կատարել է՝ հաշվի չառնելով Օրենքի....*). ընդունված և ճիշտ տարբերակ է **վարույթ իրականացնել**-ը՝ *գործի վարույթն իրականացնելիս, վարույթն իրականացվել է* և այլն:

Տարբեր են **հնարավորություն *ընձեռել*** և **հնարավորություն *լինել*** (նաև՝ **հնարավոր *լինել***) բառային զուգորդումների իմաստները: ***Ընձեռել***-ն ունի *մեկի ձեռքը մի բան տալ, տրամադրել, մեկի տրամադրության տակ դնել, տալ, հայթայթել* իմաստները[20]: Հետևաբար **լինել**-ը չի կարող փոխարինել նշված բային: Այսպես. դատական ակտում խոսքն այն մասին է, որ մեղադրվող կողմը հերքում է, որ խնդրո առարկա մեքենան վերանորոգված է, իսկ մեղադրողը պնդում է հակառակը: Վերջինս նշում է, որ մեքենան տեսել է վերանորոգված, ավելին՝ մեղադրվողը դրանով ուղևորներ է փոխադրել: Սակայն խիտ երթևեկությունը բողոքաբերին խանգարել է նշվածը լուսանկարել: Ստորև ներկայացնում ենք դատական ակտում ձևակերպված նախադասությունը և մեր տարբերակը: **Հմմտ.**՝

Պատասխանողները բազմիցս տեսել են հիշյալ տաքսի մեքենան՝ վերանորոգված և սարքին, Երևանում ուղևորներ փոխադրելիս, սակայն փողոցների երթևե-

[20] Տե՛ս նշված բառարանները:

կությունն այնքան խիտ էր, որ ընթացքի ժամանակ ***հնարավորություն չի ընձեռվել*** *նկարել այն:*

⇒ Պատասխանողները բազմիցս տեսել են հիշյալ տաքսի մեքենան՝ վերանորոգված և սարքին [վիճակում], Երևանում ուղևորներ փոխադրելիս, սակայն փողոցներում երթևեկությունն այնքան խիտ էր, որ ***հնարավորություն չի եղել/հնարավոր չի եղել*** *այն լուսանկարելու:*

Ճիշտը՝ **հնարավոր(ություն) չի եղել**. հակառակ դեպքում՝ հարց է ծագում՝ ով և ինչպես պետք է հնարավորություն տար:

●Երբեմն **այն հիմքով** արտահայտության կամ **քանի որ** շաղկապի փոխարեն գործածում են **նկատի առնելով, հաշվի առնելով** հարադրությունները: Ընդ որում, դրանցով ձևավորված կառույցները (դերբայական դարձվածները) երբեմն քերականորեն չեն կապվում նախադասությանը: Դրանից բացի՝ խոսքի հստակության, իմաստային որոշակի շեշտադրումներ կատարելու և մի շարք այլ առումներով նախընտրելի է **այն հիմքով/քանի որ** բառերի գործածությունը: **Հմմտ.**՝

Սույն *պահանջով գործը ենթակա է հարուցման՝* ***հաշվի առնելով****, որ հատուկ վարույթի գործերում շահագրգռված անձանց միջև բացակայում է դատարանի քննությանը ենթակա իրավունքի մասին վեճը:*

⇒ ***Այս*** *պահանջով գործը ենթակա է հարուցման* ***այն հիմքով****, որ հատուկ վարույթի գործերում շահագրգռ-*

ված անձանց միջև բացակայում է դատարանի քննությանը ենթակա իրավունքի մասին վեճը:

Սույն *դեպքում ներկայացված դիմումի համար օրենքով սահմանված չէ պետական տուրքի գումար՝* ***նկատի առնելով,*** *որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը հանվել է:*

⇒ Այս դեպքում ներկայացված դիմումի համար օրենքով սահմանված չէ պետական տուրքի գումար, ***քանի որ*** *«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը հանվել է:*

● **Կարծել/համոզմունք ունենալ/համոզված լինել/արձանագրել/եզրահանգել/հանգել** արտահայտությունների փոխարեն խիստ տարածված է **գտնել** բառի գործածությունը, ինչպես՝ *դատարանը/տուժողը/հայցվորը....* **գտնում է....:** Անցանկալի զուգորդում է, ռուսերենից մեխանիկական թարգմանության հետևանք: Ճիշտ են՝ *Դատարանը* ***համոզված է/համոզմունք ունի/արձանագրում է/եզրահանգում է****....: Հայցվորը....* ***այն կարծիքին է/կարծում է****....:*

Ցանկալի չէ նաև **ելնելով, կախված** բառաձևերը գործածել **պայմանավորված**-ի փոխարեն, ինչպես՝ ***Ելնելով/Կախված*** *գործի քննության նշված հանգամանքից....:* ***⇒ Պայմանավորված*** *գործի քննության նշված հանգամանքով...:*

Չնայած առաջինների զգալի տարածվածությանը՝ նախընտրելի և հանձնարարելի են երկրորդները: Առաջինները օտարաբան կառույցներ են: Հայ մարդու

մտածողությամբ՝ առավել տրամաբանական է գործողությունը պայմանավորել բուն հանգամանք(ներ)ով և ոչ թե դա իբրև ելակետ ունենալ գործողություն(ներ) կատարելու համար:

● **Գնալ** բառը հաճախ անհարկի գործածվում է **կատարել, անել, դիմել** բառերի փոխարեն՝

*Վարորդը **գնացել է** վերը նշվածին՝ չնկատելով....: ⇒ Վարորդն **արել է** վերը նշվածը/**դիմել է** վերը նշվածին՝չնկատելով....:*

*Դատարանը **գնացել է** այդ քայլին....: ⇒ Դատարանը **կատարել է** դա/այդ քայլը....: // Դատարանը **դիմել է** այդ քայլին....:*

Առանձին կառույցներում այդ բառի գործածությունն առհասարակ ավելորդ է, ինչպես՝

*Դատարանը **գնացել է** այդ **որոշման ընդունմանը:** ⇒ Դատարանը ընդունել է այդ որոշումը:*

● Սխալ է **նոր** ածականը գործածել (**որից**) **հետո, ապա** ժամանակ ցույց տվող բառերի փոխարեն: Այն **հետո** նշանակությամբ կիրառվում է խոսակցական լեզվում, ինչպես՝ *Սպասի՛ր՝ ավարտեմ, **նո՛ր** ասա: Ավարտեց, **նոր** գնաց.* Խոսքի կանոնավոր դրսևորումներում, մանավանդ պաշտոնական ոճում **նոր** բառի այսպիսի կիրառությունը **արդարացված չէ**:

Իսկ եթե **նոր**-ին հաջորդում է որևէ գոյական, ապա տարընթերցումն անխուսափելի է. **նոր** ածականի հատկանշային իմաստը վերագրվում է իրենից հետո եկող գոյականին: Օրինակ՝ *Դատարանը նախ՝ պար-*

տավոր էր հայցադիմումն ընդունել վարույթ, իրականացնել գործի քննություն, միայն **նոր վեճն** *ըստ էության լուծող դատական ակտով իրավական գնահատական տալ:*

Նոր վեճ զուգորդումը փոխում է ամբողջ նախադասության նշանակությունը, գործողությունների տրամաբանական ընթացքը:

Ճիշտ է՝ *Դատարանը նախ պարտավոր էր...., **ապա/որից հետո/այնուհետև**՝.... իրավական գնահատական տալ:*

Ամփոփենք: Իրավական առավել կայացած համակարգեր ունեցող երկրներում արդարադատություն իրականացնող գերագույն ատյանները կարևոր գործոն են համարում օրենքի **հստակ և ճշգրիտ լեզուն**: ԱՄՆ Գերագույն դատարանը սահմանում է. «Օրենքի մեկնաբանումը մենք սկսում ենք ըստ օրենսդրական կառուցակարգի այն հայտնի կանոնի, որ օրենքի մեկնաբանության ելակետը հենց օրենքի լեզուն է: Եթե այդ լեզուն բավականաչափ հստակ է, և օրենսդրի նպատակը պարզ երևում է օրենքից, ապա օրենքի տառին համապատասխանող այդ մեկնաբանությունը համարվում է վերջնական: ....Դատարանը առաջին հերթին պետք է ենթադրի, որ օրենսդիր մարմինը սահմանել է օրենքով այն, ինչ ինքն իրականում նկատի ունի....»[21]: Մեկ այլ տեղ կարդում ենք. «Երբ

[21] Consumer Product Safety Commission et al. v. GTE Sylvania, Inc. et al.,447 U.S. 102 (1980), Connecticut Nat´l Bank v. Germain, 112 S. Ct. 1146, 1149 (1992)

օրենքի լեզուն պարզ է, երկիմաստ չէ, ապա մեկնաբանության այլ կառուցակարգերի անհրաժեշտություն չկա. այն մեկնաբանվում է բառացիորեն: Օրենքը միանշանակ չէ միայն այն դեպքում, երբ այն կարող է միաժամանակ ողջամտորեն տարբեր կերպ մեկնաբանվել, այսինքն՝ ձևակերպված է ոչ հստակ»[22]:

Անշուշտ, ՀՀ դատական ակտերը, դրանց կառուցվածքը տասնամյակների ընթացքում անընդհատ հղկվել են: Դրանց լեզուն նույնպես որոշակի մշակման ուղի է անցել: Այսուհանդերձ, դատական ակտերի լեզվի բարենորոգումը թերևս ենթադրում է տևական ընթացք, և քննարկված բառային իրողությունները դեռևս մնում են փաստաթղթերին բնորոշ թերություններ: Հասկանալի է, որ փաստաթղթի լեզուն հնարավորինս անթերի պետք է լինի նախ ի շահ իրավական մեկնաբանության ու համակարգի անխոցելիության: Ուստի իրավական ակտեր կազմելիս **ցանկալի է՝ ա)** հրաժարվել բառերի անսպասելի և յուրօրինակ զուգորդումներից, **բ)** հրաժարվել փաստաթղթից փաստաթուղթ ավանդաբար փոխանցվող օտարաբան կառույցներից, **գ)** պահպանել շարադրանքի հանդիսավոր ոճը, բայց միևնույն ժամանակ կառուցել պարզ, մատչելի խոսք, **դ)** ճշտել գործածվող բառի բոլոր հնարավոր իմաստներն ու նրբիմաստները, **ե)** հաճախ օգտվել հայերենի, հատկապես ժա-

---

(https://en.wikipedia.org/wiki/Statutory_interpretation)

[22] **Farrell v. Farrell,** 365 Ark. 465, 231 S.W.3d 619. (2006) (https://en.wikipedia.org/wiki/Statutory_interpretation)

մանակակից հայոց լեզվի բառարաններից, ուղեցույցներից:

2.2. Բառակազմություն, բառակազմական տարբերակների ընտրություն

Իրավական փաստաթղթերում հաճախակի գործածություն ունեն բարդ բառերը[23]: Կիրառվում են հիմնականում **համադրական** (բաղադրիչները գրվում են միասին) և **բայական հարադիր** (բաղադրիչները գրվում են առանձին) բարդություններ: Առաջիններն ունեն առավելաբար անվանողական նշանակություն (դատափորձաքննություն, դատաշինարարատեխնիկական, սահմանադրականություն, իրավահարաբերություն), երկրորդները ցույց են տալիս շարժում, եղելություն, ընթացք, փոփոխություն (գործ հարուցել, ակտ կազմել, անվավեր ճանաչել): Սրանով պայմանավորված՝ գործնական գրություններում հաճախադեպ են 6-8-վանկանի, այսպես ասած, երկարաշունչ բառերը:

Երբեմն բարդ բառերի նշված տեսակները հանդես են գալիս միասնաբար և մի տեսակ ծանրացնում են խոսքը: Անշուշտ, կան դեպքեր, երբ դրանց գործածությունը անխուսափելի է. դրանք միակ՝ անփոխարի-

---

[23] Բարդությունների, դրանց կառուցվածքային տեսակների մասին տե՛ս **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, էջ 231-253: **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 219-310 և այլն:

նելի տարբերակներ են՝ տերմիններ, որոնք ճշգրտորեն փոխանցում են անհրաժեշտ նշանակությունը, ինչպես՝ ***դատաշինարարատեխնիկական*** *փորձաքննություն նշանակել,* ***իրավահարաբերությունների*** *կարգավորումը* և այլն: Սա, իհարկե, **պաշտոնական ոճի առանձնահատկությունն է**: Սակայն որոշ դեպքերում, ինչպես նշվեց, դրանց ոչ այնքան տեղին գործածությունը կամ կուտակումը ոչ մասնագիտական լսարանի համար խոսքը դարձնում է դժվարընկալելի ու խրթին: **Բառակազմական տարբերակների տեղին ընտրությունը** հնարավորություն է տալիս կազմելու առավել մատչելի խոսք:

Պարզ, մատչելի և **սեղմ** շարադրանք ունենալու համար կարելի է օգտվել բառի կազմության և գործածության մի քանի միջոցներից:

1. Կան դեպքեր, երբ հնարավոր է **համադրական կազմությունը փոխարինել նույնիմաստ հարադրական կազմությամբ,** գործածել բարդության վերլուծական տարբերակը, ինչպես՝

Դրա ***անգործադրելիությունն*** *ու* ***անհետաձգելիությունը*** *սահմանված են օրենքով:*

Անգործադրելիությունը կարելի է փոխարինել **անգործադրելի լինել** կապակցությամբ, իսկ **անհետաձգելիությունը՝ անհետաձգելի լինել**-ով: Նաև՝ խոսքում որոշ նրբիմաստներ շեշտադրելու նպատակով կարելի է գործածել **գործադրելի չլինել** և **հետաձգելի չլինել** կապակցությունները:

⇒*Դրա* ***անգործադրելի*** *և* ***անհետաձգելի լինելը*** *սահմանված է օրենքով:*

⇒*Դրա* ***գործադրելի*** *և* ***հետաձգելի չլինելը*** *սահմանված է օրենքով:*

Կամ՝ *Փաստաթղթի պատճենի* ***անհամապատասխանելիությունը*** *բնօրինակին ակնհայտ է:*

Անհամապատասխանելիություն-ը ինքնին շինծու, սխալ կազմություն է. կարելի է փոխարինել նույնահիմք բայով, ճիշտ կլինի փոխել նաև նախադասության կառուցվածքը: **Հմմտ.**՝

⇒*Ակնհայտ է, որ փաստաթղթի պատճենը* ***չի համապատասխանում*** *բնօրինակին:*

2. Կան հաճախակի գործածվող բառեր, որոնք, սակայն, կա՛մ սխալ կազմություններ են, կա՛մ երկարաձգում են խոսքը: Երկու դեպքում էլ անհրաժեշտ է դրանք փոխարինել նույնիմաստ բառակապակցություններով կամ հոմանիշ տարբերակներով: Օրինակ՝

տոկոսադրույքաչափ ⇒ ***տոկոսադրույքի չափ***
իրավահասարակարգային ⇒ ***իրավական հասարակարգին բնորոշ***
հիմնավորվածություն ⇒ ***հիմնավոր լինելը***
անհետևողականություն ⇒ ***հետևողական չլինելը// անհետևողական լինելը***
իրավակարգավորում ⇒ ***իրավական կարգավորում***
աննպատակահարմարություն ⇒ ***ոչ նպատակահար-***

մար լինելը
անիրազեկվածություն ⇒ ***իրազեկված/տեղեկացված չլինելը***
ամբողջականացնել ⇒ ***ամբողջական դարձնել***
աննպաստավոր ⇒ ***աննպաստ/ոչ նպաստավոր***

Առանձնակի միտում է նկատվում հատկապես **չ** ժխտական նախածանցի բառակազմական անտեղի աշխուժացման.

չկարգավորվածություն ⇒ ***կարգավորված չլինելը***
չպահպանում ⇒ ***չպահպանելը***
չկիրառություն ⇒ ***չկիրառելը*** *(պայմանագրի այդ կետի* ***չկիրառությունն*** *ու* ***չպահպանումը*** *⇒ պայմանագրի այդ կետը* ***չկիրառելն*** *ու* ***չպահպանելը*** *)*
չտեղեկացվածություն ⇒ ***տեղեկացված/իրազեկված չլինելը***

Պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր բառերից է հնարավոր այս ածանցով համապատասխան հականշային զույգ կազմել: Իհարկե, խոսակցական լեզվում կամ լրագրային որոշ ժանրերում այսպիսի կազմություններ հաճախ են գործածվում և հավանաբար հենց այդտեղից էլ ներթափանցում են պաշտոնական խոսք: Մի կողմից՝ չենք կարող անտեսել, որ ոչ կանոնական կազմությունները (**չկատարում, չկիրառություն** և այլն) ուշագրավ են, որոշակիորեն առանձնանում են խոսքաշարում, թերևս օգնում են ընդգծելու տվյալ իրողության «չգոյությունը», կատարված չլինե-

լը, բայց մյուս կողմից՝ չենք կարող անտեսել օրենքի պահանջը՝ պաշտոնական լեզուն գրական հայերենն է. նորմատիվ իրավական ակտերը շարադրվում են պետական լեզվով՝ գրական հայերենով[24]: Հետևաբար եթե բառապաշարում կա բառակազմական այնպիսի տարբերակ, որը ճշգրիտ փոխանցում է ոչ կանոնավոր կազմությունների նշանակությունը, ապա դա պետք է կիրառվի:

Հավելենք նաև, որ հարադրավոր (առանձին բաղադրիչներով) կազմությունները առաջինների համեմատությամբ **ունեն ոճական նրբիմաստային տարբերություն**: Դրանք խոսքը դարձնում են *դիպուկ, շեշտված, պարզ և առավել պաշտոնական:* **Հմմտ.**՝

դրանց ***հիմնավորվածության*** *աստիճանից*
⇒ *դրանց* ***հիմնավոր լինելու*** *աստիճանից*

իրավունքի հանդեպ ***անհետևողականությունը***
⇒ *իրավունքի հանդեպ* ***հետևողական չլինելը***

Չնայած իրենց գործառույթների ***փոքրաձավալությանը....:***
⇒ *Չնայած իրենց* ***փոքրաձավալ*** *գործառույթներին....:*
//Չնայած իրենց գործառույթների ***փոքր/նվազ ծավալին....:***

Պարտապանը պարտավոր է պատճառաբանված ***հիմնավորվածությամբ հիմնավորել****....:*

---

[24] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docid=90418
https://www.arlis.am/documentview.aspx?docid=120733

⇒ *Պարտապանը պարտավոր է պատճառաբանված* ***հիմնավորում ներկայացնել****…..:*

պարտավորությունների ***չկատարվածությունը****….*
⇒ *պարտավորությունները(/ի)* ***չկատարելը/կատարված չլինելը****….*

3. Առանձին դեպքերում նախընտրելի են **համադրական** (միացած բաղադրիչներով) **կազմությունները.** խոսքը դարձնում են սեղմ և արագ ընկալելի, ինչպես՝

դիմում ներկայացնող անձ ⇒ ***դիմումատու***
բողոք բերող/ներկայացրած անձ ⇒ ***բողոքաբեր/հայցվոր***
հայց ներկայացնող ⇒ ***հայցվոր***
պարտք տվող ⇒ ***պարտատեր***

Նշվածների (հարադրավորների) մեջ կան այնպիսիք, որոնք կայուն կապակցություններ են, ունեն տերմինային արժեք: Ըստ գործող ձևաչափի՝ դատական ակտ, ծանուցագիր կազմելիս սրանք գործածվում են փաստաթղթի սկզբնամասում, ինչպես, օրինակ՝ *բողոք բերող անձ, հայց ներկայացնող* և այլն: Սակայն հետագա շարադրանքում խոսքը չձգձգելու, բառային անհարկի կուտակումից խուսափելու համար նախընտրելի է դրանք փոխարինել հոմանշային մեկ բառով: Ավելին. մեր տպավորությամբ՝ կարելի է նշվածները կիրառել նաև փաստաթղթի սկզբնամասում, քանի որ համադրական կազմությունները նույնքան հասկանալի են և ճշգրիտ են արտահայտում տերմինային հասկացության իմաստը: **Հմմտ.**՝

*....որոնց վերաբերյալ **բողոք բերած անձը** հայտնել է իր դիրքորոշումն առաջին ատյանի դատարանում....:*
*⇒....որոնց վերաբերյալ **բողոքաբերը/հայցվորը** հայտնել է իր դիրքորոշումն առաջին ատյանի դատարանում....:*

4. Պետք է խուսափել հանրահասկանալի հայերեն **բառը հոմանիշով բացատրելուց.** շփոթեցնում է, անհարկի լարում ուշադրությունը, խանգարում միտքն արագ ընկալելուն: Օրինակ՝

***Հայցվորի** (բողոք բերող անձի) չներկայանալը պայման չէ....:*

Կա մի հանգամանք ևս: Երբեմն փակագծերում նշվում են բառեր, որոնք լեզվական հոմանիշներ են և կարող են միմյանց փոխարինել, սակայն իրավաբանության մեջ առանձին տերմիններ են և որոշակի դեպքերում մեկը մյուսի փոխարեն չեն կարող գործածվել, ինչպես, օրինակ՝ ***պատճեն*** և ***կրկնօրինակ*** բառերը՝

*Պայմանագրի **պատճենը** (**կրկնօրինակը**) կցել գործին:*

Իրավաբանության մեջ **կրկնօրինակը** բնօրինակին հավասար իրավական ուժ ունեցող փաստաթուղթ է: Մինչդեռ **պատճենը** բնօրինակի լուսապատճենված տարբերակն է: Թվում է՝ անհարկի շփոթ կա. նույնանիշները գործածվում են որպես իրար փոխարինող տերմիններ: Իհարկե, իրավական տեսքտի տառացի՝ լեզվաբանական մեկնաբանությամբ՝ **կրկին օրինակ**,

շփոթ չկա, և հենց այս մտայնությամբ էլ **կրկնօրինակ**-ը ընտրվել է որպես տերմին: Այն կազմված է բառապատճենումով և այս առումով համապատասխանում է նաև միջազգային տերմինին (անգլ.՝ duplicate): Նեղ մասնագիտական ոլորտում սովորական գործածություն է: Այսուհանդերձ, հանրության լայն շրջանում դրանց տարբեր նշանակությունները ընկալելի չեն: Հետևաբար նշված բառերի կողք կողքի գործածությունը ցանկալի չէ. ճիշտ կլինի **կրկնօրինակ** բառը տալ առանց փակագծերի **կամ** շաղկապի հավելումով, ինչպես՝

Պայմանագրի ***պատճենը կամ կրկնօրինակը*** *կցել գործին:*

Իսկ եթե, այնուամենայնիվ, **կրկնօրինակ**-ը կիրառվել է **պատճեն** բառը հստակեցնելու, շեշտադրելու միտումով, ապա, միևնույնն է, անհարկի է. շփոթեցնող է ու անհստակ:

5. Եթե հնարավորություն կա տարբերակների մեջ ընտրություն կատարելու, ապա նախապատվությունը պետք է տալ **անհնչյունափոխ հիմքով** կազմություններին:

Ունենք, օրինակ, **վարութային – վարույթային, վերաքննչի – վերաքննիչի, եզրութային – եզրույթային, տեսչի – տեսուչի, սովորութային – սովորույթային, հիսնապատիկ – հիսունապատիկ, քառասնական – քառասունական, վարչի – վարիչի, կառավարչի – կա-**

ռավարիչի, հնգական – հինգական տարբերակները: Խոսքն արագ ու սահուն մատուցելու, լսարանին առավել ընկալելի դարձնելու առումներով **անհնչյունափոխ ձևը ակնհայտ առավելություն ունի իր զուգահեռի համեմատությամբ:** *Նախ* ՝ անհնչյունափոխ ձևերը ամբողջությամբ պահպանում են բառապատկերը, *ապա* ՝ բարեհունչ են, խոսքաշարում արտասանական արգելքներ չեն ստեղծում: Բացի այդ, հնչյունափոխված և անհնչյունափոխ առանձին կազմություններ ունեն նաև իմաստային տարբերություններ, ինչպես՝ **վարիչություն – վարչություն**, **հայտնիություն - հայտնություն, կատարելիություն – կատարելություն, տնօրինություն – տնօրենություն** և այլն: Օրինակ՝ հաճախ գործածվող **պատկանելիություն – պատկանելություն** տարբերակներից առաջինի հիմքը ***պատկանելի***–ն է, երկրորդինը՝ ***պատկանել***-ը: Առաջինը, այսպես ասած, *ապագայում պատկանելն է*: Օրինակ՝ *մեքենայի* ***պատկանելիությունը*** նշանակում է՝ մեքենան դեռ պետք է պատկանելի լինի ինչ-որ մեկին: Իսկ մեքենայի **պատկանելությունը,** նշանակում է, թե ում *է պատկանում այն ներկայումս*:

6. Գրավոր խոսքը սեղմ ու պարզ դարձնելու առումով կարևոր դեր են կատարում **հապավումն** ու **համառոտագրությունը**: Իրավաբանական փաստաթղթերում **հապավումները** զգալիորեն տարածված են՝ ՀՀ, ՍԴ, ԲԴԽ, ՍՊԸ, ՊՈԱԿ, ՓԲԸ և այլն: Եվ քանի որ իրավական ակտերի վերնագրերում համառոտագրություններ ու հապավումներ կատարելը արգելվում է օրենքով, հետևաբար, ինչպես նշել ենք, բոլոր փաստա-

թղթերում գործում է մեկ սկզբունք: Այն է՝ յուրաքանչյուր հապավում առաջին գործածության դեպքում տրվում է բացված՝ ամբողջական անվանումով, ինչպես՝ *փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետև՝ ՓԲԸ) կամ (այսուհետև նաև՝ Ընկերություն), պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետև՝ ՊՈԱԿ):* Հետագա շարադրանքում գործածվում է հապավական բարդությունը: Բայց փաստաթղթերից նկատելի է, որ սկզբունքը միանշանակ չի գործում: Քիչ չեն դեպքերը, երբ 2-4-էջանոց շարադրանքում, օրինակ, **Հայաստանի Հանրապետություն**, **Սահմանադրական դատարան, Եվրոպական դատարան** և ուրիշ բաղադրյալ կազմություններ կրկնվում են 4-5 տողը մեկ: Բերենք մեկ օրինակ:

Հայաստանի Հանրապետության *քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝ վճռում չեն նշվել Դատարանի պարզած գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա պետք է հիմնված լինեն դատարանի հետևությունները կամ ապացույցները մերժելու փաստարկները: Չեն նշվել նաև օրենքները,* ***Հայաստանի Հանրապետության*** *միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտեր, որոնցով դատարանը պետք է ղեկավարվեր վճիռ կայացնելիս: Վճռի պատճառաբանական մասում չեն տրվել ապացույցները, որոնց վրա հիմնված են Դատարանի հետևությունները: Մինչդեռ* ***Հայաստանի Հանրապետության*** *քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանը պարտավոր էր հաստատել հայցադիմումի հիմ-*

քում ընկած փաստերը և հետևաբար հանգել որոշակի հետևության միայն թույլատրելի ապացույցների հիման վրա:

Անշուշտ, կրկնությունը պաշտոնական խոսքի ճշգրտությունը ապահովող կարևորագույն գործոն է, նաև պարտադիր հատկանիշ: Սակայն ոչ բոլոր դեպքերում: Այստեղ կրկնությունը ծանրացնում է շարադրանքը, անհարկի ձգձգում խոսքը: Ավելին՝ այս դեպքում ավելորդ է թվում նույնիսկ **ՀՀ**-ն անընդհատ «վկայակոչելը», քանի որ ցանկացած դատական ակտի հենց սկզբից արդեն իսկ հասկանալի է, որ գործը, այսպես ասած, Հայաստանի Հանրապետության «տիրույթում» է և քննարկվում է հենց ՀՀ օրենսդրությամբ:

Ինչ վերաբերում է **համառոտագրություններին**, ապա այստեղ պետք է որդեգրել մի կարևոր սկզբունք. պահպանել **համառոտագրելու միօրինակությունը:** Օրինակ՝ երբեմն միևնույն փաստաթղթի մեջ *փողոց* գոյականը համառոտագրվում է մերթ **փող**., մերթ **փ.** ձևով, կամ՝ *բնակարան*-ը՝ **բն./բ.**, *հասցե*-ն՝ **հաս./հ.**, *փակուղի*-ն՝ **փակ./փկղ.:** Անմիօրինակությունը կարող է տարընթերցման և տարընկալման պատճառ դառնալ:

Ծանոթություն: Համառոտագրությունը բառային միավորի արժեք ունի, ուստի պետք է **բացատով** անջատվի հաջորդող կամ նախորդող միավորից: Ճիշտ են՝ ***2018 թ., տ. 28, Ա. Պողոսյան*** :

7. Չպետք է գործածել սխալ կազմություն ունեցող բառեր և բառաձևեր:

Սխալակազմության «զոհ» կարող է դառնալ բառը կամ բառաձևը: Դրանց առկայության դեպքում էապես թուլանում է տեքստի ազդեցության ուժը, ձևավորվում է ցածրաճաշակ, ոչ գրագետ խոսք. կասկածի տակ է ընկնում նաև իրավաբանական հիմնարկի վարկանիշը:

Այսպես: Առավել տարածված սխալներից են՝

ա) Հնչյունի անհարկի կորուստը կամ հավելումը՝

պատճե ⇒ **պատճեն**, *հոգնակին՝* **պատճեն*ն*եր**, *որոշյալ առումը՝* **պատճեն*ը*,**
նախագա(*ն*) ⇒ **նախագա*հ*,** *հոգնակին՝* **նախագա*հ*ներ,** *որոշյալ առումը՝* **նախագահ*ը*,**
հաշվապա(*ն*) ⇒ **հաշվապահ,** *հոգնակին՝* **հաշվապա*հ*ներ,** *որոշյալ առումը՝* **հաշվապահ*ը*,**
տաս ⇒ **տասը,**
ետ ⇒ **հետ (հետ տալ, հետ ընկնել, հետևից....),**
սննկացում, սննկանալ ⇒ **սնանկացում, սնանկանալ:**

բ) Կրավորական **վ** ածանցի անհարկի գործածությունը. հայերենի ոչ բոլոր բայերը կարող են ստանալ **վ** ածանց, հակառակ դեպքում ստեղծվում են սխալ կամ ոչ նախընտրելի ձևեր: Օրինակ՝

խնդրվել (խնդրվում է/խնդրվեց) ⇒ խնդրել (խնդրում է/խնդրեց),
խուսափվել ⇒ խուսափել,
կանչվել ⇒ կանչել,
համաձայնվել ⇒ համաձայնել,
հավաստվել ⇒ հավաստի դառնալ/հաստատվել,
նկատի է ունեցվում/նկատի է ունեցվել ⇒ նկատի է առնվում/հաշվի է առնվում,
ստանձնվել ⇒ ստանձնել *(իմ ստանձնած/իմ կողմից ստանձնած պարտականություն),*
տուժվել ⇒ տուժել:

գ) Ն, չ ածանց ունեցող բայերի սխալ կազմություններ-ը: **Ն**-ն և **չ**-ն ընկնում են անցյալ ժամանակի որոշ ժամանակաձևերում և դերբայական որոշ կազմություններում:

Սխալ են՝ **թողել, թողելու, թողելով, թողող, կթողի, պիտի թողի** ձևերը:
Ճիշտ են՝ **թողնել** – *թողնելու, թողնելով, թողնող, թողնում եմ, թողնեմ, կթողնեմ, պիտի թողնեմ, թողեցի, թողել եմ, թողած:*

Սխալ են՝ **փախնել, փախնելու, փախնելով, փախնող, փախնում, փախնի, կփախնի, պիտի փախնի** ձևերը:

Ճիշտ են՝ **փախչել** – *փախչելու, փախչելով, փախչող, փախչում եմ, փախչեմ, կփախչեմ, պիտի փախչեմ, փախել եմ, փախա, փախած:*

Նաև՝ ճիշտ են՝
կորչել – *կորչելու, կորչելով, կորչող, կորչում եմ, կորչեմ, կկորչեմ, պիտի կորչեմ, կորել եմ, կորա, կորած,*
թռչել – *թռչելու, թռչելով, թռչող, թռչում եմ, թռչեմ, կթռչեմ, պիտի թռչեմ, թռել եմ, թռա, թռած,*
կպչել – *կպչելով, կպչելու, կպչող, կպչում եմ, կպչեմ, կկպչեմ, պիտի կպչեմ, կպա, կպել եմ, կպած*[25]*:*

դ) Բառակազմական և կամ ձևակազմական այլ սխալներ՝

բացթողնում ⇒ բացթողում,
ներդնում ⇒ ներդրում (բայը՝ **ներդնել**, գոյականը՝ **ներդրում**, ինչպես՝ *ներդրում* կատարել, *ներդրումների* ծավալը),
ներ է մուծվել ⇒ ներմուծվել է,
փոխ է առնվել ⇒ փոխառվել է,
անց է կացվել ⇒ անցկացվել է,
կնիքել, կնիքվել ⇒ կնքել, կնքվել (*կնքած* փաստաթուղթ),

---

[25] Ածանցավոր բայերի կազմության և խոնարհման առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 2004, էջ 196-203, 312-332:

տրման ⇒ **տալու** (փաստաթղթի պատճենը **տալու** համար)**:**

Ավելորդ չենք համարում ներկայացնել փաստաթղթերում, ինչպես նաև պաշտոնական բանավոր խոսքում տարածված բառակազմական որոշ սխալներ: Դրանց մի մասը արտասանական սխալներ են, որոնք գրավոր խոսք թափանցելու վտանգավորություն ունեն:

ՍԽԱԼ	**ՃԻՇՏ**
ամսեկան	ամսական
այլոք	այլք
այսինքը	այսինքն
անձիք	անձինք
առաջի	առաջին
առնվազը	առնվազն
առուվաճառք	առք ու վաճառք
ավելնորդ	ավելորդ
բարյացկամ	բարյացակամ
գնհատական	գնահատական
եկրորդ	երկրորդ
ընդհակառակ	ընդհակառակը
ընձեռնել	ընձեռել
ըստ արժանավույն	ըստ արժանվույն
թույլատրություն//թույլատվություն	թույլտվություն
խորը	խոր
համայք	համայնք
համընկում	համընկնում

ձեռնատու	ձեռնտու
մանրունք	մանրուք
ոչ մեկ	ոչ մեկը
չափազանցացնել	չափազանցնել//չափազանցել
տարեկետում	տարկետում
ութանասուն	ութսուն
ուրեմը	ուրեմն
օրեկան	օրական

Անշուշտ, ՀՀ դատական ակտերի լեզուն տասնամյակների ընթացքում որոշակի մշակման ուղի է անցել: Այսուհանդերձ, քննարկված բառային իրողությունները փաստաթղթերում դեռևս հանդիպում են: Իրավական ակտեր կազմելիս պետք է ուշադիր լինել բառագործածության հարցերում, պետք է ճշտել բառի ոչ միայն հնարավոր իմաստները, այլև կազմությունը, ձևափոխության յուրահատկությունները:

ՄԱՍ 3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոսքը պարզ, ճիշտ և սեղմ կառուցելու համար կարևոր են նաև քերականական ձևերի, կառույցների տեղին ընտրությունն ու կիրառությունը[26]: Այստեղ արդեն խնդիր կա ոչ միայն քերականական ճիշտ ու սխալ ձևերի իմացության, այլև ճիշտ կամ անհրաժեշտ տարբերակի ընտրության: Կանոնավոր զուգաձևերից յուրաքանչյուրն ունի կիրառական որոշակի յուրահատկություններ, ոճական նրբերանգներ: Այսպես, օրինակ՝ **երդման//երդումի, կազմման//կազմումի, սեղմման//սեղմումի, ըմբռնման//ըմբռնումի** զուգաձևությունները կանոնավոր են ու ճիշտ, սակայն ունեն կիրառական ինչ-ինչ տարբերություններ՝ պայմանավորված խոսքաշարի հնչյունական միջավայրով, դյուրին արտասանվելու հատկությամբ և այլ հանգամանքներով: Կամ՝ հայերենում իմաստային առումով շատ մեծ չէ տարբերությունը անորոշ դերբայի և **-ում** ածանցով նույնարմատ բայանուն գոյա-

[26] Անդրադառնում ենք ձևաբանական այն իրողություններին, որոնք ունեն գործածության դժվարություններ, կամ որոնց կիրառություններում հանդիպում են ինչ-ինչ անճշտություններ, որոնք ոչ միայն թուլացնում են փաստաթղթի լեզվական կառույցը, այլև ներազդում են դրա բովանդակության ճշգրտության վրա:

կանի սեռական հոլովների արտահայտած քերականական իմաստների միջև՝ **ընդունելու – ընդունման, կազմելու – կազմման, ստանալու – ստացման, արտոնագրելու – արտոնագրման** և այլն: Բայց ինչ-ինչ առումներով որոշակիորեն տարբեր են սրանց գործառական հնարավորությունները: Կամ՝ կիրառական յուրահատկություններ ունեն շարահյուսական հոմանիշ կառույցները՝ ներգործական և կրավորական կառույցներ, դերբայական դարձվածով պարզ և բարդ ստորադասական նախադասություններ և այլն:

3.1. Զնաբանական առանձնահատկություններ

3.1.1. Գոյական անուն: Որոշիչ հոդի գործածությունը

Արդի հայերենում որոշիչ հոդերն են՝ **ը, ն** (ձայնավորից հետո դրվում է **ն**, բաղաձայնից հետո՝ **ը**): Եթե հոդով գործածված բառին հաջորդում է ձայնավորով կամ **սպ, ստ, սկ, սպ, զբ, զգ, շտ, շպ** տառակապակցություններով սկսվող բառ, ապա կարելի է գործածել **ն** հոդը: **Կարելի է, բայց պարտադիր չէ:** Օրինակ՝ *Փաստաթուղթ**ն/ը** արտացոլում է...., Դատարան**ն/ը** սկսում է....:*

Թյուր կարծիք կա, սակայն, որ վերը նշված զուգորդումներում ճիշտ է միայն **ն** հոդի գործածությունը: Նմանատիպ միտում է նկատվում նաև իրավաբանական գրագրության մեջ, ինչպես՝ *....որոշում**ն** ստանալուն հաջորդող 15-րդ օրը, ...վերաքննիչ քաղաքա-*

*ցիական դատարանի նիստին չներկայանալ***ն** *արգելք չէ բողոքի քննության համար, գործին մասնակցող անձ***ն** *իրազեկված է....* և այլն:

Միշտ չէ, որ այսպիսի կիրառությունները նախընտրելի են: Այստեղ շատ կարևոր է հաշվի առնել իմաստային և արտասանական որոշակի նրբերանգներ: **Ն**-ով ձևերը կարդացվում են **առանց դադարի**՝ հաջորդող բառին ձուլված. **ն հոդը** պարտադրում է արագ ընթերցում: Որոշ դեպքերում, սակայն, սա խոչընդոտում է մտքի սահուն ընթացքը, խախտվում է նախադասության բառերի միջև անհրաժեշտ տրամաբանական դադարը, **առանցքային բառը մատնվում է անուշադրության**: Մինչդեռ **ը** հոդի գործածությամբ բառն առանձնանում է դադարով, շեշտադրվում է և ուշադրություն գրավում:

Իհարկե, հոդի ընտրությունը պետք է պայմանավորեք Ձեր նպատակադրումով: Բայց, բոլոր դեպքերում, պաշտոնական փաստաթղթերը գործառական այլ տեքստերի համեմատությամբ, որպես կանոն, ավելի դանդաղ են ընթերցվում: Եվ դա խոսքին ոչ միայն հաղորդում է հանդիսավորություն, այլև ընդգծում է իմաստային որոշակի բեռնվածություն ունեցող լեզվական միավորները, համոզիչ է դարձնում մտքի տրամաբանական ընթացքը, խոսքն ավելի հասանելի է դառնում ունկնդիրներին: **Ն** հոդի կիրառությունը, օրինակ, հանձնարարելի չէ ստորև բերված նախադասություններում.

....վերաքննիչ դատարանի բողոքի պատճենն ստանալու օրվանից մինչև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15-րդ օրը:

Դատարանի կայացրած որոշումն անհիմն է, քանի որ հայցվորն ամբողջությամբ պահպանել է պետական տուրքը վճարելու պահանջը:

Ըհոդի գործածությունը կստիպեր փոքր-ինչ դանդաղ կարդալ տեքստը, առավել ուշադրություն դարձնել տեքստի առանցքային բառերին՝ **պատճեն, որոշում, հայցվոր**:

Եթե շարադրանքում ունենք տրոհված անդամներ, և կամ հաջորդում է բաղաձայնով սկսվող բառ, ապա պետք է գործածել միայն ***ը*** *հոդը*: Հակառակ դեպքում կունենանք հոդի սխալ գործածություն: Օրինակ՝ *....հոդվածի 4-րդ կետի դրույթը, որ**ն, ը**ստ էության...., ...ընդունել է ՍՊԸ դիրքորոշումն, այլ ոչ թե նշանակված...., Դատարանն բողոքարկվող դատական ակտը կայացրել է, Քննությունն երևան է հանում այլ փաստեր:*

3.1.2. Գոյականի թիվը

Հոգնակի թվի կազմության ճիշտ և սխալ ձևերի մասին շատ է խոսվել: Այստեղ հաճախ են հանդիպում բացառություններ, զուգաձևություններ, կանոնից շե-

ղումներ: Որոշ դժվարություններ են ծագում հատկապես միավանկ վերջնաբաղադրիչով գոյականների հոգնակին կազմելիս[27]:

Հավելված 2-ում ներկայացնում ենք հոգնակիի կազմության բառացանկ, որը կօգնի իրավակիրառողին ճիշտ ընտրելու հոգնակիի ձևերը:

3.1.3. Հոլովական ձևեր

Պաշտոնական փաստաթղթերի լեզվում հանդիպում են հոլովաձևեր, որոնք ունեն կազմության կամ գործածության որոշ դժվարություններ:

ա) -ում վերջածանցով գոյականների գրական-գրքային հոլովաձևերի հաճախակի համատեղ գործածությունը, առանձին դեպքերում կուտակումը ստեղծում են անբարեհունչ խոսք, արհեստական կառույցներ, շարադրանքը դարձնում են միօրինակ ու անհրապույր: Օրինակ՝ *Համակարգի նպատակն է ծառայողական փաստաթղթերի* ***կազմման****,* ***ձևակերպման****,* ***պատրաստման****, շրջանառության* ***հաշվառման****,* ***կատարման****, հսկողության* ***իրականացման*** *և գործերում դրանց* ***խմբավորման*** *ճշգրիտ աշխատանքների ընթացքի ապահովումը*:

---

[27] Այս մասին մանրամասն տե՛ս **Պետրոսյան Հ.**, Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., 1972: **Ավետիսյան Յու., Թելյան Լ.** և այլք, Ուղեցույց հայոց լեզվի. հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն, Եր., 2017, էջ 139-160 և այլն:

Կամ՝ *....դատական հայց.... Պողոս Պողոսյանի՝ սեփականության իրավունքի **ծագման** հիմքի **ճանաչման** պահանջի մասին....:*

Սա իրավական գրագրության լուրջ թերություններից է: Դրանից խուսափելու մի շարք միջոցներ կան:

Առաջին. բայանուն գոյականները թե՛ ուղիղ, թե՛ թեք ձևերում կարելի է **փոխարինել անորոշ դերբայի համապատասխան ձևերով**՝ դերբայական կառույցներով: Ըստ անհրաժեշտության՝ կարող է փոխվել նաև նախադասության կառուցվածքը: **Հմմտ.**՝

*Վերաքննիչ բողոքը չի պարունակում որևէ նյութական կամ դատավարական իրավունքի **խախտման**, ինչպես նաև վերաքննիչ բողոքում նշված.... նորմերի **խախտման** և գործի **կասեցման** մասին **որոշման** վրա ազդելու վերաբերյալ հիմնավորումներ:*

*⇒ Վերաքննիչ բողոքը չի պարունակում այնպիսի հիմնավորումներ, որոնք կազդեին նյութական կամ դատավարական իրավունքը **խախտելու**, ինչպես նաև վերաքննիչ բողոքում նշված.... նորմերը **խախտելու** և գործը **կասեցնելու որոշման** վրա:*

Երկրորդ. բայանուն գոյականների թեք ձևերը կարելի է դարձնել ուղիղ՝ ըստ անհրաժեշտության փոխելով նաև նախադասության կառուցվածքը: **Հմմտ.**՝

*Համակարգի նպատակն է ծառայողական փաստաթղթերի **կազմման**, **ձևակերպման**, **պատրաստման**, շրջանառության **հաշվառման**, **կատարման**, հսկողու-*

թյան ***իրականացման*** *և գործերում դրանց* ***խմբավորման*** *ճշգրիտ աշխատանքների ընթացքի ապահովումը:*

⇒Համակարգը նպատակ ունի ***ձևավորելու*** *գործավարության միասնական ընթացքը, որը կապահովի ծառայողական փաստաթղթերի* ***կազմումը, ձևակերպումը, շրջանառությունն*** *ու* ***հաշվառումը****, հսկողության* ***իրականացումը*** *և գործերում դրանց* ***խմբավորումը:***

Երրորդ. բայանուն գոյականների՝ **–ան**-ով սեռական-տրական հոլովաձևերի փոխարեն կարելի է կիրառել **ի**-ով զուգաձևերը, ինչպես՝ **կազմման** – *կազմումի*, **մեկնման** – *մեկնումի*, **ստեղծման** – *ստեղծումի*, **մերժման** – *մերժումի* և այլն:

Այլ օրինակներ՝

գումարի ***ստացման*** *⇒* ***ստանալու*** *մասին պահանջագիր,*
փոխանցման հաստատման մասին *կտրոն ⇒* ***փոխանցումը հաստատող*** *կտրոն,*
արտահանման *և* ***ներկրման*** *իրականացումը լիազորող փաստաթուղթ ⇒* ***արտահանում*** *և* ***ներկրում իրականացնելը*** *լիազորող փաստաթուղթ:*

բ) Հայտնի է, որ անձնանիշ, ինչպես նաև վերացական գոյականները կամ **–ում** ածանցով կազմված բառերը չունեն ներգոյական հոլով (-**ում** վերջավորությամբ կազմվող ձև՝ **վարիչ, դիմում**, **որոշում**): Դրա իմաստն

արտահայտվում է **սեռական հոլով + մեջ** կառույցով՝ *շարժում* – **շարժման մեջ**, *ազատություն* - **ազատության մեջ**: Ուստի պետք է խուսափել քերականական սխալ, անբարեհունչ ձևերից, ինչպես՝ **հայցադիմումում** ⇒ **հայցադիմումի մեջ**, **բողոքարկումում** ⇒ **բողոքարկման մեջ**, **ստորաբաժանումում** ⇒ **ստորաբաժանման մեջ** և այլն: Որոշ սխալակազմություններ (օրինակ՝ *հայցադիմումում, բողոքարկումում*) իրավական ակտեր են ներթափանցում տարբեր օրենսգրքերից: Օրենքին անմիջական հղում անելիս այդ սխալները չեն խմբագրվում: Սակայն փաստաթղթի այլ մասերում ցանկալի չէ այդ անճշտությունները կիրառել այն պատճառաբանությամբ, թե օրենքում էլ է այդպես գրված:

գ) Փողոցների և հրապարակների բաղադրյալ հատուկ անունների՝ գոյականով արտահայտված լրացումը լրացյալի հետ, որպես կանոն, գործածվում է սեռական–տրական հոլովաձևով: Օրինակ՝ **Ծերեթելու** փողոց, **Տիգրան Մեծի** պողոտա, **Գարեգին Նժդեհի** հրապարակ, **Մայիսի 9–ի** փողոց, **Հանրապետության** հրապարակ, **Արցախի** փողոց, **Տպագրիչների** փողոց և այլն: Սակայն եթե լրացումը **–յան** կամ **–յանց** ածանցով է կազմված, ապա լրացյալի հետ գործածվում է ուղղական հոլովաձևով: Օրինակ՝ **Մոսկովյան** փողոց, **Աբովյան** փողոց, **Ա. Մանուկյան** փողոց, **Մարշալ Բաղրամյան** պողոտա[28] և այլն:

---

[28] Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, էջ 45:

Սխալ են՝ *Գ. Նժդեհ 18, Այվազովսկի 8, Տիգրան Մեծ 12, Ա. Մանուկյանի 1*:

Ճիշտ են՝ *Գ. Նժդեհի 18, Այվազովսկու 8, Տիգրան Մեծի 12, Ա. Մանուկյան 1*:

3.1.4. Թվական անուն

ա) Ինը և **տասը** թվականները ունեն **ը** կամ **ն** վերջնահնչյուն, որը փոխանվանական կիրառության դեպքում կատարում է նաև որոշիչ հոդի դեր: Բաղադրություններում **տասը** թվականը հանդես է գալիս **ն** հոդով (*տասներորդ, տասնամյակ, տասնապատիկ, տասնվեց*), երբեմն էլ՝ անհոդ (*տասհարկանի, տասուկես, տասմետրանոց*): **Ինը** թվականը միշտ պահպանում է իր **ը** կամ **ն** վերջնահնչյունը՝ *տասնինը, իններորդ, իններորդ, իններորդ, ինիցից, իններ*:

Քանակական թվականները գրավոր խոսքում գերազանցապես արտահայտվում են արաբական թվանշաններով: Դրանցից բաշխական և դասական թվականներ կազմելիս համապատասխան արաբական թվանշանին միության գծիկով կցվում է **–ական, –ին** կամ **–րդ՝ 1–ական, 1–ին, 2–րդ, 78–րդ**:

Կոտորակային թվականների դեպքում տառերով գրվող այդպիսի կցումներ չեն արվում՝ **1/2, 0,5**:

Արաբական թվանշանները **լրացյալից առաջ** դրվելիս կարդացվում են որպես քանակական թվականներ, իսկ **լրացյալից հետո**՝ որպես **դասական**: Օրինակ՝ **2** օրենք - **երկու** օրենք, **41** շենք - **քառասունմեկ** շենք, գլուխ **1.** - *գլուխ* **առաջին,** ենթակետ **3.** - *ենթակետ* **երրորդ** և այլն: **Այս դեպքերում թվականը գործածվում է առանց մասնիկների**:

Սխալ են՝ *հոդված 3-րդի, մաս 2-ից, կետ 7-րդը* և այլն: Պետք է **գրել միայն՝** ***3-րդ*** *հոդվածի,* ***2-րդ*** *մասից,* ***7-րդ*** *կետը*[29]*:*

Իրավական փաստաթղթերում այս առումով կա շտկում կատարելու անհրաժեշտություն. արաբական թվանշանները երբեմն գործածում են նախադաս, սակայն որպես դասական թվական ընթերցելու մտայնությամբ: Ընդ որում, ճիշտն ու սխալը հաճախ գործածվում են կողք կողքի՝ *Բաղրամյան* ***1-ին փակուղի, 14-րդ*** *շենք,* ***168*** *տարածք, ք. Երևան, Նոր Նորքի* ***7 զանգված, 42*** *շ., բն.* ***7****:*

Ճիշտ են՝ *ք. Երևան, Նոր Նորքի* ***7-րդ զանգված, շ. 42,*** *բն.* ***7*** *// ք. Երևան, Նոր Նորքի* ***7-րդ զանգված, 42-րդ շ., 7-րդ*** *բն.:*

Ամսաթվերում նախընտրելի չէ ամսանվան միավոր նիշը սկսել զրոյով, ինչպես՝ *2018 թ. մայիսի* ***03****-ին.* ճիշտ է՝ *2018 թ. մայիսի 3-ին*: Թեև զրոյի հավելումը

---

[29] Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, էջ 277:

հասկանալի նպատակ ունի. վերանում է ժամկետը կեղծելու հավանականությունը, այսուհանդերձ նշենք, որ **ավանդաբար** զրոյով են գրում ամսաթիվը ամբողջությամբ թվերով արտահայտելիս՝ ***01.01.2018:***

Ծանոթություն 1: Տարի, ամիս, օր նշող թվականները սովորաբար գրվում են առանց բացատի՝ ***01.02.2019:***

Ծանոթություն 2: Արաբական թվանշաններով գրված համարի և ենթահամարի միջև դրվում է միջակետ: Վերջին ենթահամարից հետո դրվում է միջակետ՝ ***2.1.3.:*** Հաճախ է հանդիպում, երբ (ենթա)համարը փակվում է առանց միջակետի՝ **3.1, 2.1.3**: Այսպիսի գրությունը **սխալ է**:

3.1.5. Շաղկապ

Պաշտոնական խոսքում հաճախ են հանդիպում առանձին շաղկապների սխալ գործածություններ: Դրանցից խուսափելու համար հարկավոր է ունենալ լեզվական որոշակի գիտելիքներ: Պայմանավորված իրենց քերականական իմաստների յուրահատկությամբ՝ շաղկապներն ունեն կապակցական որոշ սահմանափակություններ: Այսպես.

ա) Որ և **որպեսզի** շաղկապները իրար կարող են փոխարինել միայն այն դեպքում, երբ գլխավորին են կապում **նպատակի պարագա երկրորդական նախադասություն,** որը պատասխանում է **ինչո՞ւ, ի՞նչ նպատակով, ինչի՞ (համար)** հարցերին.

Քննություն է նշանակվել, ***որ*** *(=* ***որպեսզի****) հարցը հանգամանալից ուսումնասիրեն: Խորհրդակցություն է հրավիրել,* ***որ*** *(=* ***որպեսզի****) քննարկեն նախագծի վերջնական տարբերակը:*

Այլ դեպքերում **որպեսզի**-ն չի կարող փոխարինել **որ**-ին, ինչպես՝

Առաջարկություն է եղել (**ինչի՞. հատկացուցիչ**)*, որպեսզի ⇒* ***որ*** *նախագծի քննարկումը հետաձգվի հաջորդ եռօրյա:*

Վերաքննիչ դատարանը անհրաժեշտ է համարում (**ի՞նչ. ուղիղ խնդիր**)*, որպեսզի ⇒* ***որ*** *ավտոտրանսպորտային միջոցներ օգտագործելու հետևանքով տուժողի փաստացի կրած վնասը փոխհատուցվի:*

Հանձնարարվեց (**ի՞նչ. ենթակա**)*, որպեսզի ⇒* ***որ*** *ստուգեն հասանելիք գումարի չափը:*

բ) Ոչ թե…. այլ, ոչ միայն…. այլև զուգադիր շաղկապներն ունեն իմաստային և կիրառական տարբերություններ: Դրանց երկրորդ բաղադրիչները (**այլ, այլև**) երբեք չեն կարող իրար փոխարինել: Հետևաբար՝

Սխալ են՝ ***Ոչ թե*** *տեղյակ չեն եղել,* ***այլև*** *անտեսել են:*

Ոչ միայն *մասնակցել է գործողություններին,* ***այլ*** *ակտիվություն է դրսևորել:*

Ճիշտ են՝ ***Ոչ թե*** *տեղյակ չեն եղել,* ***այլ*** *անտեսել են:*

Ոչ միայն *մասնակցել է գործողություններին,* ***այլև*** *ակտիվություն է դրսևորել:*

Ծանոթություն 1: Սխալ է **ոչ թե...., այլ** շաղկապի **այլ** բաղադրիչի վրա **բութ** դնելը: Սխալ է նաև շաղկապից հետո ստորակետ դնելը, ինչպես՝ *Փորձ արեց հարցը շրջանցելու,* ***սակայն,*** *զրուցակիցը համառորեն հարցը կրկնեց: **Ուստի,** գործի քննությունը հետաձգվել է: Մեքենան գտնվում էր վթարի վայրում,* ***հետևաբար,*** *տուժողի ներկայացրած.....:*

Ծանոթություն 2: Կամ, նաև շաղկապները՝ որպես մեկնական՝ լրացական նշանակություն արտահայտող բառեր գործածվելիս կարող են տրոհվել բութով: Օրինակ՝

*Բողոքաբերը նշել է, որ վթարված ավտոմեքենայի արժեքը ճիշտ չեն գնահատել: **Նաև**՝ նկատի չեն առել այն իրողությունը, որ.....:*

*Ծագել են մի շարք հարցեր. ինչպե՞ս է անձը ընթացքում հրաժարվել իր պարտավորությունները կատարելուց, ինչո՞ւ այդ մասին չի հայտնել ՍՊԸ ներկայացուցչին: **Կամ**՝ եթե դժգոհ է եղել, թեկուզ և չտեղեկացնելով, ինչո՞ւ է շարունակել գործակցել ՍՊԸ-ի հետ:*

գ) Շաղկապների **դիպուկ** ու **տեղին** գործածությունը շատ կարևոր է իրավական փաստաթղթերում մտքի տրամաբանական զարգացումներն ու նրբիմաստները փոխանցելու համար: Դրանց մեկը մյուսի փոխա-

րեն գործածությունը երբեմն էապես փոխում է տեքստի բովանդակությունը, ինչպես՝

*1) Տարածքը տեսահսկվել է, **և** ուշադիր չեն եղել:*
*2) Տարածքը տեսահսկվել է, **բայց** ուշադիր չեն եղել:*
*3) Տարածքը տեսահսկվել է, **քանի որ** ուշադիր չեն եղել:*

(Շաղկապի փոփոխության դեպքում հնարավոր է՝ մասամբ փոխվեն նախադասության որոշ բառեր):

Շաղկապի դերը անփոխարինելի է հատկապես ծավալուն և բազմաբաղադրիչ նախադասություններում: Համեմատենք հետևյալ տարբերակները (բառագործածության սխալները տրվում են թավ).

*Այլ կանխավարկածի դեպքում, այն է՝ թույլ տալով կառավարչի վարձատրության հաշվարկի հիմքում ներառել նաև վարչական և այլ ծախսեր, այդ թվում՝ **նաև իր** հաշվարկված վարձատրությունը, **կստացվի այնպիսի** մի իրավիճակ, **երբ** կառավարչի վարձատրության հիմքը կապված է ոչ թե դատարանի կողմից հաստատված պահանջների ցուցակի, այլ **իր** կողմից կատարվող ծախսերի և այլ վճարների չափից:*

*⇒Այլ կանխավարկածի դեպքում, **եթե** կառավարչի վարձատրության չափը հաշվարկելիս հիմքում ներառվում են նաև վարչական և այլ ծախսեր, այդ թվում՝ իր՝ կառավարչի հաշվարկած վարձատրությունը, **ապա** ստեղծվում է մի իրավիճակ, **որի դեպքում** կառավարչի վարձատրության հիմքը պայմա-*

նավորվում է ոչ թե դատարանի հաստատած պահանջների ցուցակով, այլ նրա կատարած ծախսերի և այլ վճարների չափով:

Երկրորդ տարբերակն առավել հարմար է ասելիքը ճիշտ մատուցելու, տեքստի տրամաբանական եզրերը շեշտելու, դրանց փոխկապակցվածությունը ընդգծելու առումներով:

Մեկ այլ օրինակ `

*Դատարանը **հանգելով հետևության առ այն**, որ Ծ. Հ.-ի անունից ներկայացված **դիմումում** առկա են թերություններ, ինչն էլ հիմք **է հանդիսացել** դիմումը վերադարձնելու մասին որոշում կայացնելու համար, **և** Ծ. Հ.-ին չի տրամադրել եռօրյա ժամկետ՝ **դիմումում** առկա թերությունները վերացնելու և այն կրկին դատարան ներկայացնելու **կապակցությամբ**:*

Խոսքի այլ թերությունները չքննարկելով՝ նշենք, որ սխալ է գործածված **և** շաղկապը: Տրամաբանորեն *Ծ. Հ.-ին չի տրամադրել եռօրյա ժամկետ*-ը խոսքի ոչ թե հավելական, այլ **ներհակական** շարունակությունն է: Հետևաբար այն պետք է արտահայտվի համապատասխան շաղկապներով՝ **բայց, սակայն, մինչդեռ**: Ընդ որում, որպեսզի հակադրվող եզրը առավել ընդգծվի, նախորդող նախադասությունից այն պետք է անջատվի վերջակետով: **Հմմտ.՝**

⇒ Դատարանը եզրակացրել է, որ Ծ. Հ.-ի անունից ներկայացված դիմումի մեջ առկա են թերություններ,

*որոնք հիմք են եղել դիմումը վերադարձնելու մասին որոշում կայացնելու: **Սակայն** Դատարանը Ծ. Հ.-ին չի տրամադրել եռօրյա ժամկետ՝ դիմումի մեջ առկա թերությունները վերացնելու և այն կրկին դատարան ներկայացնելու համար:*

դ) Պաշտոնական խոսքում նախադասությունների միջև պատճառահետևանքային ընդգծված կապը, որը այդ ոճի բնորոշ հատկանիշներից է, մեծապես պայմանավորված է շաղկապների կիրառությամբ: Հետևաբար **չպետք է խուսափել** դրանց գործածությունից, հակառակ դեպքում թուլանում է իրար հաջորդող մտքերի շղթայական կապը: Պարզապես պետք է ճիշտ ընտրություն կատարել: Իհարկե պետք է հրաժարվել նաև նույն շաղկապի անհարկի կրկնություններից: Օրինակ՝

*Հայտնել է, **որ** նկատի ունենալով, **որ** դատաքննության փուլում են հարցաքննվել փորձագետները, **որ** առկա են էական հակասություններ, դրանք պարզելու նպատակով Դատարանին միջնորդել են պատասխանող կողմի միջոցների հաշվին նշանակել 3-րդ փորձաքննությունը՝ կատարումը հանձնարարելով ՀՀ արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոնին, **որը** մերժվեց՝ նկատի ունենալով, **որ** դատաքննության փուլում այլևս միջնորդություններ չեն թույլատրվում:*

Այս նախադասության մեջ **որ**-ի այդչափ կրկնությունը բոլորովին անտեղի է. դրանց մի մասը կարելի է

փոխարինել պատճառահետևանքային շաղկապնե-րով: Տեքստում կան նաև շարադասական և բառա-գործածության անճշտություններ: Ճիշտ չէ նաև նա-խադասության տեսակի (բազմաբարդ նախադասու-թյուն) ընտրությունը. միտքը խճողված է, դյուրին չի ընկալվում (այս մասին տե՛ս էջ 133-145): **Հմմտ.՝**

*(Հայտնել է՝) **քանի որ** փորձագետները հարցաքննվել են դատաքննության փուլում, **և ի հայտ են եկել** էա-կան հակասություններ, **ուստի** դրանք պարզելու նպատակով Դատարանին միջնորդել են պատաս-խանող կողմի միջոցների հաշվին նշանակել 3-րդ փորձաքննությունը: Կատարումը հանձնարարել են ՀՀ արդարադատության նախարարության փորձագի-տական կենտրոնին, **սակայն** այն մերժվել է, **քանի որ** դատաքննության փուլում միջնորդություններ այլևս չեն թույլատրվում:*

ե) «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրեն-քի 16-րդ հոդվածի կետերից մեկը որոշ շաղկապների և բառերի կիրառության մասին սահմանում է. «Եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրա-ռումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա **«ինչպես նաև» բա-ռերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայման-ներ»**[30] (ընդգծ. մերն է): Այսինքն՝ **ինչպես նաև**-ը որոշ դեպքերում պետք է ընկալվի **կա՛մ...., կա՛մ** շաղկապի

[30] Տե՛ս http://www.arlis.am/documentview.aspx?docid=120733

նշանակությամբ: Սա էապես հակասում է բառի բառարանային իմաստին և առհասարակ հայերեն մտածողությանը. **ինչպես նաև**-ն ունի ոչ թե ներհակական (հակադրական), այլ միավորիչ-հավելական նշանակություն: Ենթադրվում է, որ օրենքներում բառը ի սկզբանե սխալ է գործածվել, ուստի և տասնյակ օրենքներ ու հոդվածներ չփոխելու համար միայն իրավաբանական գրագրության մեջ կիրառելու նպատակով այսպիսի որոշում է կայացվել: Այսուհանդերձ, որոշումը արտառոց է, բառը հակառակ կամ մի նոր նշանակությամբ ընկալելու «պարտադրանքը»՝ չարդարացված:

3.1.6. Կապ

ա) Շնորհիվ, արդյունքում, պատճառով և **հետևանքով** կապերն ու կապական բառերը, նշելով հիմունքի, պատճառի, հետևանքի իմաստներ, միաժամանակ վերաբերմունք են արտահայտում. առաջին երկուսը՝ դրական, վերջին երկուսը՝ չեզոք կամ բացասական: Մեկը մյուսի փոխարեն գործածելիս առաջանում է իմաստային անճշտություն:

Սխալ է, օրինակ, *ՀՀ-ում չգտնվելու **արդյունքում** չէր կարողացել ներկա գտնվել դատական նիստին:* **Ճիշտ է**՝ *ՀՀ-ում չգտնվելու **պատճառով** չէր կարողացել ներկա գտնվել դատական նիստին* (տե՛ս նաև էջ 44-45):

բ) **Հետ, մոտ, վրա, պես, նման** կապերը **ես, դու, մենք, դուք** դերանունների հետ կապակցվում են ոչ թե սեռական, այլ տրական հոլովաձևերով՝ **ինձ նման, մեզ պես, քեզ հետ, ձեզ վրա**: **Մոտ, վրա** կապերի թեք ձևերի հետ նշված դերանունները դրվում են սեռական հոլովով՝ **իմ մոտից, ձեր վրայով**: Վերջին շրջանում, սակայն, ընդհանուր խոսակցական լեզվում գնալով լայն տարածում են ստանում **իմ մոտ, քո վրա, ձեր հետ, մեր նման, քո պես** և նման ձևերը: Սրանք ընդունելի կարող են համարվել բանավոր գրական լեզվում: Բայց գրավոր, մանավանդ պաշտոնական խոսքում առայժմ հանձնարարելի չեն: Ուստի փաստաթղթերում պետք է ձեռնպահ մնալ դրանց կիրառություններից:

գ) **Հանձինս** կապը պահանջում է հոգնակի թվով խնդիր կամ կապի բազմակի խնդիր՝ **հանձինս** ***աշխատակիցների/տնօրենի և փոխտնօրենի,*** իսկ **հանձին** կապը՝ եզակի թվով կապի խնդիր՝ **հանձին** ***տնօրենի***: Մեկը մյուսի փոխարեն գործածելը սխալ է:

դ) **Ի թիվս** կապը պահանջում է հոգնակի թվով կապի խնդիր՝ **ի թիվս** ***սովորողների/այլոց:*** Հանձնարարելի չէ ***ի թիվս այլնի*** կապակցության գործածությունը: Ճիշտ են՝ ***ի թիվս այլ գործոնների/հանգամանքների/պատճառների****....*:

ե) **Ի դեմս** կապը գործածվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով գոյականների հետ, բայց միայն անձնանիշ կամ անձի առումով վերցված գոյականների՝ **ի դեմս** ***գործ-***

ընկերների//գործընկերոջ, բայց ոչ՝ ***ի դեմս հրամանագրի***:

Ծանոթություն: **Ի թիվս, ի փառս, ի հեաճուկս, ի դեմս** կապերը չունեն առանց **ս** վերջնամասնիկի ձևեր:

զ) Հետ կապը **ծանոթանալ** բառի հետ գործածվելիս արտահայտում է փոխադարձության իմաստ: Եթե կապվող բառը իրի անուն է, ապա, պարզ է, փոխադարձության մասին խոսք լինել չի կարող: Հետևաբար այդ դեպքում գոյականը պետք է գործածել միայն սեռական-տրական հոլովով՝ առանց **հետ** կապի՝ *ծանոթանալ փաստաթղթերի* ***հետ*** ⇒ ***փաստաթղթերին***, *ծանոթանալ տեղանքի* ***հետ*** ⇒ ***տեղանքին***:

է) Բացի կապը պահանջում է բացառականով կապվող բառ, դրվում է և՛ դրանից առաջ, և՛ հետո՝ ***բացի նշվածից//նշվածից բացի***: Սխալ են՝ *բացի* նշվածը/ասվածը: (Ճիշտ են նաև՝ *բացի այդ/այն, բացի դա* և *բացի դրանից*):

ը) Առանց կապը պահանջում է սեռական-տրական հոլովով կապվող բառ՝ **առանց** *պատասխանի/պատասխանելու*. սխալ են՝ **առանց** *պատասխան/պատասխանել*:

թ) Մեջ կապը ցույց է տալիս առարկայի կամ երևույթի ներսը, իսկ **միջև** կապը՝ երկու և ավելի առարկաների կամ երևույթների փոխհարաբերությունը: Սխալ է մեկը մյուսի փոխարեն գործածելը: Օրինակ՝ ***Կազմակերպությունների միջև*** *տարբերություն կա:* ***Կազմա-***

կերպությունների մեջ *հակասություններ կան:* Սխալ է՝ ***Կազմակերպությունների մեջ*** *տարբերություն կա*:

ժ) Փոխանակ և **փոխարեն** կապերից առաջինը դրվում է կապվող բառից առաջ (նախադրություն է), իսկ երկրորդը՝ կապվող բառից հետո (հետադրություն է): Սխալ է դրանց՝ մեկը մյուսի դիրքում գործածելը. *պատասխանողի փոխարեն* (բայց ոչ՝ *փոխարեն պատասխանողի*), *փոխանակ դիմելու* (բայց ոչ՝ *դիմելու փոխանակ*):

ժա) Կողմից կապը գործածվում է անձ ցույց տվող կամ անձի առումով դրված գոյականների հետ, ինչպես՝ ***դատավորի կողմից, դատարանի կողմից, հայցվորի կողմից:*** Իր ցույց տվող գոյականները ներգործող անուղղակի խնդրի պաշտոնում կիրառվում են առանց **կողմից** կապի. դրվում են բացառական կամ գործիական հոլովով, ինչպես՝ ***օրենքով նախատեսվող, օրենսգրքով սահմանվող:*** Իրավաբանական գրագրության մեջ, սակայն, հանդիպում են ***օրենքի կողմից նախատեսվող, օրենսգրքի կողմից սահմանվող*** կապակցությունները, որոնք միանշանակ սխալ են:

3.2. Շարահյուսական առանձնահատկություններ

Եթե խոսքի բնույթը և բովանդակությունը չեն պարտադրում շարահյուսական բարդ կառույցներ, ապա խոսքի մատչելիության տեսակետից միանգամայն նախընտրելի են պարզերը: Նույնիսկ սկզբնապես

մտքում ձևակերպված կամ թղթին հանձնված բարդ ձևակերպումները հեշտությամբ կարելի է փոխարինել մատչելի տարբերակներով, որոնց շնորհիվ խոսքը կլինի ավելի պարզ ու հասկանալի:

Հայտնի է, որ իրավական փաստաթղթերում հաճախակի են գործածվում բարդ, այսպես ասած, երկարաշունչ բառեր (տե՛ս էջ 54-55): Բացի այդ, խոսքը դյուրին կամ ճիշտ է հասցեագրվում, եթե նախադասության անդամները ունեն ճիշտ շարադասություն, խախտված չեն դրանց բնորոշ քերականական կապերը, բառակապակցական միավորները չեն ընդմիջվում երկրորդական միավորներով:

Բառակապակցություններ: Պաշտոնական խոսքում հաճախ են գործածվում բառերի կայուն կապակցություններ և խոսքային կաղապարներ, ինչպես՝ **գործ հարուցել, վարույթ ընդունել, ուժի մեջ մտնել, ուժը կորցրած ճանաչել, պայմանագիրը լուծել, արգելանք դնել, վնասի հատուցում, հակընդդեմ հայցադիմում, պատասխանող կողմ** և այլն:

Մի շարք կառույցներ ունեն տարբերակներ՝ **ի շահ հայցվորի//հայցվորի օգտին, ի հաստատումն փորձաքննության արդյունքների//փորձաքննության արդյունքները հաստատելով, ի բավարարումն պահանջի//պահանջը բավարարելով** և այլն: Սրանցից առաջինները գրական-գրքային բնույթ ունեն, ձևավորում են պաշտոնական վերամբարձ ոճ, իսկ կենդանի խոսքին առավել մոտ են երկրորդները: Հետևաբար դա-

տական ակտերում, գրություններում վերամբարձ, նաև մատչելի ոճ ապահովելու համար նախընտրելի է դրանց **փոխնիփոխ գործածությունը**:

3.2.1. Ենթակայի և ստորոգյալի գործածության յուրահատկություններ

Հայերենում ենթակայի արտահայտության միջոցները բազմազան են. այն կարող է արտահայտվել ամենատարբեր խոսքի մասերով՝ գոյական, ածական, թվական, դերանուն և այլն: Սակայն շարադրանքի նպատակը հստակ ձևակերպելու, խոսքի ճշգրտությունն ու պարզությունը ապահովելու տեսակետից փաստաթղթերում առավել մեծ կարևորություն են ստանում այլ գործոններ՝ ենթակայի, այսինքն՝ գործողությունը կատարողի ճիշտ և տրամաբանական ընտրությունը, նախադասության մեջ զբաղեցրած նրա դիրքը, նախադասության այլ անդամների հետ կապակցական հնարավորությունները և այլն: Այս գործոնները ճիշտ և նպատակային իրացնելու համար պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

ա) Նախադասությունը կառուցել այնպես, որ քերականական և տրամաբանական ենթակաները համընկնեն:

*ՍՊԸ-ի կողմից պայմանագրի նշված կետի **չկատարումը դարձել է** վեճի առարկա:*

Գործողության բուն կատարողը՝ տրամաբանական ենթական (սուբյեկտը), **ՍՊԸ**-ն է, մինչդեռ նախադասության կառույցում **չկատարում**-ը գոյականն է դարձել ենթակա: Այսպիսի կառույցները նպատակահարմար չեն. կամա-ակամա քողարկվում, հետին պլան է մղվում բուն սուբյեկտը՝ գործողություն կատարողը: Օրինակում կա նաև բառակազմական անճշտություն՝ **չկատարում**-ը: **Հմմտ.**՝

ՍՊԸ-ն *պայմանագրի նշված կետը* ***չի կատարել****, որը դարձել է վեճի առարկա:*

Կամ՝ *Ըստ հայցվորի՝ ընկերության աշխատակցի կողմից* ***կատարվել է*** *վթարված ավտոմեքենայի արժեքի ոչ պատշաճ* ***գնահատում*** նախադասության մեջ տրամաբանորեն գործողություն կատարողը **աշխատակից**-ն է: Մինչդեռ կրավորական կառույցը անհարկի ձգձգում է ասելիքը, թուլացնում հստակությունը: Տեղին չէ նաև ***պատշաճ չի գնահատել*** արտահայտությունը: Առավել նպատակային է հետևյալը՝

Ըստ հայցվորի՝ ընկերության ***աշխատակիցը համարժեք/ճիշտ չի գնահատել*** *վթարված ավտոմեքենայի արժեքը:*

Այսպիսի կառույցները մթագնում են խոսքը, այն դարձնում են խրթին ու անհասկանալի: Տեղին է այն նկատառումը, որ «Հաճախ իրավաբանական փաստաթղթերի ուսումնասիրությունը կարող է տպավո-

րություն ստեղծել, որ փաստաթղթի հեղինակը նյութի բովանդակությունը ներկայացնելու փոխարեն նպատակ է հետապնդում թաքցնել այն: Նման աղքատիկ գրելաոճը պահանջվածից առավել է դժվարացնում իրավաբանական փաստաթղթի բովանդակության ընկալումը»[31]:

բ) Պահպանել ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը:

Հիշենք, որ հոգնակի թվով դրված ենթական կամ բազմակի ենթակաները պահանջում են հոգնակի թվով ստորոգյալ[32]: Օրինակ՝

*Դրանով հաստատվում **է** ⇒ **են** գործում առկա **հակասությունը** և **անճշտությունը**:*

*Առանձին ակտի ձևով դատարանի կայացրած որոշման մեջ պետք է **նշվի** ⇒ **նշվեն** որոշումը բողոքարկելու **կարգը** և **ժամկետը**:*

---

[31] **Մոլիտերնո Զ., Մելիքյան Ռ., Մելքոնյան Դ.,** նշվ. աշխ., էջ 14:

[32] Անշուշտ, կան այնպիսի կառույցներ, որոնցում ենթակայի և ստորոգյալի անհամաձայնությունը բխում է քերականությունից, ինչպես՝ ***Երկու տուժող*** *հայցադիմում* ***է//են ներկայացրել: Միացյալ Նահանգները վերանայել է*** *օրենսդրությունը* և այլն (այս մասին մանրամասն տե՛ս **Իշխանյան Ռ.,** Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Եր., 1986, էջ 123-128)**:** Դատական ակտերի, ծանուցագրերի լեզվին, սակայն, քերականական այսօրինակ առանձնահատկություններ բնորոշ չեն. այս ոճի կառույցների համար մեծ մասամբ բնութագրական է գլխավոր անդամների համաձայնությունը:

Փաստաթղթերից հնարավոր է դառնում եզրակացնել, որ համաձայնության սխալների զգալի մասը ունի շատ որոշակի պատճառներ. կա՛մ ենթական ու ստորոգյալն են շատ հեռացած իրարից, կա՛մ ընտրված է նախադասության ոչ ճիշտ կառույց, կա՛մ էլ երկուսը միաժամանակ: Օրինակ՝ *Բեռների **փոխադրումը**, որը պետք է իրականացներ նշված ՍՊԸ-ն՝ ըստ կողմերի միջև եղած պայմանագրի, և նշված ժամանակին հասցեատիրոջը **հասցնելը**՝ ըստ նույն պայմանագրում նշված ժամկետի, պատշաճ **չի** կատարվել:*

Ակնհայտ է, որ բերված օրինակում գլխավոր անդամների անհամաձայնությունը հետևանք է, այսպես ասած, խոսքի «կտրտվածության», ասելիքը մեկ նախադասության մեջ «տեղավորելու» ջանքի և գործողության հիմունքը անպայման առանցքում պահելու անհարկի մտայնության: Առաջարկվող տարբերակում մտքերը առանձնացվել են նախադասություններով. այդպես խոսքը դարձել է անսխալ, առավել պարզ և դյուրընկալ: **Հմմտ.**՝

⇒ Ըստ կողմերի միջև եղած պայմանագրի՝ նշված ՍՊԸ-ն պետք է իրականացներ բեռների փոխադրումը և սահմանված ժամկետում դրանք հանձներ հասցեատիրոջը: Սակայն ՍՊԸ-ն պատշաճ չի կատարել իր պարտավորությունները:

գ) Ստորոգյալը հայերենում արտահայտվում է խոնարհված բայով, անուն խոսքի մաս+հանգույց կամ

խոնարհված բայ+անորոշ դերբայ կառույցներով՝ *Դատարանը* ***հաստատում է*** *որոշումը: Որոշումը* ***ճիշտ է:*** *Ամուսինը* ***ուզում է բողոքարկել*** *վճիռը:*

Առաջին երկուսը չունեն գործածության դժվարություններ: Դրանք ծագում են երրորդի դեպքում՝ **խոնարհված բայ+անորոշ դերբայ** կառույցում: Խոսակցական լեզվում շատ տարածված է ստորոգյալի երկու բաղադրիչները խոնարհելը, ինչպես՝ **ուզում է** ***բողոքարկի***, **կարողանում եմ** ***անեմ***, **պատրաստվում ես** ***գնաս***: Անկախ տարածվածությունից՝ սրանք կանոնավոր կազմություններ չեն, գրական լեզվում տեղ չունեն:

Ճիշտ են անորոշ դերբայով ձևերը՝ *կարողանում եմ* **անել**, *ուզում է* **բողոքարկել**, *պատրաստվում ես* **գնալու:**

Այլ օրինակներ՝

....որպեսզի անձը ***կարողանա*** *վարկ* ***ստանա*** *և* ***վերադարձնի*** *իր պարտքը....*
⇒....որպեսզի անձը **կարողանա** վարկ **ստանալ** և **վերադարձնել** իր պարտքը....

....ինքը ***ուզել է*** *գումարը* ***վճարի....***
⇒*....ինքը* ***ուզել է*** *գումարը* ***վճարել:***

3.2.2. Շարադասություն

Տեքստում նախադասության անդամների դասավորության որոշակի կարգն է: Դա պայմանավորում է տեքստի ճիշտ ընկալումը: Դրանից կատարված շեղումը արդարացվում է, եթե **նպատակ կա** ուշադրությունը բևեռելու այս կամ այն բառի, այս կամ այն մտքի վրա:

Պաշտոնական խոսքում շարադասության դերը ավելի կարևոր է դառնում. այն ձեռք է բերում առանցքային նշանակություն: Դա պայմանավորված է պաշտոնական խոսքի հատկանիշներով:

Նախ՝ այդ խոսքը կոնկրետ է և ճշգրիտ: Խոսքի ճշգրտությունը երբեմն ապահովվում է տրամաբանական շեշտով: Խնդիրը շարադասությամբ լուծելիս կարևոր նշանակություն է ձեռք բերում օժանդակ բայի/հանգույցի դիրքը, որը սովորաբար լինում է տրամաբանական շեշտ կրող անդամից հետո:

Երեք-չորս բառ ունեցող նախադասությունը կարելի է վերաձևակերպել մի քանի տարբերակով՝ պայմանավորված խոսքի նպատակադրումով, ինչպես՝

1. Վարորդը հանդիպել է տուժողին:
2. Վարորդը տուժողին հանդիպել է:
3. Վարորդն է տուժողին հանդիպել:
4. Վարորդը տուժողին է հանդիպել:

Առաջինը արտահայտում է չեզոք վերաբերմունք. խոսքի բնական ընթացք է: **Երկրորդը** շեշտում է գործողությունը կատարելու՝ *հանդիպելու* գաղափարը: **Երրորդը** շեշտադրում է ենթական՝ գործողություն *կատարողին*: **Չորրորդը** ուշադրության է առնում գործողության առարկային՝ *տուժողին:*

Ապա՝ պաշտոնական խոսքը գերազանցապես իրացվում է գրավոր տարբերակով և զուրկ է բանավոր խոսքին հատուկ արտասանական մեծ հնարավորություններից: Եվ եթե հաշվի առնենք նաև այն, որ իրավական փաստաթղթերում վերաբերմունք արտահայտող բառերն ունեն սահմանափակ կիրառություն, ապա ակնհայտ է դառնում, որ այս դեպքում խոսք կառուցելու հիմնական գործիքը շարադասությունն է:

Այս ամենը նշանակում է, որ իրավական փաստաթղթերում շարադասական նորմից կատարված ցանկացած շեղում պետք է լինի խիստ նպատակային ու պատճառաբանված: Հակառակ դեպքում շարադասական յուրաքանչյուր փոփոխություն կամ շրջում խաթարելու է ճիշտ կառույցը, խանգարելու է միտքը արագ ընկալելուն, հանգեցնելու է տարընթերցումների: Դրանից խուսափելու համար պետք է.

ա) Ըստ հնարավորության ենթական շատ չհեռացնել, «չկտրել» ստորոգյալից:

Նախադասության իմաստը ճիշտ և միանշանակ հաղորդելու համար անհրաժեշտ է պահպանել նախադասության անդամների ընդունված դասավորությունը: Իհարկե, հայերենի շարադասությունը համեմատաբար ազատ է, սակայն շարադասական անգամ աննշան փոփոխությունը հաճախ կարող է ազդել նյութը մատուցելու և ընկալելու վրա: Միտքը դժվար է հասկացվում, եթե նախադասության **ենթական ու ստորոգյալը ընդմիջվում են ծավալուն անդամներով՝** միջանկյալ նախադասություններով, դարձվածքներով և այլն: Ուստի անհրաժեշտ է ենթական և ստորոգյալը նախադասության մեջ հնարավորինս «իրար մոտ պահել»: Լրացումները կարելի է «տեղակայել» նախադասության սկզբում կամ վերջում և կամ արտահայտել առանձին նախադասություններով: Օրինակ՝

*Բողոքաբերի պնդմամբ՝ **Դատարանը,** հաշվի չառնելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթը, համաձայն որի՝ օրենսդիրն ուղղակիորեն սահմանել է կրկնակի փորձաքննության արդյունքները դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, անհիմն **նշել է**, որ փորձագետի եզրակացությունը ապացույցի տեսակ է, որով հաստատվում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես*

նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, հետևաբար վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Գործ ունենք բազմաբարդ նախադասության հետ: Առաջին գլխավոր նախադասության ենթական ու ստորոգյալը *(Դատարանը նշել է)* հեռացել են միմյանցից. դրանց միջև հայտնվել է ծավալուն դերբայական դարձված (*հաշվի չառնելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից....»*): Հայերենի բարդ կառույցներից է. ստիպված ես մի քանի անգամ կարդալ՝ մտքերը միմյանցից զատելու և հասկանալու համար: Անհաջող կառույց է. կան նաև կապակցական անճշտություններ: Նույն միտքը կարելի է ձևակերպել ավելի կարճ:

Հնարավոր է վերաշարադրել մի քանի տարբերակով.

- Առանձնացնել նախադասությունները, դերբայական դարձվածները վերածել դիմավոր նախադասությունների:

*Բողոքաբերի պնդմամբ՝ **Դատարանը** հաշվի չի առել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթը, որը հնարավորություն է սահմանում դատական կարգով բողոքարկելու կրկնակի փորձա-*

*քննության արդյունքները: **Դատարանը** անհիմն **նշել է**, որ փորձագետի եզրակացությունը ապացույցի տեսակ է, որով հաստատվում են այն հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, որոնք հիմնավորում են գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները, ինչպես նաև վեճը լուծելու համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Հետևաբար Բողոքաբերը եզրակացրել է, որ վեճը դատարանում քննության ենթակա չէ:*

- Մտքի սահուն ընթացքը չխաթարելու համար կարելի է օրենքի դրույթները տալ փակագծերում.

*Բողոքաբերի պնդմամբ՝ **Դատարանը** հաշվի չի առել կրկնակի փորձաքննության արդյունքները դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը («Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթը): **Դատարանի համոզմամբ**՝ վեճը չպետք է քննվի դատարանում....:*

Գլխավոր անդամների անհարկի հեռացման այլ օրինակներ, **հմմտ.**՝

***Բողոքաբերը**, գտնվելով երկրից դուրս, չպատասխանելով իր շահերը դատարանում ներկայացնող անձի զանգերին, այդպես էլ **չի պատասխանել** հարցին, թե....*

*⇒ Գտնվելով երկրից դուրս, չպատասխանելով իր շահերը դատարանում ներկայացնող անձի զանգերին՝ **բողոքաբերը չի պատասխանել** հարցին, թե....*

***Դատարանը** հրավիրված փորձագետների միջոցով **չի պարզել**՝ ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով ավտոմեքենայի կոնկրետ որ մասերն են վնասվել:*
*⇒ Հրավիրված փորձագետների միջոցով **դատարանը չի պարզել**, թե ավտոմեքենայի կոնկրետ որ մասերն են վնասվել ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով:*

Քննարկված կառույցները բնորոշ են ո՛չ միայն իրավական փաստաթղթերին, կամ միայն փաստաթուղթը կազմողի «մեղքն» ու խնդիրը չեն: Այսպիսի լեզվամշակույթը արատավոր ժառանգություն է խորհրդային շրջանի պաշտոնական լեզվից: Հայաստանը անկախությունից առաջ անմիջական կախում ուներ ԽՍՀՄ-ից և նրա իրավական համակարգից: Ժամանակի պաշտոնական գրագրությունը լայն առումով ոչ միայն թելադրում էր ձևային ու բովանդակային կանոններ, այլև էապես ազդում էր փաստաթղթերի լեզվական որակի վրա: Հատկապես իրավաբանական գրագրության մեջ շատ էին շարահյուսական օտարաբան կառույցները, ռուսերենից պատճենված կաղապարները, դերբայական դարձվածներով և կրավորական կառույցներով խճողված բարդ նախադա-

սությունները: Այս առումով ուշագրավ է լեզվաբան Ս. Աբրահամյանի դիտարկումը. «Մասնավորապես Սովետական Միության ժողովուրդների լեզուների պաշտոնական ոճը ենթարկվում է միատեսակ բառապաշարի, միատեսակ շարահյուսական կառույցների: Դրան մեծ չափով նպաստում է այն հանգամանքը, որ պաշտոնական խոսքը հայերենում և ազգային այլ լեզուներում գերազանցապես թարգմանական բնույթ ունի (սահմանադրություն, կանոնադրություններ, միջազգային հարաբերությունների վերաբերյալ փաստաթղթեր, ՍՄԿԿ Կենտկոմի, սովետական կառավարության որոշումներ, պաշտոնական այլ փաստաթղթեր և այլն) կամ ազգային լեզվով արտահայտվում է ռուսաց լեզվով գրված պաշտոնական խոսքի ընդօրինակումով, նմանությամբ»[33]:

Ներկայումս պաշտոնական խոսքը որոշ չափով հաղթահարել է ռուսերենի (նաև անգլերենի) ազդեցությունները: Իրավաբանական խոսքի մշակույթը լեզվական նորոգումների զգալի ճանապարհ է անցել. փոխվել են պաշտոնական գրագրությունների ոչ միայն կառուցվածքը, չափանիշները, այլև լեզուն: Մեծ աշխատանք է կատարվում այն օտար ազդեցություններից ազատելու համար: Սակայն **ավանդույթի ուժը** հզոր է. դա դժվար է հաղթահարվում նաև լեզվի ոլոր-

---

[33] **Աբրահամյան Ս.**, Պաշտոնական ոճը և նրա առանձնահատկությունները, «Հայոց լեզու և գրականություն», Եր., 1983, պրակ 1-2, էջ 83-84:

տում: Հետևաբար քննարկվող կառույցները որքան էլ անցանկալի, այսուհանդերձ սպասելի են:

բ) Նախադասության առանցքային բառը կամ բառակապակցությունը պահել ուշադրության կենտրոնում: Օրինակ՝

*Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ **դիմումին** պետական տուրքը վճարելու մասին ապացույցը **կցված չէ**:*

Դիմումին բառաձևը նախադասության հանգման խնդիրն է, և տրամաբանորեն անհամոզիչ է դրա դիրքը: Ավելին, եթե կարիք կա բառն առանձնացնելու, ընդգծելու, պետք է դրվի ստորոգյալի կողքին, մինչդեռ անհարկի հեռացել է դրանից: Վերը նշված նախադասությունը կարելի է շարադրել հետևյալ կերպ.

*Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ պետական տուրքը վճարելու մասին ապացույցը **կցված չէ դիմումին**:*

Կամ՝ *Այսպես, նախնառաջ, ի տարբերություն պարտատերերի պահանջների, որոնց բավարարման համար անհրաժեշտ է հատուկ ընթացակարգ, անգամ հնարավոր է, որ պարտատիրոջ պահանջը չհաստատվի կամ չբավարարվի, կառավարչի վարձատրության համար հատուկ ընթացակարգ չի պահանջվում:*

....կառավարչի վարձատրության համար....-ը, այսպես կոչված, բուն նախադասությունն է. դրա բաղադրիչները տրամաբանորեն պետք է լինեին կողք կողքի, իսկ **....ի տարբերություն պարտատերերի պահանջների** կապակցությունը հակառակ հիմունքն է՝ ներհիակական կառույց՝ իր ծավալուն լրացումներով, որը հակադրվում է բուն նախադասությանը: Վերջինս ընդմիջվել է միջանկյալ կառույցով, որն արդեն շեղում է ընթացքից: Առաջարկվող տարբերակ.

⇒Կառավարչի վարձատրության համար հատուկ ընթացակարգ չի պահանջվում՝ ի տարբերություն պարտատերերի պահանջների, որոնք բավարարելու համար անհրաժեշտ է հատուկ ընթացակարգ, անգամ հնարավոր է, որ պարտատիրոջ պահանջը չհաստատվի կամ չբավարարվի:

Կամ՝ *Բողոք բերած անձի և գործին մասնակցող անձանց՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նիստին չներկայանալն արգելք չէ բողոքի քննության համար:*

Առավել հարմար տարբերակ է հետևյալը.

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նիստին ***բողոքաբերի և գործին մասնակցող անձանց չներկայանալը*** *բողոքը քննելու* ***արգելք չէ****:*

Միշտ էլ կարելի է գտնել նախադասության անդամների այնպիսի դասավորություն, որը բոլորի համար

կլինի սովորական, պարզ և ճիշտ: Միայն թե պետք է հիշել, որ բառընտրությունը կամ անգամ բառաձևի ընտրությունը զգալիորեն կարող է ազդել նախադասության կառուցվածքի, ասելիքը դյուրին կամ խրթին արտահայտելու վրա: Կրկին քննարկենք վերը բերված նախադասություններից մեկը.

Դատարանը հրավիրված փորձագետների միջոցով չի պարզել՝ ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով ավտոմեքենայի կոնկրետ որ մասերն են վնասվել:

Խոսքաշարում առանցքային միտքը ավտոմեքենայի վնասված լինելն է, վնասի չափը (ավտոմեքենայի կոնկրետ որ մասերն են վնասվել), ոչ թե պատճառը (ճանապարհատրանսպորտային պատահարը): Ստորև տրված շարադասական տարբերակով շեշտվում է հենց այդ գաղափարը: **Հմմտ.**՝

*⇒ Հրավիրված փորձագետների միջոցով դատարանը չի պարզել, **թե** ավտոմեքենայի կոնկրետ որ մասերն են վնասվել ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով:*

Ի դեպ, առաջարկվող տարբերակում, ինչպես տեսնում ենք, կիրառված է նաև **թե** շաղկապը, որը ավելի է շեշտում բաղադրիչ նախադասությունների պատճառահետևանքային կապը, դրանք շաղկապում է իրար, ցրում է բութի «ներմուծած» անորոշությունը:

Շրջուն շարադասությունը պաշտոնական ոճին բնորոշ հատկանիշ է: Դա սովորաբար ավելի պաշտոնական, հանդիսավոր և ազդեցիկ է դարձնում խոսքը: Այս ոճում առհասարակ հաճախ են կիրառվում ծավալուն որոշիչներ (**վիճարկվող հրամանի կասեցման վերաբերյալ** պահանջ, **պարզաբանման ենթակա կատարողական** թերթ, **դռնբաց դատական** նիստ, **պատահարից առաջ ընդունված** նորմեր), հեռացած հատկացուցիչ-հատկացյալներ (**տուժողի**՝ ավտոմեքենայի վնասը փոխհատուցելու պահանջը, **Դատարանի**՝ 2018 թվականի ապրիլի 5-ի որոշումը): Դրանց նպատակային և տեղին շրջումը ճշգրտում, զորացնում է միքտը, ընդգծում է խոսքի բովանդակային այս կամ այն կողմը: Օրինակ՝

Տարբերակ 1. *Պատասխանող կողմը ներկայացրել է պահանջ՝* ***վիճարկվող հրամանի կասեցման վերաբերյալ:***

Տարբերակ 2. *Պատասխանող կողմը* ***վիճարկվող հրամանի կասեցման վերաբերյալ*** *պահանջ է ներկայացրել:*

Առաջին տարբերակում ուշադրությունը բևեռվում է **պահանջ**-ի վրա, շեշտվում է ընդհանրապես պահանջ ներկայացնելու գաղափարը, իսկ երկրորդում առաջնային ու կարևոր է դառնում պահանջի բուն **բովանդակային կողմը**, հատկապես այն, թե կոնկրետ ինչի վերաբերյալ է պահանջը:

Երկու տարբերակներն էլ հավասարապես ճիշտ են, պահպանում են պարզ, հստակ, նաև պաշտոնական խոսքին հատուկ որակները:

Վարչական խոսքում շրջուն շարադասությամբ կառույցները գործածվում են ավանդաբար: Որպես կանոն, փաստաթղթերի վերնագրերը որոշյալ-որոշիչ, հատկացյալ-հատկացուցիչ շրջուն կապակցություններ են, ինչպես՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

հայերենի բարձրագույն խորհրդի 2018 թ. փետրվարի 10-ի N 1 նիստի

կամ՝

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Որպես վերնագրեր՝ այս կառույցները պատճառաբանված են. փաստաթղթի անվանումը միանգամից ուշադրություն է գրավում: Մինչդեռ բուն տեքստում շրջուն շարադասության գործառույթները փոխվում են:

Շարադրանքում պետք է խուսափել որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունների բաղադրիչների անհարկի հեռացումից, դրանց չպատճառաբանված շրջումից:

Անհարկի շրջումները խանգարում են ասելիքն արագ ընկալելուն: Օրինակ՝ *Համաձայն Ձեր՝ 2016 թ. նոյեմբերի 30-ի դիմումի՝ աշխատանքից ազատվելու մասին, Դուք 2016 թվականի դեկտեմբերի 1-ից ազատվել եք Ձեր զբաղեցրած պաշտոնից:*

Մի կողմից՝ ***դիմում*** հատկացյալը հեռացել է իր հատկացուցիչից՝ ***Ձեր***-ից, ընդմիջվել է ծավալուն որոշիչով, մյուս կողմից՝ ***դիմում*** բառի մյուս՝ ***աշխատանքից ազատվելու մասին*** որոշիչն էլ հանդես է եկել շրջուն շարադասությամբ: Հատկապես վերջինը, դիրքով պայմանավորված, այնքան էլ չի կապվում իր որոշյալին: ***Դուք***-ն էլ ավելորդ է: Առավել հարմար տարբերակը հետևյալն է՝

Աշխատանքից ազատվելու մասին 30.09.2016 թ. Ձեր դիմումի համաձայն՝ *01.12.2016 թ. ազատվել եք Ձեր զբաղեցրած պաշտոնից:*

Մեկ այլ օրինակ: *Այսպիսով, վերաքննիչ բողոքում բերված փաստարկները չեն ծառայում Դատարանին վերագրված խախտումների առկայությունն արձանագրելու՝ բողոք բերած անձի նպատակին, ուստի վերաքննիչ բողոքը բավարարվել չի կարող:*

Անհարթ կառույց է: Առաջին տպավորությամբ թվում է, թե փաստարկները չեն բավարարում **դատարանին**, ուստի **նպատակին**-ը այս համատեքստում դառնում է ավելորդ: Մինչդեռ դրանք չեն ծառայում **բողոքաբերի**

նպատակին: Հնարավոր լուծման տարբերակները մի քանիսն են. կարելի է՝

- **Միայն շարադասությունը փոխել՝ հավելելով 1-2 բառ.**

*Այսպիսով, վերաքննիչ բողոքում բերված փաստարկները չեն ծառայում **բողոքաբերի նպատակին, այն է՝** արձանագրել Դատարանին վերագրված խախտումների առկայությունը, ուստի վերաքննիչ բողոքը բավարարման ենթակա չէ:*

- **Գործածել բացահայտիչ-բացահայտյալ կառույց.**

*Այսպիսով, վերաքննիչ բողոքում բերված փաստարկները **չեն ծառայում բողոքաբերի նպատակին՝ Դատարանին վերագրված խախտումների առկայությունը արձանագրելուն,** ուստի վերաքննիչ բողոքը բավարարման ենթակա չէ:*

- **Նախադասությունը ենթարկել կառուցվածքային փոփոխության:** Այս տարբերակը նախընտրելի է. հնարավորություն է տալիս ազատվելու ավելորդ բառերից: Ի դեպ, այս նախադասությամբ ձևակերպվում է դատական ակտի եզրափակիչ միտքը, հետևաբար այն պետք է լինի որոշակի և հստակ:

*Այսպիսով, վերաքննիչ բողոքում բերված փաստարկները **չեն հիմնավորում այն խախտումները, որոնք***

բողոքաբերը վերագրում է Դատարանին, ուստի վերաքննիչ բողոքը բավարարման ենթակա չէ:

գ) Պետք է խուսափել նախադասության «միջուկը»՝ առանցքային բառը, նախադասության վերջում դնելուց: Կառույցն այսպիսին է.

*Այդպիսի փաստը կարող է **հավաստվել** միայն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված **տեղեկանքով**:*

Նախ՝ ցանկալի չէ **հավաստվել** բառի գործածությունը, ապա՝ **տեղեկանքով** բառաձևը պետք է դնել խոսքը սաստկացնող **միայն** բառից հետո: Դերբայական դարձվածը դժվարացնում է անհրաժեշտ բառի որոնումը: Նշվածներից խուսափելու համար կարելի է կատարել շարադասական աննշան փոփոխություն: **Հմմտ.**՝

*⇒ Այդպիսի փաստը կարող է **հավաստի դառնալ** միայն **տեղեկանքով, որը** իրավաբանական անձանց **տալիս է** ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալությունը:*

Եթե վերը բերված օրինակներում սխալ շարադասությունը ընդամենը դժվարացնում է արագ ընկալումը, ապա լինում են դեպքեր, երբ այն շփոթ է առաջացնում, ինչպես՝

*Իրավասու մարմին **առանց փաստաթղթերի բերման ենթարկված Սահմանադրական դատարանի** անդա-*

մը պետք է անմիջապես ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուց հետո:

Այս շարադասությամբ ընդգծված բառակապակցությունը լրացնում է ոչ թե **անդամը** բառին (ինչպես ենթադրվում է շարադրանքի բովանդակությունից), այլ **Սահմանադրական դատարանի**-ն. ունենում ենք *բերման ենթարկված Սահմանադրական դատարան*: Սխալ շարադասությունը հնարավոր է շտկել հետևյալ կերպ: **Հմմտ.**՝

բ) *Սահմանադրական դատարանի անդամը,* ***որը առանց փաստաթղթերի բերման է ենթարկվել իրավասու մարմին,*** *պետք է ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուն պես:*

Մի այլ դեպքում անճիշտ շարադասությունը ազդում է գործողությունների տրամաբանական հաջորդականության վրա, ինչպես՝

Անձը պետք է դատարանին ***ապացուցի*** *ու* ***վկայակոչի*** *հիմնավոր փաստեր ժամկետը բաց թողնելու պատճառների մասին:*

Այստեղ ակնհայտորեն խախտված է գործողությունների տրամաբանական հաջորդականությունը. նախ վկայակոչում են փաստերը, ապա փորձում են ապացուցել:

Այս նախադասությունը կարելի է ավելի պարզ վերաշարադրել հետևյալ կերպ.

⇒*Անձը ժամկետը բաց թողնելու պատճառների մասին պետք է հիմնավոր փաստեր* ***վկայակոչի*** *և* ***ապացուցի*** *դրանք:*

Այսպիսով, ենթակայի և ստորոգյալի հարաբերության, կապակցելիության հարցերում հեշտ է կողմնորոշվել. ուշադիր լինելու դեպքում վրիպելը գրեթե բացառվում է: Մինչդեռ շարադասությունը խախտելու յուրաքանչյուր դեպք կարող է դժվարություններ ստեղծել: Հայերենի շարադասությունը համեմատաբար ազատ է, և գրողն ինքն է ընտրում նախադասության անդամների՝ իր ասելիքին հարմար դասավորություն: Սակայն եթե հիմք ընդունենք միայն շարադասության ազատությունը և անտեսենք լեզվի ներքին օրինաչափությունները, ապա կունենանք խոսքային անխուսափելի «վթարներ» և բովանդակային վտանգավոր անճշտություններ: Լեզվագործածության բարձր մակարդակ ապահովելու համար պետք է ներդաշնակորեն համադրել մասնագիտական և լեզվական գիտելիքները:

3.3. Շարահյուսական կառույցների ընտրություն. հոմանիշ կառույցներ

Շարահյուսական հոմանշությունը բարդ երևույթ է: Այն, ըստ էության, ընդգրկում է լեզվի շարահյուսական կառուցվածքն ամբողջությամբ: Հոմանշային հարաբերություններով առնչակից են նախադասության

տարբեր տեսակներ ու տիպեր՝ միակազմ ու երկկազմ, դիմավոր ու անդեմ, լրիվ ու թերի, կրավորական ու ներգործական, պարզ ու բարդ, բարդ համադասական և բարդ ստորադասական և այլն[34]: Այս կառույցները, սակայն, դրսևորում են իմաստային և ոճական որոշակի տարբերություններ. առերևույթ նույն միտքն արտահայտող երկու հոմանիշ կառույցներ ունենում են գործառական տարբեր իրացումներ, նախադասության այս կամ այն անդամը, բաղադրիչը շեշտադրելու ուրույն հնարավորություններ: Այդ իսկ պատճառով իրավական տեքստում պետք է ուշադիր հաշվարկել նախադասության տեսակների ընձեռած հնարավորությունները:

Հստակ ու դիպուկ նախադասությունները տեքստի բովանդակային ճշգրտության երաշխիք են:

3.3.1. Դերբայական դարձվածով պարզ և բարդ ստորադասական նախադասություններ

Կան շարահյուսական կառույցներ, որոնք հաճախակի գործածություն ունեն պաշտոնական գրագրության մեջ: Դրանցից են **դերբայական դարձվածները**:

Պաշտոնական խոսքում դերբայական դարձվածով են գերազանցապես արտահայտվում գործողության՝

[34] Այս մասին մանրամասն տե՛ս **Պառնասյան Ն.**, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1970:

● **հիմունքը** (հիմունքի պարագան)՝ *հիմք ընդունելով դատարանի որոշումը...., ելնելով վերը նշվածից...., հաշվի առնելով այդ փաստը....,*

● **ձևը** (ձևի պարագան)՝ *բեռնափոխադրողը, հերքելով հայցվոր կողմի մեղադրանքը, նշել է...., վարորդը, ավտոմեքենան վթարի վայրից տեղափոխելով, կայանել է ՍՊԸ տարածքում,*

● **հակառակ հիմունքը** (զիջման պարագան)՝ *չնայած կողմերի միջև առկա պայմանագրին...., փաստաթղթի բնօրինակը ներկայացնելու փոխարեն....,*

● **ժամանակը** (ժամանակի պարագան)՝ *փաստաթղթերը ներկայացնելիս չեն կցվել...., վթարի վայրում գտնվելիս չի նկատել....,*

● **նպատակը** (նպատակի պարագան)՝ *դատարանը գնաց՝ որոշում կայացնելու, կողմերը դիմում են ներկայացրել՝ պայմանագիրը ժամկետից շուտ լուծելու* և այլն:

Այսօրինակ կառույցները պաշտոնական խոսքի առանցքն են. խոսքին տալիս են որոշակի վերամբարձություն, պաշտոնականություն, նպաստում են խոսքի հակիրճությանը, համատեղում են զուգընթաց գործողությունների նկարագրություններ, խոսքը դառնում է ավելի տարողունակ: Այս առումով, իհարկե, մեծ է դրանց դերը: Սակայն, պայմանավորված որոշ նկատառումներով, պետք է հրաժարվել դրանց հաճախակի գործածությունից կամ կուտակումից: Այսպես:

ա) Դերբայական դարձվածների **հաճախակի գործածությունը կամ կուտակումը հատուկ չէ հայերենին**. հանգեցնում է խոսքի արհեստականության, անհըստակության: Եթե խոսքը տալիս է հնարավորություն, ապա երբեմն նպատակահարմար է դերբայական դարձվածները կամ դրանց մի մասը փոխարինել երկրորդական նախադասություններով:

Դիմավոր բայի առկայությունը խոսքին հաղորդում է հստակություն և դինամիզմ: Օրինակ՝

***Արձակուրդ գնալիս, երկարատև գործուղման մեկնելիս** կամ **այլ պատճառներով բացակայելիս** աշխատողը պարտավոր է **իր մոտ եղած** փաստաթղթերը հանձնել **իրեն փոխարինող** անձին:*

Նախադասության սկզբում «տեղադրված» մի քանի դերբայական դարձվածները թուլացնում են խոսքի տեմպը. նախընտրելի է, որ թավ տրված վերջին կապակցությունը (*իրեն փոխարինող*) ձևակերպվի առանձին նախադասությամբ: **Հմմտ.**՝

*⇒ Արձակուրդ գնալիս, երկարատև գործուղման մեկնելիս կամ այլ պատճառներով բացակայելիս աշխատողը պարտավոր է իր մոտ եղած փաստաթղթերը հանձնել **այն անձին, որը փոխարինելու է իրեն**:*

Կամ՝

*Դատարանը, **գտնելով, որ սույն գործով տրված** կատարողական թերթի պարզաբանման անհրաժեշտու-*

*թյուն չի եղել, ավելին, դատարանը, **բողոքարկվող դատական ակտով պարզաբանելով** կատարողական թերթի պահանջները, ըստ էության սահմանել է կատարման ենթակա նոր պահանջներ:*

Առավել նպատակահարմար է միտքն արտահայտել առանց դերբայական դարձվածի՝ կոնկրետ ստորոգումով, նաև կարելի է որոշ բառեր փոխել, ինչպես՝

*⇒Դատարանի **համոզմամբ՝ այս** գործով տրված կատարողական թերթը պարզաբանելու անհրաժեշտություն չի եղել, ավելին՝ **բողոքարկվող դատական ակտով դատարանը պարզաբանել է** կատարողական թերթի պահանջները և սահմանել կատարման ենթակա նոր պահանջներ:*

Ընդ որում, կատարված փոփոխությամբ՝ նախադասության ձևի պարագան (*Դատարանը, **գտնելով, որ սույն գործով տրված....***) փոխվում է հիմունքի պարագայի: Խոսքը դառնում է առավել տրամաբանական ու համոզիչ:

բ) Եթե նպատակ կա բուն գործողությանը զուգահեռ ներկայացնելու զուգընթաց գործողություն(ներ), ապա դրա համար դերբայական դարձվածը հարմար, նույնիսկ անփոխարինելի միջոց է: Այդպիսով խոսքը դառնում է ավելի սեղմ, ասելիքը՝ ավելի պարփակ և ամբողջական: Երբեմն, սակայն, ինչ-ինչ նկատառումներով իրավակիրառողը դարձվածի միջոցով փորձում է որոշ գործողությունների ընկալումը թուլացնել կամ դրանց տալ ոչ էական նշանակություն: Իսկ երբ

դրանք տրվում են առանց շաղկապի կամ հաջորդում են իրար, ապա ավելի է մեծանում ասելիքը քողարկելու հավանականությունը. անշաղկապ կառույցները արագ են ընթերցվում, և դարձված(ներ)ով արտահայտված գործողությունը մղվում է երկրորդ պլան: Օրինակ՝

Տարբերակ 1. *Մթության մեջ չկողմնորոշվելով, արագ վարելով՝ վթարի էր ենթարկվել:*
Տարբերակ 2. *Մթության մեջ չկողմնորոշվելով և արագ վարելով՝ վթարի էր ենթարկվել:*
Տարբերակ 3. *Մթության մեջ չի կողմնորոշվել և արագ վարելով՝ վթարի է ենթարկվել:*
Տարբերակ 4. *Արագ է վարել և մթության մեջ չկողմնորոշվելով՝վթարի է ենթարկվել:*

Այստեղ ունենք նույն մտքի ոճական-նրբիմաստային չորս տարբերակ. հմուտ իրավաբանը դրանցից յուրաքանչյուրը կգործածի ըստ հարկի և նշանակության:

Մյուս կողմից, սակայն, իրավաբանական ցանկացած տեքստ պետք է լինի **բաց, հստակ, միանշանակ**: Դրանցում միտքը խոսքային հնարներով քողարկելը չի արդարացվում, և ուստի բնավ հարկ չկա այդ միտումով դիմելու դերբայական դարձվածների:

գ) Միշտ չէ, որ կարելի է դերբայական դարձված գործածել: Դա հնարավոր է դառնում այն դեպքում, երբ գործողությունը, որն արտահայտվում է դերբայով և

ստորոգյալով, իրականացնում է միևնույն անձը (առարկան): Հակառակ դեպքում ստացվում է երկիմաստություն կամ պարզապես անիմաստություն: Օրինակ՝

Հեռագրերը *մատյանով հանձնվում են համապատասխան ծառայությունների օգնական-ռեֆերենտին՝* ***նշելով ընդունման ամսաթիվը և ժամը:***

Այս կառույցից ստացվում է՝ **հեռագրերն են նշում ամսաթիվը**:

Կամ՝ *Հեռագրերի* ***ընդունումը*** *կատարվում է շրջանառության բաժնում՝* ***նշելով ամսաթիվը:***

Այս կարգի սխալներից խուսափելու համար կարելի է՝

- դերբայական դարձվածը փոխարինել առանձին նախադասությամբ՝

Հեռագրերի ընդունումը կատարվում է շրջանառության բաժնում. ***նշվում է ամսաթիվը:***

- փոխել գլխավոր կամ ամբողջ նախադասության կառուցվածքը՝

Հեռագրերն ընդունում է ***շրջանառության բաժինը****՝ նշելով ամսաթիվը:*

Մեկ այլ օրինակ՝

Նշված որոշման դեմ X ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ անունից վերաքննիչ բողոք է բերվել 25.10.2018 թվականին՝ ***հանձնելով այն փոստային կապի ծառայություն:***

⇒ Նշված որոշման դեմ X ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ անունից վերաքննիչ բողոք է բերվել 25.10.2018 թվականին: Այն ***հանձնել են/ հանձնվել է փոստային կապի ծառայությանը:***

դ) Շատ դեպքերում **նախընտրելի է դերբայական դարձվածն արտահայտել համապատասխան ստորադասական նախադասությամբ:** Այս կերպ բաղադրիչ նախադասությունների տրամաբանական կապն ու հարաբերությունը առավել ցայտուն են դրսևորվում: Օրինակ՝

Եռօրյա ժամկետում կարող եք հետ վերցնել նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ աշխատանքային պայմանագիրը աշխատողի նախաձեռնությամբ լուծելու մասին առնվազն երեսուն օր առաջ գրավոր ձևով գործատուին ներկայացված ծանուցումը:

Դերբայական դարձվածների կուտակումը խճողում է միտքը, անհարկի ձգձգում ընկալումը: Խանգարում են նաև ոչ ճիշտ կետադրությունը և շարադասությունը: **Հմմտ.**՝

⇒ Համաձայն նույն հոդվածի 1-ին մասի՝ *եռօրյա ժամկետում կարող եք հետ վերցնել աշխատանքային պայմանագիրը աշխատողի նախաձեռնությամբ լու-*

*ծելու մասին ծանուցումը, որն **առնվազն երեսուն օր առաջ գրավոր ներկայացվել է գործատուին:***

Այլ օրինակ՝

*Հայցվորի՝ **նախկինում զբաղեցրած պաշտոնն այլ անձի կողմից զբաղեցված լինելու** հանգամանքն **ինքնին** որպես գործատուի և աշխատողի աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինություն **որակվել** չի կարող:*

Նախադասությունը կարելի է շտկել երկու տարբերակով:

- Որոշիչ դերբայական դարձվածը վերածել ստորադասական նախադասության.

*Այն հանգամանքը, **որ հայցվորի նախկինում զբաղեցրած պաշտոնը այլ անձ է զբաղեցրել,** չի կարող **դիտվել** գործատուի և աշխատողի աշխատանքային հարաբերությունները վերականգնելու անհնարինություն:*

- Վերաձևակերպել նախադասության երկրորդ մասը՝ դերբայական ոչ այնքան հարթ կառույցը փոխարինելով ստորոգումով.

Այն, որ հայցվորի նախկինում զբաղեցրած պաշտոնը զբաղեցրել է այլ անձ, չի նշանակում, թե անհնար է վերականգնել գործատուի և աշխատողի աշխատանքային հարաբերությունները:

Կարծում ենք՝ երկրորդ տարբերակը առավել հաջողված է. հստակ է և ավելի հարազատ մեր լեզվամտածողությանը:

Կամ՝

Աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ աշխատողի՝ ***պայմանագրի լուծման ժամկետի և այլ պայմանների վերաբերյալ տեղեկություններ չպարունակող*** *գրավոր առաջարկը և աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ գործատուի հրամանը միասին չեն կարող նույնացվել երկկողմանի համաձայնագրի հետ:*

⇒ Աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ աշխատողի գրավոր առաջարկը, ***որը պայմանագիրը լուծելու ժամկետի և այլ պայմանների վերաբերյալ տեղեկություններ չի պարունակում,*** *և աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ գործատուի հրամանը միասին չեն կարող նույնացվել երկկողմանի համաձայնագրի հետ:*

Երբեմն դերբայական դարձվածների կուտակումները պարզապես ձախողում են խոսքը: Հակիրճ արտահայտվելու ձգտումը չի ստացվում: Օրինակ՝

Որևէ ապացույց չեն ներկայացրել նաև ***նշված հարցը ընդհանուր ժողովում քննարկված լինելու կամ այն քննարկման դնելու իրենց պահանջի մերժված լինելու*** *մասին:*

Կառույցում երկրորդական նախադասության «ներկայությունը» անխուսափելիորեն անհրաժեշտ է: **Հմմտ.**՝

⇒ Որևէ ապացույց չեն ներկայացրել նաև այն մասին, ***որ նշված հարցը քննարկվել է ընդհանուր ժողովում,*** *կամ* ***հարցը քննարկելու պահանջը մերժվել է:***

Կարծիք կա, որ դերբայական դարձվածները նպաստում են պաշտոնական խոսքի վերամբարձությանն ու հանդիսավորությանը, և որ դրանց բացակայությունը կամ քիչ գործածությունը իրավական խոսքը դարձնում է պարզունակ ու առօրեական: Կարծիք կա նաև, որ ստորադասական նախադասություններն էլ իրենց հերթին ծանրացնում, ձգձգում են ասելիքը: Բերված օրինակներից երևում է, սակայն, **որ որևէ դեպքում մենք հատուկ նախապատվություն չենք տվել միայն մեկին կամ մյուսին**: Առավել հարմար և նպատակային ենք համարել այդ երկուսի համատեղ գործածությունը այն տրամաբանությամբ, որ դրանք ակնհայտորեն հարստացնում են խոսքը, դարձնում բազմազան ու հստակ, միաժամանակ նպաստում են խոսքի պաշտոնական որակների պահպանմանը: Թերևս ավելորդ չէ նշել նաև, որ իրավական փաստաթուղթը, ի տարբերություն, օրինակ, անձի բժշկական-առողջական տեղեկագրի (հիվանդության պատմության) կամ հաշվապահական հաշվետվության, ուղղվում է ավելի մեծ և բազմաշերտ լսարանի: Այդ իսկ պատճառով **հստակ և միանշանակ շարադրանքը**

պետք է նկատվի իրավական տեքստի անբեկանելի հատկանիշը:

Փաստաթուղթ կազմելիս տեղին կլինի թերևս հիշել հետևյալ խոսքերը. «Զանացե՛ք, որ նախադասությունները միշտ լինեն կարճ, հասկանալի ու պարզ: Հիշե՛ք, որ Ձեր խնդիրն ամենևին այն չէ, որ լսարանին ցուցադրեք, թե ի վիճակի եք գործածելու դժվարարտասանելի բառեր ու շարահյուսական բարդ կառույցներ (եթե Ձեր նպատակը միայն սեփական կրթվածությունն ու խելքը ի ցույց դնելը չէ), այլ այն, որ Ձեր ունկնդիրները միանգամայն ճիշտ ըմբռնեն այն, ինչ Դուք ցանկանում եք նրանց ասել»[35]:

3.3.2. Ներգործական և կրավորական նախադասություններ

Դրանց ոճական հնարավորությունները շատ որոշակի են ու հստակ:

ա) Ներգործական նախադասությունը ակտիվ խոսք է, կրավորականը՝ պասիվ: Երկրորդում սովորաբար ընդգծվում է ինքնին կատարման փաստը՝ անկախ այն բանից, թե ով է հատկապես կատարողը. ստեղծվում է մի տեսակ **չեզոք վերաբերմունք**: **Հմմտ.**՝

*Վերաքննիչ դատարանը **վերանայել է** հայցը:*

---

[35] **Честара Дж.**, Деловой этикет (перевод.: Бескова Л.), М., 2001, с. 98.

*Հայցը **վերանայվել է** վերաքննիչ դատարանի կողմից:*

բ) Կրավորական կառույցները երբեմն անհրաժեշտ են ներգործականների «հարուցած» միօրինակությունը մեղմելու համար, ինչպես՝

*Իր ընկերներից X-ի խնդրանքով 24.01.2013 թ. Y-ի փոխարեն Z-ը ամբողջությամբ մարել է վերջինիս պարտավորությունները: ....Առանց որևէ շահ ունենալու մարել է պարտավորությունը, որպեսզի տունը չանցնի բանկին, իսկ վերջիններս պարտավորվել են մի քանի ամիսների ընթացքում վերադարձնել նրա վճարած գումարը: **Հետագայում տունը կրկին ձևակերպվում է Y-ի անունով:***

գ) Կրավորականը լեզվական հարմար միջոց է, եթե անհրաժեշտություն է առաջանում կարևորելու ոչ թե գործողություն կատարողին (ենթակային), այլ գործողությունը կամ դրան առնչվող հանգամանքները: **Հմմտ.**՝

*Այդ արարքի համար **օրենքը նախատեսում է** հետևյալ պատիժը:*

*Այդ արարքի համար **նախատեսվում է** հետևյալ պատիժը:*

Երկրորդով (կրավորական կառույցով) ընդգծվում է **պատիժ** բառը (այսինքն՝ կարևորվում է պատժի գաղափարը), իսկ առաջինի դեպքում խոսքի կենտրոնում ենթական է՝ **օրենք**-ը: Կամ՝

Տնօրենությունը երկու անգամ ***զգուշացրել էր*** *աշխատակցին այդ մասին:*

Աշխատակիցը երկու անգամ ***զգուշացվել էր*** *այդ մասին* (*տնօրենության կողմից* -ը պարտադիր չէ):

դ) Կրավորական կառույցները խոսքին տալիս են պաշտոնականության երանգներ և խիստ տարածված են որոշակի փաստաթղթերի լեզվում՝ հաշվետվություն, որոշում, արձանագրություն և այլն: Դատական ակտերում, սակայն, հավասարապես կարևոր են թե' կատարողը, թե' գործողությունը և թե' դրանց վերաբերող հանգամանքները: Կրավորական կազմությունները հասկանալի պատճառներով այդ «հավասարության» հնարավությունը չեն տալիս: Այս դեպքում արդեն առաջին պլան են մղվում ներգործականները:

Ի վերջո, ավելորդ չենք համարում կրավորական կառույցների վերաբերյալ անել մի կարևոր դիտարկում. **կրավորական կառույցները բնորոշ չեն հայերեն լեզվամտածողությանը և գրական լեզվում առանձնապես գործուն չեն:** Եվ եթե փաստաթղթում հատուկ նպատակ չկա կրավորական կառույցի վերը նշված ոճական հնարավորությունները օգտագործելու, ապա նախընտրությունը պետք է տալ ներգործական նախադասություններին:

Որքանո՞վ են նպատակահարմար, օրինակ, հետևյալ կազմությունները՝ *Դատարանի կողմից որոշվեց նիստը հետաձգել, հայցվորի կողմից ներկայացված*

փաստաթուղթ, պատասխանողի կողմից մերժված առաջարկ, գործատուի կողմից լուծված պայմանագիր և այլն:

Տարիների ընթացքում այսպիսիք ավանդույթի ուժով մտել և ամրապնդվել են իրավաբանական գրագրության ու գրականության մեջ, դարձել են մասնագիտական լեզվամտածողության անբաժան տարրեր: Վստահաբար կարող ենք ասել՝ սա իրավաբանական գրագրության խոցելի կողմերից մեկն է: Թերևս ճիշտ կլինի իրավական փաստաթղթերը և ընդհանրապես իրավաբանական ենթառճը բեռնաթափել կրավորական նախադասությունների անհարկի բեռից:

Միտքը ներգործական կառույցներով արտահայտելը ավելի դյուրին է: Բացի այդ, պարտադրվող կապային կառույցները չեն ծանրաբեռնում խոսքը: Բերենք մի քանի օրինակ (ընդգծված են նաև բառերի անհարկի կամ ոչ ճիշտ գործածությունները):

*Իր **կողմից վճարված** գումարի **դիմաց** անձը գնեց վիճելի բնակարանը:*
*⇒ Իր **վճարած** գումարով անձը գնեց վիճելի բնակարանը: // Վճարելով գումարը՝ անձը գնեց վիճելի բնակարանը:*

*Դատարանի **կողմից սույն** քաղաքացիական գործով իրականացվել է ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ գնահատում:*
⇒ Այս քաղաքացիական գործով դատարանը ապացույցները գնահատել է բազմակողմանի և օբյեկտիվ:

Արտահայտվելու պարզ ու հստակ ոճը միշտ էլ նախընտրելի է: **Հմմտ.**՝

***Դատարանի կողմից այդ գործարքը չի կարող որակվել որպես կեղծ**, քանի դեռ չի ապացուցվել **գործարքը** կնքած կողմերից մեկից **ներկայացված** բողոքի հիմնավոր լինելը:*
***⇒ Դատարանը այդ գործարքը չի կարող որակել կեղծ**, քանի դեռ չի ապացուցվել գործարքը կնքած կողմերից մեկի **ներկայացրած** բողոքի հիմնավոր լինելը:*

*Պարզ է դառնում, որ **Դատարանի կողմից որևէ կերպ դիմումատուի կողմից վկայակոչված և ներկայացված** պահանջի հիմքում դրված իրավական նորմին, դրա կիրառելիությանը անդրադարձ չի եղել:*
*⇒ Պարզ է դառնում, որ **Դատարանը չի անդրադարձել դիմումատուի վկայակոչած և ներկայացրած** պահանջի հիմքում դրված իրավական նորմին, դրա կիրառելիությանը:*

Առանձին դեպքերում կրավորական կառույցները պարզապես սխալ են ձևավորվում և տեղիք են տալիս տարընթերցումների: Դրանից խուսափելու համար ճիշտ կլինի հաշվի առնել մի քանի կարևոր հանգամանք.

- ✓ Ոչ բոլոր ներգործական բայերից է հնարավոր **վ**-ով կրավորական սեռի բայեր կազմել: Օրինակ՝ **ունենալ** - *ունեցվել* (նկատի *է ունեցվել*), **նախաձեռնել** - *նախաձեռնվել* (*նախաձեռնված* աշխատանքը),

պատգամել - *պատգամվել* (իրեն *պատգամված* խոսքը....): Սրանք գրական հայերենի համար սովորական կազմություններ չեն (տե՛ս նաև էջ 66-67):

✓ **-Վ-** ածանց ունեցող որոշ բայեր բազմիմաստ են: Օրինակ՝ **հայտնվել** նշանակում է *ի հայտ գալ, երևան գալ*: Այս բայը գրեթե չի գործածվում **տեղեկացնել, իրազեկել** բայերի կրավորական նշանակությամբ: Մինչդեռ դատական ակտերում երբեմն կիրառվում է հենց վերը նշված նշանակությամբ՝ հանգեցնելով տարընկալման (տե՛ս նաև էջ 41-42):

Կամ՝ *Գործի մասնակիցներից* ***որևէ մեկի ներկայացված չլինելու դեպքում*** *վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:*

Կրավորական կառույցի ընտրությունը այս դեպքում նույնպես տեղին չէ մի շարք նկատառումներով: **Նախ**՝ պատճառահետևանքային հարաբերություններն առավել շեշտվում են երկրորդական նախադասությունների միջոցով, հստակ ստորոգումով: Ապա՝ տարբեր են **ներկայանալ** և **ներկայացված լինել** բայերի իմաստները: **Ներկայանալ**-ը ունի մի քանի իմաստ. առաջին իմաստով նշանակում է **պաշտոնական գործով, անհրաժեշտաբար որևէ տեղ գնալ**[36]**:** Ցույց է տալիս ենթակայի ինքնին գործողություն: Այլ է **ներկայացված լինել** կապակցության իմաստը: Այն նշանակում է նաև **ինչ-որ մեկի կողմից ներկայացվել**:

[36] Տե՛ս նշված բառարանները:

Հետևաբար ներգործական կառույցը, ինչպես նաև պայմանի պարագան երկրորդական նախադասությամբ արտահայտելը նպատակային ու տեղին կլինեն: **Հմմտ.**՝

⇒ *Եթե գործի մասնակիցներից* ***որևէ մեկը չի ներկայացել, ապա*** *վճռի օրինակը հրապարակելու [**օրը**] կամ հաջորդ օրը* ***այն*** *պատվիրված նամակով ուղարկվում է նրան:*

Այսպիսով, ներգործական և կրավորական նախադասությունների միջև ընտրություն կատարելիս լավ կլինի հաշվի առնել վերը նշված հանգամանքները:

3.3.3. Պարզ և բարդ նախադասություններ

Հայտնի է, որ պաշտոնական լեզվում գերիշխում են բարդ ստորադասական նախադասությունները: Շաղկապներով և հարաբերյալ-հարաբերականներով (*եթե.... ապա, քանի որ.... ուստի, ոչ միայն.... այլև, ոչ թե.... այլ, այն.... որ, այնպես.... ինչպես* և այլն) կապված կառույցները ձևավորում են խոսքային կուռ միջավայր, ստեղծում են տրամաբանական ամուր կապ, ընդգծում են տեքստի պատճառահետևանքային կառուցվածքը: Սա պաշտոնական ոճի առանձնահատկությունն է: Ավելին, նախադասության տեսակի, շաղկապի կամ ամփոփիչ մեկ բառի ճիշտ ընտրությունը ապահովում է պարբերությունների տրամաբանական կապը և սահուն անցումը: Հիշենք, որ **պարբե-**

ությունը տեքստի այն հատվածն է, որն ունի իմաստային միասնություն և ինքնուրույնություն: Կազմված է առնվազն մեկ նախադասությունից: Բանավոր խոսքում պարբերությունների միջև եղած դադարը ավելի մեծ է, քան նախադասությունների: Գրավոր խոսքում սկսվում է նոր տողից: Պարբերության նախադասությունները բովանդակային, ռիթմահնչերանգային որոշակի կապ ու ներդաշնակություն ունեն: Պարբերությունը բնորոշվում է կառուցվածքային, իմաստային ավարտվածությամբ, նաև մասերի համաչափությամբ, կապակցվող տարրերի միատեսակությամբ, բաղադրիչների արտասանական գրեթե նույն տևողությամբ, կառույցների կաղապարային մերձակցությամբ, հնչերանգային հստակ անցումներով և այլն[37]:

Ասվածի հաջող օրինակ է հետևյալը.

Տվյալ դեպքում *բողոքաբերը Դատարան ներկայացրած դիմումի իրավական հիմքում դրել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասը:* ***Դրա համաձայն, եթե*** *ֆինանսական առողջացման ծրագիր հաստատված չէ,* ***ապա*** *պարտապան ֆիզիկական անձի՝ վաճառքի ենթակա գույքի կազմում չի ներառվում* ***այն*** *գույքը,* ***որը*** *ձեռք է բերվել նրան սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:*

---

[37] Տե՛ս **Պետրոսյան Հ.,** Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 525:

Մինչդեռ *բողոքարկվող դատական ակտի պատճառաբանական մասի բովանդակության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Դատարանը չի անդրադարձել դիմումատուի վկայակոչած և ներկայացրած պահանջի հիմքում դրված իրավական նորմին, դրա կիրառելիությանը: Այդ մասով դատական ակտում եզրահանգումներ չկան:* ***Դրա փոխարեն*** *վկայակոչվել են ներկայացված դիմումին և դրա պահանջին չառնչվող նորմեր: Առանց համապատասխան վերլուծության Դատարանը եզրահանգել է* ***նրան, որ*** *միջնորդությունը ենթակա է մերժման:* ***Մինչդեռ*** *Դատարանի կիրառած հոդվածները հիմք չէին այս գործով ներկայացված դիմումը մերժելու:*

Այս տեքստը հիմնականում կազմված է բարդ ստորադասական նախադասություններից: Տեղին ու ճիշտ են գործածված տարաբնույթ շաղկապական կառույցները: Ըստ հարկի՝ մեջընդմեջ գործածվել են նաև պարզ նախադասություններ, որոնք աննկատ թեթևացնում են խոսքը:

Եվ որքան էլ տարօրինակ է, իրավաբանական գրագրության ամենից ճնշող թերությունը հենց ձգձգված, երկար և խրթին նախադասությունների կուտակումն է: Հիմնական պատճառներից մեկը թերևս այն է, որ հաճախ փորձ է արվում մեկ նախադասության մեջ ամբարելու հնարավորինս շատ տեղեկույթ (ինֆորմացիա): Գործողությունը, գործողության հիմունքը, հակառակ հիմունքը, պատճառը, տեղը, ձևը, օբյեկտը, սուբյեկտը հաճախ մեկտեղվում են մեկ նախադա-

սության մեջ: Իրավական փաստաթղթերի խոսքային թերությունների մեծ մասը հենց այսպիսի կառույցների հետևանք է: Երկարուձիգ նախադասություններում շատ անգամ աննկատ են մնում քերականական սխալը, անհարկի բառօգտագործումը: Բերենք ընդամենը մեկ օրինակ:

ՀՀ աշխ. օր.-ի 110-րդ հոդվածի 1-ին մասը դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ մեկնաբանելու արդյունքում ակնհայտ է, որ աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծված կարող է համարվել բացառապես այն դեպքում, երբ այդ պայմանագրի լուծմանը հետամուտ կողմը մյուս կողմին ներկայացրել է պայմանագիրը լուծելու վերաբերյալ գրավոր առաջարկ, և մյուս կողմն էլ յօթնօրյա ժամկետում իր համաձայնության մասին ծանուցել է առաջարկ ներկայացրած կողմին, ընդ որում, այդ ծանուցումն էլ պետք է հաջորդի պայմանագրի լուծման՝ փոխադարձաբար համաձայնեցված ժամկետը և այլ պայմանները սահմանող երկկողմանի գրավոր համաձայնագրի կնքումը, ինչը նշանակում է, որ աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելու գործընթացի շրջանակներում համապատասխան գրավոր առաջարկ ստացած գործատուի կողմից այդ առաջարկն ստանալու օրվան հաջորդող յոթնօրյա ժամկետի ընթացքում աշխատանքային պայմանագիրը լուծելու (աշխատողին աշխատանքից ազատելու) մասին անհատական իրավական ակտ կայացվել չի կարող, քանի դեռ աշխատողը

ծանուցված չէ գործատուի համաձայնության մասին, և քանի դեռ կնքված չէ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ երկկողմանի գրավոր համաձայնագիր (այլ կերպ ասած՝ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ աշխատողի՝ պայմանագրի լուծման ժամկետի և այլ պայմանների վերաբերյալ տեղեկություններ չպարունակող գրավոր առաջարկը և աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ գործատուի հրամանը միասին չեն կարող նույնացվել երկկողմանի համաձայնագրի հետ, քանի որ կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրաման կարող է արձակվել միայն աշխատողի և գործատուի երկկողմանի համաձայնագրի հիման վրա՝ դրանով պայմանագրի լուծման բոլոր պայմաններն արդեն իսկ փոխադարձաբար համաձայնեցված լինելու պայմաններում):

Մեկ էջից ավելի ձգվող մեկ նախադասություն: Սա այն նմուշ-օրինակներից է, որը ցույց է տալիս, թե **ինչպես չի կարելի գրել**: Տեղին է հիշել ռուս հայտնի իրավաբան Պ. Պորոխովշչիկովի խոսքը. *«Խոսեք ոչ թե այնպես, որ դատավորը կարողանա Ձեզ հասկանալ, այլ այնպես, որ նա չկարողանա Ձեզ չհասկանալ»*[38]: Թերևս բացառվում է, որ հմուտ իրավաբանն անգամ միանգամից կընկալի այսպիսի տեքստը: «Իրավաբանի մասնագիտական շահից ելնելով՝ անհրաժեշտ է գրավոր խոսքը կառուցել հնարավորինս

[38] **Сергеич П.**, Искусство речи на суде, М., 1988, с. 8.

մատչելի և անգամ ընթերցանության համար հաճելի ոճով,– կարդում ենք ուսումնասիրություններից մեկում:– Իրավաբանը հաճախորդին ոչ որակյալ իրավաբանական օգնություն է ցույց տալիս այն դեպքում, երբ անկարող է հստակ գրել և խոսել որպես իրավաբան»[39]: Այս դեպքում եթե նույնիսկ մի կողմ թողնենք խմբագրելու ենթակա լեզվական որոշ անճշտություններ, ապա գոնե կարելի էր բազմաբաղադրիչ նախադասությունները միմյանցից տրոհել վերջակետերով: **Հմմտ.**՝

⇒ *ՀՀ աշխ. օր.-ի 110-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանությամբ՝ **ակնհայտ է, որ աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ կարող է լուծված** համարվել բացառապես այն դեպքում, երբ այդ պայմանագիրը լուծել ցանկացող կողմը մյուս կողմին ներկայացրել է պայմանագիրը լուծելու վերաբերյալ գրավոր առաջարկ: **Իսկ մյուս կողմը** յոթնօրյա ժամկետում իր համաձայնության մասին ծանուցել է առաջարկ ներկայացրած կողմին: **Ընդ որում, այդ ծանուցմանը պետք է հաջորդի երկկողմանի գրավոր համաձայնագրի կնքումը, որը, փոխադարձաբար համաձայնեցված, սահմանում է ժամկետը և այլ պայմաններ: Սա նշանակում է**, որ աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելու գործընթացի շրջանակներում համապատասխան գրավոր առաջարկ ստացած գործատուի կողմից այդ առաջարկը ստանալու օրվան հաջորդող*

[39] **Մոլիտերնո Ջ., Մելիքյան Ռ., Մելքոնյան Դ.,** նշվ. աշխ., էջ 16:

*յոթնօրյա ժամկետի ընթացքում աշխատանքային պայմանագիրը լուծելու (**աշխատողին ազատելու**) մասին անհատական իրավական ակտ չի կարող կայացվել, քանի դեռ աշխատողը ծանուցված չէ գործատուի համաձայնության մասին, և քանի դեռ կնքված չէ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ երկկողմանի գրավոր համաձայնագիր: (**Այլ կերպ ասած՝** աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ աշխատողի գրավոր առաջարկը, որը **պայմանագիրը լուծելու ժամկետի** և այլ պայմանների վերաբերյալ տեղեկություններ չի պարունակում, և աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ գործատուի հրամանը միասին չեն կարող նույնացվել երկկողմանի համաձայնագրի հետ, քանի որ կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին կարող է հրաման տրվել միայն աշխատողի և գործատուի երկկողմանի համաձայնագրի հիման վրա: **Ընդ որում, հրամանը տրվում է, եթե պայմանագրի լուծման բոլոր պայմաններն արդեն իսկ փոխադարձաբար համաձայնեցված են**):*

Այստեղ թերևս տեղին է հիշել ՀՀ Կառավարության՝ 2012 թ. ապրիլի 5-ի արձանագրային որոշումը, որի հավելվածում ներկայացվում են իրավական ակտերի նախագծեր կազմելու մեթոդական ցուցումները: Նշվում է.

- Մեկ նախադասությունը պետք է մեկ միտք արտահայտի: Մեկ գլխավոր ու մի քանի երկրորդական նախադասություններից բաղկացած երկար նա-

խադասությունները ճիշտ կլինի բաժանել մի քանի պարզ նախադասությունների:

- Քանի որ երկար պարբերությունները դժվարընթեռնելի և դժվարընկալելի են, հոդվածի բովանդակությունը պետք է բաժանվի համապատասխան մասերի (կետերի, ենթակետերի)՝ մտքի տրամաբանական զարգացմանը համապատասխան: Սակայն դա չի նշանակում, որ նախադասությունները պետք է արհեստականորեն և անհարկի մասնատվեն:

- Նախադասության տարբեր մասերի միջև քերականական կապը պետք է հստակ լինի: Պետք է պարզ լինի՝ ենթական վերաբերում է գլխավո՞ր, թե՞ երկրորդական նախադասության ստորոգյալին:

- Նախադասությունների կառուցվածքին վերաբերող վերոհիշյալ կանոնների պահպանումը անհրաժեշտ է պարզ կառուցվածքով հոդվածներ ունենալու և դրանց կիրառումը, ինչպես նաև հոդվածում հետագա փոփոխություններ և լրացումներ կատարելը հեշտացնելու համար[40]:

Եթե անգամ մեթոդական այս ցուցումները ներկայումս օրենքի ուժ չունեն, միևնույնն է, տեղին և առաջնային պահանջներ են բոլոր դեպքերում:

Մեկ այլ օրինակ՝

---

[40] Տե՛ս www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/04/qax13-2_1.pdf

Հայտնել են, որ Դատարանը երկու տարակարծությունների դեպքում ընդունել է «X» ՍՊ ընկերության դիրքորոշումը, այլ ոչ թե «Y» ԻԱՄ-ի կողմից նշանակված փորձաքննության արդյունքների շուրջ Դատարանում որպես վկա հարցաքննված փորձագետ X-ի դիրքորոշումն այն մասին, որ, ուսումնասիրելով շուկան, պարզել է, որ 2016 թվականին նման մեքենան արժե 2.456.000 ՀՀ դրամ գումար, ***որը 560.000 ՀՀ դրամի տարբերությամբ է, չի փորձել հստակեցնել դրանց խոշոր չափի տարբերությունը****, ինչպես նաև 4 ամիս ավտոմեքենան շահագործելու ընթացքում մաշվածության գնային արժեքը և կայացրել է չհիմնավորված դատական ակտ:*

Մի կողմից՝ դատարանի դիրքորոշում, **մյուս կողմից՝** հարցաքննված փորձագետի դիրքորոշում, **մի երրորդ կողմից՝** մեքենայի արժեք և այլ տեղեկություններ, **ապա՝** չհիմնավորված դատական ակտ: Եվ սրանք բոլորը վերաբերում են ընդամենը մեկ խնդրի: Բացի այդ՝ ծագում է երկու կարևոր հարց՝ **ա)** ո՞րն է մեքենայի արժեքի տարբերությունը, արժեքը պակա՞ս է ներկայացված, թե՞ ավել, **բ)** ո՞րն է նախադասության ենթական՝ դատարա՞նը, թե՞ «X» ՍՊԸ-ն: Երկրորդ հարցի պատասխանը թերևս հնարավոր է ճշտել վերջին մտքով՝ **կայացրել է չհիմնավորված դատական ակտ**. ենթադրվում է՝ խոսքը դատարանի մասին է: Բայց առաջինի պատասխանը անհնար է պեղել: Քանի որ մտքերը խճճված են, կան նաև բացթողումներ ու անորոշ ձևակերպումներ, տեքստի բովանդակությունը հասկանալի չէ և կամ դյուրությամբ չի ընկալ-

վում: Այս ամենը ստվերում, նաև կասկածի տակ է դնում տեքստի բովանդակության հավաստիությունը: Դրանից կարելի է խուսափել՝ ներկայացվող հարցի կողմերն իրարից առանձնացնելով: Իսկ դա հնարավոր է պարզ և բարդ նախադասությունների համատեղ և փոխնիփոխ գործածությամբ, նաև խմբագրական որոշ ճշգրտումներով: **Հմմտ.** ՝

⇒Հայտնել են, որ Դատարանը, չնայած տարակարծություններին, ընդունել է «X» ՍՊԸ դիրքորոշումը: Դատարանը չի ընդունել «Y» ԻԱՄ-ի նշանակած փորձագետ X-ի դիրքորոշումը, որը հարցաքննվել է որպես վկա: Փորձագետը, ուսումնասիրելով շուկան, պարզել է, որ 2016 թ. այդպիսի մեքենան արժեր 2.456.000 ՀՀ դրամ, որը 560.000 ՀՀ դրամով ավելի է (կամ պակաս): Դատարանը չի փորձել հստակեցնել նաև ավտոմեքենայի գնային մեծ տարբերությունը, ինչպես նաև չի ճշտել 4 ամիս շահագործելու հետևանքով մաշվածության արժեքը: Ուստի կայացված դատական ակտը հիմնավորված չէ:

Ի դեպ, նկատելի է, որ նման ձևակերպումներում տեքստի հեղինակները, փորձելով առավել հստակ ներկայացնել ասելիքը, հաճախ գործածում են հավելյալ լեզվական միջոցներ (**այլ կերպ ասած, այսինքն**, **ըստ էության** և այլն) կամ օգտվում են ներդրյալ նախադասություններից: Օրինակ՝

Հայցադիմումը վարույթ ընդունելիս Դատարանը ստուգում և պարզում է հայցվորի՝ հայց հարուցելու

իրավունքի առկայությունը, ***այսինքն՝*** *հայց հարուցելու իրավունքի նախադրյալների առկայությունը, ինչպես նաև՝ արդյոք հայցվորը պահպանել է այն հարուցելու (****դատարան դիմելու****) օրենքով սահմանված կարգը,* ***այլ կերպ ասած՝*** *պահպանվել են հայցադիմումի գրավոր ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, որոնց չպահպանումը հիմք է հայցադիմումը վերադարձնելու համար:*

Հմմտ.՝

⇒Հայցադիմումը վարույթ ընդունելիս Դատարանը ստուգում է ինչպես հայց հարուցելու իրավունքի նախադրյալների առկայությունը, այնպես էլ այն հանգամանքները, թե պահպանվել են արդյոք հայցադիմումի գրավոր ձևին և բովանդակությանը ներկայացվող այն պահանջները, որոնք սահմանված են օրենքով: Դրանք չպահպանելը հայցադիմումը վերադարձնելու հիմք է:

Այլ օրինակ՝

Այնուհետև բազմիցս հեռախոսակապ է հաստատվել Դատարանի որոշմամբ փորձաքննությանը մասնակից դարձված պատասխանողի ներկայացուցիչ X-ի հետ՝ փորձաքննությանն անհրաժեշտ լրացուցիչ էլակետային տվյալներ, ինչպես նաև հետազոտման առարկա հանդիսացող բնակարանը փորձաքննությանը տրամադրելու համար, սակայն վերջինս հայտնեց, որ պատասխանող կողմը գտնվում է հանրապետությունից դուրս և չի կարող տրամադրել բնակարանը,

հիմք՝ «Y» ՊՈԱԿ-ի 04.02.2016 թվականի թիվ 29521507 եզրակացությունը:

⇒Այնուհետև բազմիցս հեռախոսակապ է հաստատվել պատասխանողի ներկայացուցիչ X-ի հետ, որը Դատարանի որոշմամբ մասնակից է դարձել փորձաքննությանը: Վերջինիս խնդրել են փորձաքննությանը տրամադրել անհրաժեշտ և ելակետային լրացուցիչ տվյալներ, ինչպես նաև հետազոտության առարկա բնակարանը: Սակայն նա հայտնել է, որ պատասխանող կողմը հանրապետությունում չէ և չի կարող տրամադրել բնակարանը (հիմք՝ «Y» ՊՈԱԿ-ի՝ 04.02.2016 թվականի թիվ 29521507 եզրակացությունը):

Այսպիսով, շարահյուսական հոմանիշ կառույցների ճիշտ ընտրությունը և գործածությունը խիստ կարևոր նախապայմաններ են իրավական փաստաթուղթը հստակ, ճշգրիտ և մատչելի կազմելու համար: Բերված օրինակներից նկատելի է, որ միշտ էլ հնարավոր է ի սկզբանե ընտրել նախադասությունների այնպիսի կառուցվածք, լեզվական այնպիսի միջավայր, որ ասելիքը հավելյալ ճշգրտումների կարիք չունենա: Հիշենք՝ **որքան կարճ են նախադասությունները, այնքան քիչ է սխալվելու հավանականությունը**:

3.4. Շարահյուսական այլ իրողություններ

3.4.1. Համաձայնություն

1. Ենթական և ստորոգյալը համաձայնում են թվով, նաև դեմքով: Ստորոգյալը եզակի թվով է դրվում, եթե ենթական եզակի է, այդ թվում՝ հավաքական կամ հոգնակերպ գոյական՝ ***Բողոքաբերը*** *ծանուցագիր* ***է ստացել*** *փոստով:* ***Միացյալ Նահանգները վերանայել է*** *ներգաղթյալների վերաբերյալ օրենքը: ՀՀ* ***զինված ուժերը դիմել է*** *պատասխան գործողությունների:*

2. Եթե եզակի թվով ենթական ունի **մեկից** մեծ թվականով կամ թվական դերանունով արտահայտված որոշիչ, ապա ստորոգյալը կարող է լինել և՛ **հոգնակի թվով՝** *Հայցադիմումի մեջ* ***քննարկվում են երկու հարց,*** և՛ **եզակի՝** *Հայցադիմումի մեջ* ***քննարկվում է երկու հարց:***

3. Ստորոգյալը հոգնակի թվով է, եթե ենթական՝ • հոգնակի է՝ ***Դատարանները*** *անկախ և անաչառ ատյաններ* ***են,*** • բազմակի է՝ *Ո՛չ* ***հայցվորը,*** *ո՛չ նրա* ***ներկայացուցիչը*** *դատական նիստի վերաբերյալ ծանուցագիր* ***չեն ստացել:***

4. Բազմակի ենթակայի հետ ստորոգյալը լինում է եզակի թվով, եթե՝

• Ենթականերն իմաստով հարաբերակից են և միասին արտահայտում են մեկ հասկացություն՝ *Քննարկման ավարտից հետո* ***հարց ու պատասխան*** **չինչեց**:

• Ենթականերն ունեն **յուրաքանչյուր, ամեն (մի), ոչ**

մի դերանուններով արտահայտված ընդհանուր որոշիչ՝ *Դատական քննության* ***յուրաքանչյուր մաս, հատված*** **ունի** *իր բովանդակությունը և նշանակությունը:* ***Ոչ մի արարք, հանցանք*** *այնքան քստմնելի* **չէ**, *որքան հոգեկան հանցանքը:*

• Նույն դեմքով ենթակաները կապված են **կա՛մ....**, **կա՛մ**, **ոչ թե....**, **այլ**, **կամ** շաղկապներից որևէ մեկով՝ *Կատարվածի համար պետք է պատասխան տա* ***կա՛մ*** *X ՍՊԸ-ն,* ***կա՛մ*** *նրա վարորդը:*

• Ենթականերից մեկը՝ նախորդում, մյուսը հաջորդում է ստորոգյալին՝ *Դեպքին տուժողի* ***եղբայրն*** *է ներկա եղել և* ***որդին****, որն անչափահաս է: Թե՛* ***զինվորն*** *է պատասխան տալու կատարվածի համար, թե՛* ***հրամանատարը****:*

5. Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ գոյականով (կամ փոխանվանաբար գործածված բառով) արտահայտված ստորոգելին սովորաբար լինում է հոգնակի թվով *(****Դրանք*** *քննարկման ենթակա* ***ծրագրեր են****)*, բայց կարող է լինել նաև եզակի թվով, եթե՝

• Ենթական հարգական հոգնակի նշանակող անձնական դերանուն է՝ ***Դուք****, հարգելի՛ ներկայացուցիչ, պատասխանատու* ***եք*** *նաև նշվածի համար:*

• Ստորոգելին գնահատող իմաստ ունի և անհոգնական կամ անհաշվելի է՝ *Օրենսգրքերի հաճախակի փոփոխությունները նպաստում են իրավահավասար հարաբերությունների զարգացմանը և առողջ իրավական համակարգ ձևավորելու կարևոր* ***խթան*** *են:*

• Ստորոգելին շեշտում է իր արտահայտած առարկայի ոչ թե քանակը, այլ տեսակը՝ դրվելով անորոշ առումով՝ *Առգրավված բոլոր նկարները մշակութային մեծ **արժեք** են:*

6. Դիմային համաձայնությունը արտահայտվում է բայի դիմային վերջավորություններով կամ հոդերով: 1–ին կամ 2–րդ դեմքի անձնական դերանունով արտահայտված կամ դիմորոշ հոդ (**ս** կամ **դ**) ունեցող ենթակայի հետ ստորոգյալը լինում է համապատասխանաբար 1–ին կամ 2–րդ դեմքով՝ *(Ես) **Պատասխանողս** ներկա եմ եղել այդ միջադեպին: **Ի՛նքդ** փորձիր կողմնորոշվել:* Մնացած դեպքերում ստորոգյալը լինում է 3–րդ դեմքով՝ *Մեկ **վկա** նշանակում է ոչ մի վկա:*

7. 1–ին և 2–րդ դեմքի անձնական դերանուն ստորոգելիի դեպքում հանգույցը դեմքով համաձայնում է դրան՝ *Այդ ամենի կազմակերպիչը **դու ես**:*

8. Տարբեր դեմքերով բազմակի ենթակաների դեպքում ստորոգյալը համաձայնում է առաջին դեմքի ենթակայի հետ (***Ես**, դու, նա **կմեկնենք***), դրա բացակայության դեպքում՝ երկրորդ դեմքի ենթակայի հետ (***Դու** և նա իրար նման **եք***), վերջինիս բացակայության դեպքում դրվում է երրորդ դեմքով (*Որոշ չգրված օրենքներ ու նորմեր ավելի զորեղ **են** գրվածներից*):

9. Բուն բացահայտիչը և բացահայտյալը համաձայնում են թվով, հոլովով, դեմքով, հաճախ նաև առումով՝ ***Մեզ՝ մասնակիցներիս,** տեղեկացրել են այդ մասին:* Դիմային համաձայնությունը կատարվում է

անձնական դերանուններով և կամ դիմորոշ հոդերով: Օրինակ՝ ***Ձեզ՝ այլախոհներիդ,*** *շատերը հանդուրժել չեն կարողանում:* ***Ես՝ X բանկի ներկայացուցիչս,*** *իրավունք ունեմ միջամտելու այդ գործընթացին:*

10. Բացահայտիչն ու բացահայտյալը երբեմն կարող են չհամաձայնել՝

• թվով. *Ուշադիր և մանրամասնությամբ պետք է պատասխանենք* ***բողոքներին՝*** *մեր բուն* ***խնդրին:***

• հոլովով. *Հայցադիմումի մեջ նշված է, որ միաժամանակ աշխատել է երեք տեղ՝* ***X ՍՊԸ-ում, հեռուստաընկերությունում*** *և* ***դպրոցում:*** *Վարչության երեք* ***աշխատակիցներից՝ Վահանյան, Աբրահամյան, Նազարյան,*** *հաշվետվություն է ներկայացրել միայն մեկը:*

• դեմքով. *Անվտանգության* ***աշխատակիցներդ՝*** *մուտքի հիմնական* ***պատասխանատուն*** *և* ***պահապանը,*** *մշտապես պետք է զգոն լինեք:*

• առումով. ***Պատասխանողները՝*** *ՍՊԸ ներկայացուցիչ* ***Ռ. Դավթյան,*** *հաշվապահ* ***Կ. Պողոսյան,*** *հստակ չեն ներկայացրել իրենց փաստարկները:*

11. Մասնական բացահայտիչը (բացահայտյալին է միանում **որպես** կամ **իբրև** կապով և մասամբ է բացահայտում լրացյալի ով կամ ինչ լինելը՝ *Դատարանի՝* ***որպես իրավակիրառողի*** *լիազորությունները հստակ սահմանված են օրենքով)* բացահայտյալի հետ սովորաբար համաձայնում է թվով, հոլովով և

որոշիչ հոդ չի ընդունում՝ *Վահանյանին՝* ***որպես հմուտ դեկավարի,*** *պարգևատրեցին:* Մասնական բացահայտիչը բացահայտյալի նկատմամբ կարող է լինել նախադաս՝ ***Որպես կենսաթոշակառու՝*** *նա օգտվել է մի շարք արտոնություններից:* Այս դեպքում բութը դրվում է բացահայտիչի վրա:

12. Մասնավորող պարագայական բացահայտիչը (ոչ թե գոյականական, այլ բայական անդամի լրացում է և մասնավորեցնում, ճշգրտում է լրացյալի ցույց տված որևէ պարագայական հատկանիշ՝ բայական որևէ անդամի ցույց տված գործողության կամ եղելության տեղը, ժամանակը, երբեմն՝ ձևը) և բացահայտյալը հոլովով և թվով կարող են համաձայնել, եթե երկուսն էլ արտահայտված են գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ այլ բառով՝ *Ընտրական տեղամասեր կլինեն բոլոր բնակավայրերում՝ դպրոցական շենքերում:* Բայց կարող են և չհամաձայնել՝ *Հարցը կպարզվի* ***սահմանագծին՝ դատարանում:***

13. Մասնավորող պարագայական բացահայտիչը, ինչպես և բուն բացահայտիչը կարող են լինել ոչ միայն բազմակի, այլև կրկնակի, եռակի և այլն, այսինքն՝ բացահայտիչն իր հերթին կարող է ունենալ բացահայտիչ՝ *Հերթական դատական նիստը կկայանա հաջորդ շաբաթ՝* ***հինգշաբթի օրը՝ աշխատանքից հետո՝ ժամը վեցին:***

14. Հարաբերյալն ու հարաբերական բառը, որոնք կապակցում են գերադաս և ստորադաս նախադա-

սություններ, սովորաբար համաձայնում են թվով՝ *Հարցաքննվել են **նրանք, ովքեր** ներկա էին:*

15. Որոշիչն ու որոշյալը թվով համաձայնում են հետևյալ դեպքերում.

• գոյական որոշիչը բազմակի որոշյալի դեպքում լինում է հոգնակի, օր.՝ *Մեր **գործընկերներ** Եսայանն ու Պետրոսյանը հանդես եկան համատեղ հայտարարությամբ,*

• մի շարք դերանուն կամ ածական որոշիչներ որոշյալից պահանջում են միայն եզակի կամ միայն հոգնակի թիվ, օրինակ՝ ***այս ու այն** հիմնարկից...., **բոլոր** մարդիկ...., **որոշ** տվյալներ...., **ինչ–ինչ** նկատառումներ...., **բոլոր** վկաները, **բազմաթիվ** հանցանշաններ, **զանազան** փաստեր, **մի խումբ** մարդիկ, **նորանոր** հանգամանքներ, **տարբեր** կարծիքներ, **ամբողջ** գողոնը, **որևէ** բողոք, **յուրաքանչյուր** փաստարկ:*

3.4.2. Խնդրառություն

1. Կապակցվող անդամներից մեկը պայմանավորում է մյուսի քերականական ձևը: Այդպես են կապակցվում՝ • խնդիրն ու լրացյալ բայը՝ ***Հանդիպեց տուժողին**,* • անվանական պարագան ու ստորոգյալը՝ ***Զինված էր ատրճանակով**,* • հատկացուցիչն ու հատկացյալը՝ ***Մեր պատասխանը** սա է,* • կապն ու կապի խնդիրը՝ ***Ժամկետի փոփոխության մասին** ծանուցում չի եղել:*

2. Առանձին բայերի (նաև որոշ ածականների) հա-

մար արդի հայերենում առաջ են եկել խնդրառական զուգաձևեր՝ **կարոտել** *հայրենիքին//հայրենիքը*, **դավանել** *սկզբունք//սկզբունքի,* **կրակել** *մեկի վրա//մեկին, մեկից//մեկին* հինգ **է պակաս, կառչել** *պատճառներից//պատճառներին,* **կախել** *պատին//պատից,* **ձեռնարկել** *գործ//գործի,* **խոչընդոտել** *զարգացումը//զարգացմանը,* **ուրախ եմ** քո *գալու համար//գալուն,* **բավարարել** *պահանջները//պահանջներին,* **խթանել** *զարգացումը//զարգացմանը*: Դրանցից մի քանիսը խոսակցական երանգ ունեն կամ հնացած են՝ ***խոչընդոտել զարգացմանը, ձեռնարկել գործի, խթանել առաջընթացին, ուրախ եմ քո գալուն, կրակել հակառակորդին***:

3. Մի շարք բայեր (ծանոթանալ, մտերմանալ, բարեկամանալ, ընկերանալ, թշնամանալ, հաշտվել, գժտվել, վիճել, կռվել, խորհրդակցել) կամ դրանց հիմքով կազմված բաղադրյալ ստորոգյալներ (ծանոթ ենք, ընկեր են, համամիտ եմ և այլն) հանգման խնդիր են պահանջում **հետ** կապով կամ էլ միայն փոխադարձ դերանունով (իրար, միմյանց, մեկմեկու), եթե առկա է փոխադարձության հարաբերություն անձերի (կամ անձնավորված իրերի) միջև: Օրինակ՝ *Նոր տնօրենը սկսել է* ***ծանոթանալ աշխատակիցների հետ****: Անպայման* ***կխորհրդակցեք իրար հետ****: Դուք* ***միմյանց թշնամի չեք****:* Եթե հարաբերությունը փոխադարձ չէ (սովորաբար այդպես է, երբ խնդիրը անձ չէ), ապա հանգման խնդիրը լինում է առանց **հետ** կապի՝ ***Ծանոթ եմ Ձեր տված ցուցմունքին****:*

4. Անորոշ դերբայով արտահայտված հետադաս հանգման և անջատման խնդիրները *(Տրամադրված եմ* ***աշխատելու****: Հրաժարվում է* ***ցուցմունք տալուց)*** կարող են դրվել նաև ուղղական–հայցական հոլովով *(Տրամադրված եմ* ***աշխատել****: Հրաժարվում է* ***ցուցմունք տալ)****:* Հանձնարարելի են սեռական–տրականով ձևերը:

5. Սխալ է անորոշ դերբայի ուղիղ ձևի փոխարեն տրական հոլովի կիրառությունը, որը հակասում է գերադաս բայի խնդրառությանը՝ *Թո՛ւյլ տվեք* ***բացակայելու*** *(⇐****բացակայել****): Շարունակե՛ք* ***պատասխանելու*** *(⇐* ***պատասխանել****) հարցերին: Պարտավորվում է* ***ստանձնելու*** *(⇐****ստանձնել****):*

6. Սխալ է **անորոշ դերբայի գործիական հոլովով** դերբայական դարձվածի և նախադասության ստորոգյալի **տարբեր ենթականերով** կառույցների կիրառությունը, ինչպես՝ *Դատարանում պաշտպանական որոշում կիրառելու մասին հայցադիմումը քննվել է* ***չհրավիրելով դատական նիստ****: Նշված որոշման դեմ X ՓԲԸ անունից վերաքննիչ բողոք է բերվել 25.10.2018 թվականին՝* ***հանձնելով այն փոստային կապի ծառայություն*** (տե՛ս նաև էջ 121-122):

Ճիշտ են՝

⇒ Դատարանում պաշտպանական որոշում կիրառելու մասին հայցադիմումը քննվել է ***առանց դատական նիստ հրավիրելու:***

⇒ Նշված որոշման դեմ X ՓԲԸ անունից վերաքննիչ բողոք է բերվել 25.10.2018 թվականին. ***բողոքը հանձնել են փոստային կապի ծառայություն/ծառայությանը:***

*** **** ***

Ամփոփենք: Լեզվական օրենքների մանրամասն և պարտադիր իմացությունը, անշուշտ, լեզվաբանի գործ է: Սակայն լեզվական որոշակի կանոնների, լեզվամիջոցների գործառական հնարավորությունների իմացությունը և առհասարակ հայերենի լեզվական մշակույթին բավարար չափով տիրապետելը կարևոր նախապայմաններ են իրավաբանական գրագրությունը պատշաճ կազմակերպելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Բառակազմական (մասամբ իմաստային) ընդհանրություններ ունեցող բառերի ցանկ

Զուգահեռ տրվող բառերի մի մասը ունի համընկնող իմաստներ: Այստեղ բերվում են դրանց միայն տարբերվող իմաստները:

ազատագրել – մեկին կամ մի հանրության անազատ՝ ճնշված վիճակից ազատել
ազատել – փրկել, նեղ դրությունից հանել
անմիջաբար – անմիջականորեն՝ առանց միջնորդի
անմիջապես – իսկույն՝ առանց հապաղելու
առկայություն – ներկայություն, այդ պահին լինելը
արարմունք – արարք, քայլ
արարում – արարելը, ստեղծելը
արժանավոր – արժանիք(ներ)ով օժտված
արժանի – մի բանի համար արժանիք ունեցող, հարմար
արտահանություն – արտահանելու գործողությունը
արտահանույթ – արտահանվող ապրանքը
բավական – *մկբ., ած.,* բավարար չափով, բավ է, հերիք է
բավականին – *մկբ.*, բավականաչափ, բավարար չափով

գերադասություն – գերադաս, նախընտրելի լինելը
գերազանցություն – որևէ բանում մեկի (մի բանի) հմմտ. առավել լինելը, (դվնգ.) դիմելու հարգական տիտղոս՝ *Ձերդ գերազանցություն*
գերակայություն – գերազանց, գերիշխող լինելը
գնողականություն – դրամական միավորի գնողական կարողությունը
գնողունակություն – գնումներ կատարելու ունակություն
գործածել – կիրառել, բանեցնել
օգտագործել – գործադրել, օգտվել, ծառայեցնել
գործարկել – գործածության մեջ դնել, գործի դնել, փորձարկել
գործառնություն – ֆինանսական, առևտրային և այլ գործարք, միավորված գործողությունների ամբողջություն (օպերացիա)
գործառություն – գործառելը, գործառնություն կատարել, վարել, գործել, *(գիտ.)* իր դերը, պաշտոնը՝ գործառույթը կատարել
գործառույթ – երևույթի գործունեություն (ֆունկցիա)
գրախոս – նա, ով գրախոսություն է գրում, աշխատանքը ներկայացնող, գնահատող
ընդդիմախոս – մեկի կարծիքին հակառակ խոսող, գիտական գնահատումով հանդես եկող
դիտարկել – քննել, վերլուծել, ուշադրության առնել
դիտել – նայել, հետևել
երախտագիտություն – զգացում՝ լավության դիմաց
երախտիք – լավություն
զանցանք – թեթև հանցանք
հանցանք – հասարակականորեն վտանգավոր, դատապարտելի արարք կամ անգործություն

զգայնություն – զգայունություն, զգացողություն
զգայություն – զգալը, գիտակցության մեջ նյութական աշխարհի արտացոլումը
զգոնություն – զգոն, աչալուրջ լինելը
զգացմունք – մարդու ֆիզիկական և հոգեկան զգայությունների ամբողջություն
զգացում – զգալը, հոգեկան ապրում, հույզ, զգացողությունը
զգույշ – կշռադատող, հնարավոր վտանգները նախատեսող և այլն
զգուշավոր – զգուշություն հանդես բերող
զգուշավորություն – զգուշավորի հատկությունը, զգուշավորի վարմունք
զգուշություն – զգույշ լինելը
զեկույց – հաղորդում
զեկուցում – բանախոսություն
զերծ – ազատ, անմասն, մի բանից հեռու
զուրկ – զրկված, մի բան չունեցող, աղքատ
զինակիր – սպառազեն, զինավառ
զինակից – դաշնակից, ռազմընկեր
զննել – ուշադրությամբ նայել, տնտղել իրերը, փաստաթղթերը, դիակը
ընդդիմադիր – դիմադրող, դեմ կանգնող, հակառակ ուղղությամբ ազդող, հակաճառող
ընդդիմություն – ընդդեմ՝ հակառակ լինելը, ներհակություն, դիմադրություն, դիմություն
թողարկել – պատրաստի արտադրանք բաց թողնել, արտադրել, վաճառքի հանել
թողնել – թույլ տալ, թույլատրել, արտոնել
թվարկել – իրար հետևից թվել
թվել – հիշատակել, նկարագրել

ժառանգել – *1.* ժառանգություն թողնել, *2.* ժառանգություն ստանալ

ի ցույց դնել – երևացող տեղ դնել, ձևի համար դնել, մեկի պակասությունները բոլորի առաջ ասել

խնդիր – հարց

խնդիրք – խնդրանք

կազմակերպական – կազմակերպելուն հատուկ

կազմակերպչական – կազմակերպչին հատուկ

կանգնեցնել – *1.* ոտքի վրա բարձրացնել, դնել, պահել, *2.* աշխատանքը, գործողությունը դադարեցնել և այլն

կասեցնել – ընթացքը, զարգացումը, օրենքի կիրառությունը դադարեցնել

կասկածալի – կասկածով լի

կասկածելի – կասկած ներշնչող

կատարելիություն – կատարելի լինելը

կատարելություն – կատարյալ լինելը

հազվագյուտ –*ած.,* դժվարությամբ գտնվող, մեծ արժանիքով օժտված

հազվադեպ – *ած., մակբ.,* սակավադեպ, քիչ պատահող, հազիվ պատահող

հայեցակարգ – տեսակետների ամբողջություն

հայեցակետ – տեսակետ

հայեցողություն – ընտրություն անելը, ըստ կամքի

հայեցություն – հայացք, արտաքին երևույթ

հանցագործ – *գ.,* հանցագործություն կատարող անձ

հանցակից – հանցանքի մասնակից, մեղսակից

հանցավոր – *ած.* հանցանք գործող, գործած, հանցապարտ

հաշվարկել – մի բանի տարբեր կողմերը նկատի առնել

հաշվել – համրել

հավաստագրել – վկայագրել, գրավոր կերպով վավերացնել, ճշգրտորեն գրի առնել
հավաստել – ստույգ լինելը հաստատել, հավաստի ցույց տալ, հավաստի դարձնել, հավաստիացնել
հավաքագրել – մարդկանց վարձել մի բանի համար, համալրել, համախմբել
հավաքել – *1.* խմբել, ժողովել, *2.* հրավիրել, կանչել
հարմարանք – հարմար լինելու պարագա, հանգամանք
հարմարություն – հարմար լինելը
հետախուզություն – հետախուզելը
հետախուզում – որոնում, փնտրելը, հետախուզելը
հետնորդ – ժառանգ, հաջորդ սերունդ
հետևորդ – հետևող, գաղափարակից, գործը շարունակող, կողմնակից
հիմնադրել – հիմք դնել, հաստատել, հիմնարկել՝ հաստատուն և ամբողջական կարգով
հիմնել – սկիզբ դնել, հիմք գցել, կազմակերպել
հնար – ճար, միջոց, հնարավորություն, ջանք
հնարանք – որևէ բան արտահայտելու ձև, եղանակ
հնարք – ճարտարություն, վարպետություն, խորամանկություն
հրաձիգ – հրացանով լավ կրակող, զինվոր
հրձիգ – *1.* հրդեհաձիգ, *2.* հրահրող, խռովարկու
հրապարակել – հրապարակ հանել, հայտարարել
հրատարակել – տպագրել
մանրամասներ – առանձին մանրամասնություններ
մանրամասնություններ – բոլոր հանգամանքները
մեղա գալ – մեղքը խոստովանել, ներում հայցել
մեղանչել – մեղք, հանցանք գործել

մեղադրյալ – նա, ով մեղադրվում է հանցանքի մեջ և դրա համար դատի է ենթարկված

մեղավոր – օրենքի դեմ մեղանչած, օրինախախտ, հանցավոր

մեղսակից – հանցանքին մասնակից

միաժամանակ – միևնույն ժամանակ

միառժամանակ – ժամանակավորապես

միասնական – միասնություն կազմող, միավորված, միահամուռ

միացյալ – մի ամբողջություն կազմող, միասին հավաքված

մտածողություն – մտածելու ունակություն, մտածելը

մտածություն – դատողություն

մրցակցություն – մրցակից լինելը

մրցություն – իրար հետ մրցելը

նկարագիր – դեմք, պատկեր, բնավորություն, հոգեկան կերտվածք, բնույթ

նկարագրություն – մեկի կամ մի բանի գրավոր կամ բանավոր բնութագիր, փաստերի, իրողություններ-ի և այլնի թվարկում՝ շարադրում՝ առանց գիտական վերլուծության

շփոթմունք – շփոթ վիճակ, շփոթած բան, հուզմունք, իրարանցում

շփոթություն – թյուրիմացություն, սխալանք, շփոթելը

որակավորել – որակը բարձրացնել, որակյալ դարձնել, բնորոշել, որոշել գիտելիքների մակարդակը

որակել – սահմանել՝ որոշել որակավորումը, բնութագրել, գնահատել

չափ – չափման միավոր, քանակ, սահման

չափս – չափերը որոշող տվյալների ամբողջություն

պահանջարկ – (*տնտսգ.*) մարդկանց՝ ապրանքներ գնելու ցանկությունը և ունակությունը
պահանջմունք – բավարարման ենթակա կարիք
պահել – որոշ դրության մեջ թողնել, խնամել
պահպանել – առանց կորստի կամ փչացնելու պահել
պաշտպանել – անվտանգությունն ապահովել
պահեստ – ապրանք, մթերք պահելու շենք
պահուստ – հոգեպահուստ, պահ մտնելը, պահպանություն, պաշար
պաշտոնական – պաշտոնին վերաբերող
պաշտոնեական – ծառայողական
պատկանելիություն – պատկանելի լինելը
պատկանելություն – պատկանելը
պատճառ – շարժառիթ, դրդապատճառ
պատճառաբանություն – փաստարկներ՝ որևէ բան հիմնավորելու համար
սովորություն – հասարականական որևէ միջավայրում հաստատված կանոն, որը կարգավորում է մարդկանց վարքագիծը, վարվելակերպն ու գործելակերպը
սովորույթ – ավանդաբար հաստատված հասարակական (կենցաղային, ժողովրդի) վարքագծի կանոնների ամբողջություն նն
վերահաս – անսպասելիորեն վրա հասնող, սկսված
վերահասու – մի բանի ուշադիր հետևող, գիտակ
տեղեկատվություն – տեղեկություն տալը, լրատվություն
տեղեկություն – տեղյակ լինելը, լուր, ծանուցում
տեղի տալ – նահանջել, զիջել
տեղիք տալ – առիթ տալ

տեսլական – *1. (ած.)* երևակայական, ոչ իրական, երևութական, **2.** *(գոյ.)* մտադրություն, պատկերացում

տնօրենություն – տնօրեն լինելը, ղեկավարություն

տնօրինություն – տնօրինելը

տուգանք – նյութական պատիժ

տույժ – բարոյական պատիժ

ցույց տալ – տեսնել տալ, այնպես անել, որ տեսնեն, ապացուցել, հանդես բերել, վկայել և այլն

ցուցադրել – մի երևացող տեղ դնել, որ տեսնեն, կինոնկար ցույց տալ, բեմադրել, ի ցույց դնել

փաստ – իրողություն, եղելություն, իսկություն, օրինակ և այլն

փաստարկ – հիմնավորում, պատճառաբանություն

փոխակերպել – կերպարանքը փոխել, վերածել այլ կառուցվածքի, առհասարակ՝ փոփոխության ենթարկել

փոխարինել – մի բանի փոխարեն մի ուրիշը դնել, գործածել

փոխարկել – մի բան այլ բանի վերածել

փորձարկել – փորձնական օգտագործմամբ ստուգել որակը՝ պիտանիությունը

փորձել – փորձ կատարել, որևէ բան ձեռնարկել, համտես անել

քննել – քննության ենթարկել, դիտել

քննարկել – որևէ հարց քննության նյութ առնել, ժողովի նյութ դարձնել և այլն[41]

---

[41] Այս և նման բառերի գործածությանը դիմելիս մի՛ խուսափեք օգտվելուց ձեռքի տակ եղած մասնագիտական կամ բացատրական բառարաններից:

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

Գոյականի հոգնակի թիվը. բառացանկ

Ստորև ներկայացվում է հոգնակիի կազմության մեջ զուգաձևություններ կամ բացառություններ դրսևորող գոյականների բառացանկ:

Աստղանիշով տրվում են այն կազմությունները, որոնք գործածության մեջ եղած բառացանկերում կամ բառարաններում ներկայացված են որպես զուգաձևություններ, սակայն մեր ուսումնասիրություններով (ժամանակակից գրականության և լրատվության միջոցների լեզվական նյութի քննություն, վիճակագրական հարցումներ, «Արևակ»-ից քաղված տեղեկություններ և այլն) գրական լեզվում հանձնարարելի տարբերակներ չեն:

ազդ–եր
ազդազանգ–եր
ազդալույս–եր
ազդոսկր–եր
ազդր–եր
ախտանիշ–ներ
ականանետ–ներ
ականատես–ներ
ակնարկագիր–ներ
ակնթարթ–ներ//–եր
ահազանգ–եր
այտոսկր–եր
անդրադարձ–ներ
անկյունադարձ–եր

անկյունաչափ–ներ
(չափող գործիք)
անկյունաչափ–եր
(անկյունի չափը)
անջրպետ–ներ
անցաբառ–եր
անցուդարձ–եր
առանձնատն–եր
առանցք–ներ
աստղանիշ–ներ//–եր
աստղ–եր
ավանդապահ–ներ
ատամնաշար–եր
ատենախոս–ներ
ատենապետ–ներ//եր
արագաչափ–ներ
արկղ–եր//–ներ
արշալույս–ներ//–եր*
արտագաղթ–եր
բազմակետ–եր
բազմանիշ–ներ
բաղաձայն–ներ
բառարանագիր–ներ
բարեգործ–ներ
բարձրախոս–ներ
բլանկ–ներ
բնակավայր–եր
բրենդ–ներ
բու–եր//բվեր
բուժկետ–ներ//–եր
բուժքույր–եր
բուռ–եր//բռեր
գաղթավայր–եր
գաղտնաբառ–եր
գանգոսկր–եր
գանձապետ–ներ
գետափ–եր
գիշերապահ–եր
(գիշերային պահ)
գիշերապահ–ներ
(գիշերային պահակ)
գիսաստղ–եր
գլխաբառ–եր
գլխագին–գներ//–ներ*
գլխակապ–եր
գյուղապետ–ներ//–եր
գովազդ–ներ//–եր
գործադուլ–ներ
գրագող–եր
գրախոս–ներ
գրանիշ–ներ
գրաշար–եր (գրի շար)
գրաշար–ներ (գիր
շարող)
գրպանահատ–ներ
դաշտավայր–եր
դասագիրք–գրքեր
դասադուլ–ներ

դասանիշ–ներ
դեղատն–եր
դերբայ–ներ
դիտակետ–եր
դիտանցք–եր
դյուցազն–եր
դուստր–եր
դրամահատ–ներ
դրամանենգ–ներ
դրամանիշ–ներ//–եր
դրամատուն–տներ
դրոշմանիշ–ներ//–եր
եզր–եր
ելակետ–եր
ելումուտ–ներ
ելևէջ–ներ
եկամուտ–ներ
ենթակետ–եր
ենթամաս–եր
ենթաշերտ–եր
երկնիշ–ներ
երկտող–եր (երկու տող)
երկտող–ներ (նամակ, գրություն)
երկրաշարժ–ներ//–եր
զինադուլ–ներ
զորամաս–եր
զորաշարժ–եր
զորապետ–ներ
զորացույց–եր
էջանիշ–ներ
էջաչափ–եր (էջի չափս)
էջաչափ–ներ (չափող սարք)
թաղամաս–եր
թերուդեմ–եր
թզաչափ–եր
թթվասեր–եր (թթվամշակված սերուցքներ)
թթվասեր–ներ (թթու սիրողներ)
թիկնազոր–ներ//–եր
թիմ–եր
թվացույց–ներ
թևկապ–ներ//–եր
ժամանակացույց–ներ
ժամանց–ներ
ժամատուն–տներ
ժամացույց–ներ
ժամկետ–ներ
ժանր–եր
ինը/ինն–եր
ինքնագովազդ–ներ//–եր
ինքնաձիգ–ներ
լիազոր–ներ

լիտր–եր
լճափ–եր
լողափ–եր//–ներ
լրագիր–գրեր
լրտես–ներ
լուսազդ–ներ//–եր
լուսանցք–ներ
խմբերգ–եր
խնդրագիրք–գրքեր
խոտհարք–ներ
խորագիր–գրեր
խորհրդանիշ–ներ
ծայրակետ–եր
ծխախոտ–եր//–ներ
ծխանցք–եր
ծովափ–եր
ծովեզր–եր
ծրագր–եր
կադաստր-ներ
կադր–եր
կայազոր–եր//–ներ
կայարանապետ–ներ//–եր
կարգախոս–ներ
կարճատես–ներ
կենսագիր–ներ
կարգապահ–ներ
կիզակետ–եր
կղմինդր-ներ
կողմնացույց–ներ
կոճականցք–եր
կոճղ–եր
կրակակետ–եր
կրոնափոխ–ներ
հակագազ–եր//–ներ
հականիշ–ներ
հակացույց–եր
հաղորդաշար–եր
համազոր–ներ
համայց–եր
համանիշ–ներ
համարանիշ–ներ//–եր
համերգ–ներ
համտես–ներ
հայեցակետ–եր//–ներ
հայտանիշ–ներ//–եր
հայրապետ–ներ
հայրենադարձ–ներ
հանդիսատես–ներ
հանցանիշ–ներ
հանքաշերտ–եր
հաշվապահ–ներ
հաշվենիշ–եր
հատկանիշ–ներ
հարացույց–ներ
հարթաչափ–ներ
հարկահան–ներ
հարցուփորձ–եր

հարս–ներ
հարցաշար–եր
հացադուլ–ներ
հացատուն–տներ
հեծելազոր–եր//–ներ
հեռագիր–գրեր
հեռախոս–ներ
հեռուստագովազդ–ներ //–եր
հեռուստացույց–ներ
հետիոտն–եր
հետևակազոր–եր//–ներ
հերթապահ–ներ
հերթափոխ–եր
հիվանդատես–ներ
հյուս–եր (մազ, գիսակ)
հյուսն–եր (ատաղձագործ)
հոդվածաշար–եր
հողագործ–ներ
հողամաս–եր
հողաչափ–եր (հողի չափ)
հողաչափ–ներ (հողը չափող)
հողմաչափ–ներ
հուշագիր–ներ (հուշ գրող հեղինակներ)
հուշագիր–գրեր (մեմորանդում)
ձեռագիր–գրեր
ձեռնակապ–եր
ձկնորս–ներ
ձմեռնամուտ–ներ
ձևաչափ–եր
ճակատագիր–գրեր
ճամփեզր–եր
ճարտարապետ–ներ
ճյուղ–եր
ճութ–եր
մակնիշ–ներ//–եր
մահազդ–ներ//–եր
մանրամաս–եր (մանրակներ, դետալներ)
մանրամասն–ներ (մանրամասնություններ)
մանրէ–ներ
մատանեմատ–եր//–ներ*
մատենագիր–ներ (մատյան գրող հեղինակներ)
մատենագիր–գրեր (ձեռագիր մատյաններ, գրքեր)
մատենաշար–եր

մատնաչափ–եր
մարզատոն–եր
մարզպետ–ներ//–եր
մեծատուն–ներ
մեկնակետ–եր
մետր–եր
միանիշ–ներ
միջակետ–եր
միջանցք–ներ
միջնակետ–եր
միջնամատ–եր//–ներ*
միջնորմ–ներ//–եր
մրցանիշ–եր//–ներ
մրցաշար–եր
մրցատոն–եր
նամականիշ–ներ//–եր
ներգաղթ–եր
նշանակետ–եր
նշանացույց–ներ
նորամուտ–ներ
նոութբուք–ներ
նպատակակետ–եր
նոնականետ–ներ
նոնահատ–եր
նստացույց–եր
նրբանցք–ներ
նույնանիշ–ներ
նուշ–եր
շաղկապ–ներ
շրջադարձ–եր
շրջայց–եր
շքերթ–եր//–ներ*
ող–եր//–ներ*
ոսկր–եր
ոստիկանապետ–ներ//–եր*
ոտնաձայն–եր
ոտնաչափ–եր
որականիշ–ներ
որմ–եր
որոշ–ներ
չափանիշ–ներ//–եր
չվերթ–ներ//–եր
պահակազոր–ներ//–եր*
պահեստամաս–եր
պատառաքաղ–ներ
պատժաչափ–եր
պատշար–ներ
պարագիծ–գծեր
պարբերանիշ–ներ//–եր
պարոն–այք//–ներ
ջերմաչափ–ներ
ջրանցք–ներ//–եր
ջրաչափ–ներ
ռազմերթ–եր
ռումբ–եր
ռուս–ներ

սակավապետ–ներ
սանր–եր
սեղանապետ–ներ
սլայդ–ներ
սկեսրայր–ներ//–եր
սյունաշար–եր
սողանցք–ներ//–եր
սպարապետ–ներ
ստեղնաշար–եր
ստենդ–ներ
ստեղն–եր
ստեղնաշար–եր
ստորակետ–եր
ստուգայց–եր
ստուգատես–ներ
սրբավայր–եր
սրտաբաց–ներ
սրտագիր–գրեր (սրտագրության նշումներ)
սրտագիր–ներ (սրտագիր կատարող սարքեր)
սուտ–ստեր//–եր*
սևագիր-գրեր
վազանց–ներ
վաճառակետ–եր
վայրկենաչափ–ներ
վայրէջք–ներ
վաչկատուն–ներ
վարդապետ–ներ
վարկանիշ–ներ
վարձերթ–եր
վերադարձ–ներ
վերելք–ներ
վերնատուն–տներ
վերջակետ–եր
վիզ–վզեր
վիրակապ–եր
վրաերթ–եր
տարանիշ–ներ
տարեդարձ–ներ//–եր*
տարելից–ներ
տարեմուտ–ներ
տեգր–եր
տեղաշարժ–եր
տեսակետ–ներ
տիպ–եր
տոհմանիշ–ներ
տողադարձ–եր
ցանկապատ–ներ//–եր*
ցուցամատ–եր//–ներ*
ցուցանիշ–ներ
ուժաչափ–ներ
ուղեծիր–ծրեր//-ներ
ուղենիշ–ներ//–եր
ուղերթ–եր//ներ
ուղեցույց–ներ

փակագիծ–գծեր
փառատոն–եր//–ներ
փոխգնդապետ–ներ
փողկապ–ներ
փոստանիշ–ներ
փրկագին–գներ//-ներ*
քաղաքապետ–ներ//-եր
քաղմաս–ներ//–եր
քաղցր–եր
քայլաչափ–եր (քայլի չափը)
քայլաչափ–ներ (չափող գործիք)
քայլերգ–եր
քառատող–եր (չորսական տողեր)
քառատող–ներ (չորս մասի բաժանողներ)
քարայծ–եր
օդանցք–ներ//–եր
օրացույց–ներ
օրհներգ–եր
ֆիդայի–ներ

ՀԱՎԵԼՎԱԾ 3.

Խնդրառական բառացանկ

Բառացանկում հիմնականում տրվում են հաճախ գործածվող այն բառերը, որոնք արդի գրական հայերենում կա՛մ ունեն խնդրառական տարբերակներ, կա՛մ ստեպ-ստեպ գործածվում են սխալ խնդրառությամբ: Զուգաձևերից նախընտրելի են առաջինները:

Աստղանիշով տրվում են խնդրառական **անհանձնարարելի** տարբերակները:

ամաչել հանդիպելուց // հանդիպել
անհնար(ին) է միանալ
անհրաժեշտ է քննել (բայց՝ *անհրաժեշտություն կա քննելու*)
(ան)տեղյակ լինել գործին // գործից
աշխատել հանձնել
առաջարկել մասնակցել
առնչվել հարցին
արգելել մասնակցել
արտոնել ներկայացնել
ափսոսալ // ափսոսել չդիմելու համար

բաժանորդագրվել ամսագրին // ամսագիր
բավարարել պահանջները (պահանջներին*)
բողոքարկել վճիռը
բողոքել որոշման դեմ
գրոհել դիրքերի վրա // դիրքերը
դադարել հետախուզել // հետախուզելուց
դավաճանել ընտանիքին // ընտանիքը
դավանել սկզբունք // սկզբունքի
դասել շարքը // շարքին // շարքում
դժվարանալ մտածել
դիմագրավել դժվարություններին
դիմավորել ուղեբեռը
երախտապարտ լինել փաստաբանին
երդվել պատժել
զգուշանալ հանդիպելուց // հանդիպել
թողնել արտահայտվել
թույլատրել /թույլ տալ մեկնել
ժառանգել *1. տունը* **ժառանգություն ստանալ** *եղբորից*, *2. տունը* **ժառանգություն թողնել** *եղբորը*
ի սպաս դնել գործին
խաբել գործընկերոջը (սխալ է՝ *ստել գործընկերոջը*)
խանգարել աշխատանքը // աշխատանքին
խթանել առաջընթացը (առաջընթացին*)
խոչընդոտել ընթացքը // ընթացքին
խոստանալ փոխանցել
խոստովանել հանցանքը (հանցանքի մասին*)
խուսափել հանդիպելուց // հանդիպել
ծառայեցնել աշխատանքին (աշխատանքում*/աշխատանքի մեջ*)

կախել պատին // պատից
կապել պատճառաբանությանը (պատճառաբանության հետ*)
կառչել փաստարկին // փաստարկից
կարելի է խորհրդակցել (բայց՝ *կարիք կա խորհրդակցելու*)
կարողանալ հասնել
կպչել թղթին // թղթից
կտակել որդուն
կրակել թշնամու վրա (թշնամուն*)
հակադրվել անձին
հաղթել խաղում/դատում (սխալ է՝ *խաղը/պատերազմը*)
համաձայնել խոսել // խոսելու, կարծիքին (սխալ է՝ *կարծիքի հետ*)
համամիտ լինել տեսակետին (տեսակետի հետ*)
համաչափ/համընթաց է զարգացմանը (//զարգացման հետ)
համապատասխանել բնօրինակին (սխալ է՝ *բնօրինակի հետ**)
համոզել մնալ
հավասարվել ընթացքին (ընթացքի հետ)
հարկ է մոտենալ (բայց՝ *հարկ կա մոտենալու*)
հարկադրել գործել
հարմարվել տեղին (տեղի հետ*)
հարցնել մեկին // մեկից
հնարավոր է մոտենալ
հնարավորություն ունենալ տեղեկանալու
հոգ տանել որևէ մեկի մասին (որևէ մեկին*)

հսկել դիրքերը (դիրքերին*)
հրաժարվել ցուցմունք տալուց // ցուցմունք տալ
հրամայել կատարել
մտադիր է հեռանալ (բայց՝ *մտադրություն ունի հեռանալու*)
մտադրվել գնալու // գնալ
ձգտել հասնելու // հասնել
ձեռնարկել գործ (գործի*)
ներողություն խնդրել տուժողից
շարունակել վատնել
շնորհակալ լինել ծնողներին // ծնողներից
շնորհակալություն հայտնել բարեկամին
ողջունել ծրագիրը (ծրագրին*)
պայմանավոր(վ)ել գործոնով
պատրաստվել գնալու // գնալ
պարտավորվել խնամել
պարտավորեցնել վերադառնալ
պետք է գնալ
սկսել բացատրել
ստիպել խոսել
վնասել ձեռքը // հեղինակությանը
տենչալ ազատություն // ազատության
ցանկանալ տեսնել
ունկնդրել զեկույցը (բայց՝ *ունկնդիր լինել զեկույցի(ն)*)
ուրախ է տեսնելու համար // տեսնել
փորձել հրաժարվել

ՀԱՎԵԼՎԱԾ 4.

Գրագրության ձևեր

Իրավաբանական գրագրությունը առանձնանում է փաստաթղթային բազմազանությամբ: Դիմում, որոշում, օրենք, վճիռ, ծանուցագիր, տեղեկություն, հրաման, արձանագրություն և այլն. սրանցից յուրաքանչյուրն ունի կազմության իր ձևաչափն ու կաղապարը:

Արդեն անդրադարձել ենք ՀՀ վերաքննիչ դատարանների դատական ակտերի կառուցվածքային յուրահատկություններին: Մյուս փաստաթղթերի նմուշները ներկայացնում ենք առանց նկարագրության. դրանք օրինակելի և կիրառվող նմուշներ են:

1. ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0026, Երևան, Գ.Նժդեհի 23, հեռ. ՝ 44-84-08 (304)

ԴԴ7- _____ 22 հունիսի 2018 թ.

Բողոքաբեր՝ _____
(անուն-ազգանուն)

Ներկայացուցիչ՝ _____
(անուն-ազգանուն)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական գործի թիվը՝
Կողմերը և պահանջը՝
ըստ հայցի _____
(անուն-ազգանուն, պահանջ)
ընդդեմ _____
(անուն-ազգանուն, պահանջ)

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը

Բողոքի **ընդունումը մերժվել է**, հիմք՝ 25.06.2018 թվականի որոշումը (1 թերթ):

Առդիր՝ որոշումը՝ 2 թերթ:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ անուն-ազգանուն

Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0026, ք. Երևան, Գ. Նժդեհի 23, հեռ. (+ 37410) 448408-304 www.court.am, www.datalex.am

ԴԴ-7- 22 հունիսի 2018 թ.

Բողոքաբեր՝ անուն - ազգանուն
Ներկայացուցիչ՝ անուն-ազգանուն

Քաղաքացիական գործի համարը՝ _____
Կողմերը և պահանջը՝ ըստ հայցի _____ ընդդեմ _____ պահանջի մասին:
Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը՝ գործի քննությունը հետաձգվել է պատասխանող _____-ի պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով:
Դատական նիստի օրը, ժամը և վայրը՝ 17.07.2018 թ.՝ ժամը՝ 11:30, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի շենք (ք. Երևան, Գ. Նժդեհի 23, 3-րդ հարկ, դատական նիստերի դահլիճ թիվ **21**):

Ի գիտություն՝ *Դատական նիստին Ձեր չներկայանալն արգելք չէ վերաքննիչ բողոքը քննելու համար: Դատական կազմում ընդգրկված Դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցող դատավորին և նիստին ներկայացած այն անձանց, որոնք մասնակցում են գործին (հիմք՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր):*

Քաղաքացիական գործի վերաբերյալ տեղեկություններին կարող եք ծանոթանալ նաև www.datalex.am դատական տեղեկատվական կայքից:

Դատական նիստին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով:
ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ անուն-ազգանուն

Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
0026, ք. Երևան, Գ. Նժդեհի 23, հեռ. (+ 37410) 448408-304 www.court.am, www.datalex.am

ԴԴ7- _____ 22 հունիսի 2018 թ.

Բողոքաբեր՝ անուն-ազգանուն, հասցե
Ներկայացուցիչ՝ անուն-ազգանուն

Քաղաքացիական գործի համարը՝ _____

Կողմերը և պահանջը՝ ըստ հայցի _____-ի ընդդեմ _____-ի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը՝ վերաքննիչ բողոքն ընդունվել է ***վարույթ*** *(հիմք՝ 25.06.2018 թվականի որոշումը):*

Վերաքննիչ քաղաքացիական դատարանում բողոքի քննության կարգը՝ ***գրավոր ընթացակարգ*** *(հիմք՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 374-րդ հոդված):*

Դատական ակտի հրապարակման օրը՝ 17.07.2018 թ., ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի շենք (ք. Երևան, Գ. Նժդեհի 23, 3-րդ հարկ, դատական նիստերի դահլիճ թիվ 21):

Քաղաքացիական գործի վերաբերյալ տեղեկություններին կարող եք ծանոթանալ նաև www.datalex.am դատական տեղեկատվական կայքից:

Առդիր՝ որոշումը՝ 1 թերթից:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ անուն-ազգանուն

Դ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
0026, ք. Երևան, Գ. Նժդեհի 23, հեռ. (+ 37410) 448408-304 www.court.am,
www.datalex.am

ԴԴ7- _____ 22 հունիսի 2018 թ.

Բողոքաբեր՝ _____
Ներկայացուցիչ՝ _____
(հասցե՝ _____)

Քաղաքացիական գործի համարը՝ _____
Կողմերը և պահանջը՝ ըստ հայցի _____ -ի ընդդեմ _____-ի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը՝ վերաքննիչ բողոքի ***ընդունումը մերժվել է*** (հիմք՝ 25.06.2018 թվականի որոշումը):

Քաղաքացիական գործի վերաբերյալ տեղեկություններին կարող եք ծանոթանալ նաև www.datalex.am դատական տեղեկատվական կայքից:

Առդիր՝ որոշումը՝ 2 թերթ:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ **անուն-ազգանուն**

Ե.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
0026, ք. Երևան, Գ. Նժդեհի 23, հեռ. (+ 37410) 448408-304
www.court.am, www.datalex.am

ԴԴ7- _____ 22 հունիսի 2018 թ.

Բողոքաբեր՝ _____
(հասցե՝ _____)

Պատասխանող՝ _____
(հասցե՝ _____)

Քաղաքացիական գործի համարը՝ _____
Կողմերը և պահանջը՝ ըստ հայցի _____-ի ընդդեմ _____-ի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին:
Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը ուղարկվում է 04.09.2018 թվականի որոշումը:

Քաղաքացիական գործի վերաբերյալ տեղեկություններին կարող եք ծանոթանալ նաև www.datalex.am դատական տեղեկատվական կայքից:

Առդիր՝ 11 թերթ:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ **անուն-ազգանուն**

2. ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր_____-ին
(անուն-ազգանուն)
դիմող _____
(նշել դատավարական կարգավիճակը)
_____-ից
(անուն-ազգանուն)
հաշվառ. հասցե՝ _____
(նշել հաշվառման հասցեն)
ծանուց. հասցե՝ _____
(նշել ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից)
հեռ.՝ _____

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ
փաստաթղթի բնօրինակը վերադարձնելու մասին
(քաղաքացիական գործ թիվ _____)
(նշել գործի համարը)

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը քննել է թիվ _____ քաղաքացիական գործը՝ ըստ
(նշել գործի համարը)
հայցի/դիմումի _____ -ի
(ընդգծել) (նշել հայցվորի/դիմողի անուն-ազգանունը/անվանումը)
ընդդեմ _____ -ի՝
(նշել պատասխանողի անուն-ազգանունը/անվանումը)
_____ պահանջ(ներ)ի
(նշել վեճի առարկան)
մասին:

Սույն քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը __. __. 20__ թ. որոշում է կայացրել բողոքի քննությունը դատական նիստով անցկացնելու մասին, և դատական նիստը նշանակվել է __. __. 20__ թ.:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը ավարտել է գործի քննությունը և __. __. 20__ թ. կայացրել է որոշում, որը ուժի մեջ է մտել __. __. 20__ թ. :

Նշված քաղաքացիական գործի նյութերում է գտնվում

_____

(նշել պահանջվող փաստաթուղթ(եր)ը)

բնօրինակը:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 8-րդ մասը և հաշվի առնելով այն, որ նշված փաստաթղթ(եր)ը վերադարձնելը չի հակասում վճռի բովանդակությանը և էությանը՝

ՄԻՋՆՈՐԴՈՒՄ ԵՄ

վերադարձնել նշված փաստաթղթ(եր)ի բնօրինակ(ներ)ը:

Կից ներկայացնում եմ՝

(կցել պահանջվող փաստաթղթ(եր)ի լուսապատճենը (առկայության դեպքում))

1._____

2._____

/.../_____

Միջնորդող՝

_____

(ստորագրություն, անուն-ազգանուն)

«__»_____20__ թ.

Բ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի
դատավոր_____-ին
(անուն-ազգանուն)
դիմող _____
(նշել դատավարական կարգավիճակը)
_____-ից
(անուն-ազգանուն)
հաշվառ. հասցե՝ _____
(նշել հաշվառման հասցեն)
ծանուց. հասցե՝ _____
(նշել ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից)
հեռ.՝ _____

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ
թարգմանչի ծառայություններով ապահովելու մասին
(քաղաքացիական գործ թիվ _____)
(նշել գործի համարը)

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարույթում է գտնվում թիվ _____ քաղաքացիական գործը՝ ըստ (նշել գործի համարը)
հայցի/դիմումի _____ -ի
(ընդգծել) (նշել հայցվորի/դիմողի անուն-ազգանունը/անվանումը)
ընդդեմ _____ -ի՝
(նշել պատասխանողի անուն-ազգանունը/անվանումը)
_____ պահանջ(ներ)ի
(նշել վեճի առարկան)
մասին:

Սույն քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը __. __. 20__ թ. որոշում է կայացրել

բողոքի քննությունը դատական նիստով անցկացնելու մասին, և դատական նիստը նշանակվել է __. __. 20__ թ.:

Հաշվի առնելով, որ _____ չի
(նշել դատավարական կարգավիճակը կամ անունը)
տիրապետում հայերենին և չունի բավարար միջոցներ վճարովի թարգմանություն ապահովելու համար, քանի որ_____
_____
_____
(հիմնավորել բավարար միջոցներ չունենալու հանգամանքը)

և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը՝

ՄԻՋՆՈՐԴՈՒՄ ԵՄ

թիվ _____ քաղաքացիական գործով՝
(նշել գործի համարը)
_____-ին պետական միջոցների հաշվին
(նշել դատավարական կարգավիճակը)
ապահովել թարգմանչի ծառայություններով:

Կից ներկայացնում եմ՝
(կցել պահանջվող փաստաթղթ(եր)ի լուսապատճենը (առկայության դեպքում))
1._____
/.../_____

Միջնորդող՝
_____
(ստորագրություն, անուն-ազգանուն)
«__»_____20__ թ.

Գ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր_____-ին

(անուն-ազգանուն)

դիմող _____

(նշել դատավարական կարգավիճակը)

_____-ից

(անուն-ազգանուն)

հաշվառ. հասցե՝ _____

(նշել հաշվառման հասցեն)

ծանուց. հասցե՝ _____

(նշել ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից)

հեռ.՝ _____

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

վերաքննիչ բողոքը դռնփակ դատական նիստում քննելու մասին

(քաղաքացիական գործ թիվ _____)

(նշել գործի համարը)

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարույթում է գտնվում թիվ _____ քաղաքացիական գործը՝ ըստ (նշել գործի համարը

հայցի/դիմումի _____ -ի

(ընդգծել) (նշել հայցվորի/դիմողի անուն-ազգանունը/անվանումը)

ընդդեմ _____ -ի՝

(նշել պատասխանողի անուն-ազգանունը/անվանումը)

_____ պահանջ(ներ)ի

(նշել վեճի առարկան)

մասին:

Սույն քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը __. __. 20__ թ. որոշում է կայացրել բողոքի քննությունը դատական նիստով անցկացնելու մասին, և դատական նիստը նշանակվել է __. __. 20__ թ.:

Հաշվի առնելով, որ

_____

_____

_____

(հիմնավորել դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակը)

և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը՝

ՄԻՋՆՈՐԴՈՒՄ ԵՄ

__. __. 20__ս թ.՝ ժամը _____ -ին նշանակված թիվ _____ քաղաքացիական գործով վերաքննիչ
(նշել գործի համարը)
բողոքի քննությունը անցկացնել դռնփակ դատական նիստով:

Կից ներկայացնում եմ՝

(կցել պահանջվող փաստաթղթ(եր)ի լուսապատճենը (առկայության դեպքում))

1._____

/.../_____

Միջնորդող՝

_____

(ստորագրություն, անուն-ազգանուն)

«__»_____20__ թ.

Դ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի
դատավոր_____-ին
(անուն-ազգանուն)
դիմող _____
(նշել դատավարական կարգավիճակը)
_____-ից
(անուն-ազգանուն)
հաշվառ. հասցե՝ _____
(նշել հաշվառման հասցեն)
ծանուց. հասցե՝ _____
(նշել ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից)
հեռ.՝ _____

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ
գործի քննությունը հետաձգելու մասին

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարույթում է գտնվում թիվ _____ քաղաքացիական գործը՝ ըստ (նշել գործի համարը)
հայցի/դիմումի _____ -ի
(ընդգծել) (նշել հայցվորի/դիմողի անուն-ազգանունը/անվանումը)
ընդդեմ _____ -ի՝
(նշել պատասխանողի անուն-ազգանունը/անվանումը)
_____ պահանջ(ներ)ի
(նշել վեճի առարկան)

մասին:

Սույն քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը __. __. 20__ թ. որոշում է կայացրել բողոքի քննությունը դատական նիստով անցկացնելու մա-

սին, և դատական նիստը նշանակվել է __. __. 20__ թ.՝ ժամը ___-ին:

Հաշվի առնելով այն, որ

_____

_____:

(նշել այն հանգամանքները, որոնցով միջնորդողը հիմնավորում է իր պահանջը)

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի _____ կետը՝

(նշել կետը)

ՄԻՋՆՈՐԴՈՒՄ ԵՄ

__. __. 20__ թ.՝ ժամը __-ին նշանակված թիվ _____ քաղաքացիական գործի՝ դատական

(նշել գործի համարը)

նիստով բողոքի քննությունը հետաձգել:

Կից ներկայացնում եմ՝

(կցել պահանջվող փաստաթղթ(եր)ի լուսապատճենը (առկայության դեպքում))

1._____

/.../_____

Միջնորդող՝

_____

(ստորագրություն, անուն-ազգանուն)

«__»_____20__ թ.

3. ԴԻՄՈՒՄ

Ա. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր_____-ին

(անուն-ազգանուն)

դիմող _____

(նշել դատավարական կարգավիճակը)

_____-ից

(անուն-ազգանուն)

հաշվառ. հասցե՝ _____

(նշել հաշվառման հասցեն)

ծանուց. հասցե՝ _____

(նշել ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից)

հեռ.՝ _____

ԴԻՄՈՒՄ

վերաքննիչ բողոքից հրաժարվելու մասին

(քաղաքացիական գործ թիվ _____)

(նշել գործի համարը)

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարույթում է գտնվում թիվ _____ քաղաքացիական գործը՝ ըստ հայցի/դիմումի _____

_____ -ի

(ընդգծել) (նշել հայցվորի/դիմողի անուն-ազգանունը/անվանումը)

ընդդեմ _____ -ի՝

(նշել պատասխանողի անուն-ազգանունը/անվանումը)

_____պահանջ(ներ)ի

(նշել վեճի առարկան)

մասին:

_____

_____

_____

(նշել այն հանգամանքները, որոնցով միջնորդողը հիմնավորում է իր պահանջը (առկայության դեպքում))

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասը՝ հրաժարվում եմ վերաքննիչ բողոքից և

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Վերաքննիչ բողոքից հրաժարվելու հիմքով թիվ _____ քաղաքացիական գործի վարույթը

(նշել գործի համարը)

կարճել:

Կից ներկայացնում եմ՝

1._____

/.../_____

(առկայության դեպքում նշել կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը)

Դիմող՝ _____

(ստորագրություն, անուն-ազգանուն)

«__»_____20__ թ.

Բ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր_____-ին
(անուն-ազգանուն)
դիմող _____
(նշել դատավարական կարգավիճակը)
_____-ից
(անուն-ազգանուն)
հաշվառ. հասցե՝ _____
(նշել հաշվառման հասցեն)
ծանուց. հասցե՝ _____
(նշել ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից)
հեռ.՝ _____

ԴԻՄՈՒՄ

գործի նյութերից պատճեններ ստանալու մասին

(քաղաքացիական գործ թիվ _____)
(նշել գործի համարը)

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարույթում է գտնվում/կողմից քննվել է թիվ _____
(նշել գործի համարը)

քաղաքացիական գործը՝ ըստ հայցի/դիմումի
_____ _____ -ի
(ընդգծել) (նշել հայցվորի/դիմողի անուն-ազգանունը/անվանումը)

ընդդեմ _____ -ի՝
(նշել պատասխանողի անուն-ազգանունը/անվանումը)
_____պահանջ(ներ)ի մասին:
(նշել վեճի առարկան)

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

տրամադրել թիվ _____ քաղաքացիական գործից
(նշել գործի համարը)

1._____
(նշել անհրաժեշտ փաստաթուղթը)
2._____
/.../_____

Կից ներկայացնում եմ պետական տուրքի վճարման անդորրագիրը:
(Անհրաժեշտության դեպքում նշել, որ պետական տուրքի վճարման անդորրագիրը կներկայացվի պատճենահանման ենթակա փաստաթղթերի էջերը ճշտելուց հետո):

Դիմող՝ _____
(ստորագրություն, անուն-ազգանուն)

«__»_____20__ թ.

Գ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր_____-ին

(անուն-ազգանուն)

դիմող _____

(նշել դատավարական կարգավիճակը)

_____-ից

(անուն-ազգանուն)

հաշվառ. հասցե՝ _____

(նշել հաշվառման հասցեն)

ծանուց. հասցե՝ _____

(նշել ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից)

հեռ.՝ _____

ԴԻՄՈՒՄ

որոշումն օրինական ուժի մեջ մտած լինելու փաստը հաստատելու մասին

(քաղաքացիական գործ թիվ _____)

(նշել գործի համարը)

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը քննել է թիվ _____ քաղաքացիական գործը՝ ըստ

(նշել գործի համարը)

ըստ հայցի/դիմումի _____ -ի

(ընդգծել) (նշել հայցվորի/դիմողի անուն-ազգանունը/անվանումը)

ընդդեմ _____ -ի՝

(նշել պատասխանողի անուն-ազգանունը/անվանումը)

_____պահանջ(ներ)ի մասին:

(նշել վեճի առարկան)

Սույն քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը ավարտել է գործի քննությունը և __. __. 20__ թ. կայացրել է որոշում: Հաշվի առնելով այն, որ նշված որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում չի բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան, և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի 1-ին մասը՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

հաստատել, որ թիվ _____ քաղաքացիական
(նշել գործի համարը)
գործով ___. ____. 20__ թ. որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

Դիմող՝ _____
(ստորագրություն, անուն-ազգանուն)

«__»_____20__ թ.

Դ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի
դատավոր_____-ին
(անուն-ազգանուն)
դիմող _____
(նշել դատավարական կարգավիճակը)
_____-ից
(անուն-ազգանուն)
հաշվառ. հասցե՝ _____
(նշել հաշվառման հասցեն)
ծանուց. հասցե՝ _____
(նշել ծանուցման հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից)
հեռ.՝ _____

ԴԻՄՈՒՄ

դատական նիստի գրավոր արձանագրությունը տրամադրելու մասին

(քաղաքացիական գործ թիվ _____)
(նշել գործի համարը)

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարույթում է գտնվում/_____կողմից քննվել է թիվ _____
(նշել գործի համարը)

քաղաքացիական գործը՝ ըստ հայցի/դիմումի
_____ _____ -ի
(ընդգծել) (նշել հայցվորի/դիմողի անուն-ազգանունը/անվանումը)

ընդդեմ _____ -ի՝
(նշել պատասխանողի անուն- ազգանունը/անվանումը)
_____պահանջ(ներ)ի մասին:
(նշել վեճի առարկան)

Հաշվի առնելով այն, որ __. __. 20__ թ. դատական նիստը արձանագրվել է պարզ թղթային եղանակով, և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 163-րդ հոդվածի 5-րդ մասը՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

տրամադրել թիվ _____ քաղաքացիական
(նշել գործի համարը)
գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ __. __. 20__ թ. դատական նիստի գրավոր արձանագրության պատճենը:

Կից ներկայացնում եմ պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Դիմող՝ _____
(ստորագրություն, անուն-ազգանուն)

«__»_____20__ թ.

4. ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, _____
(նշել լիազորագիրը տալու վայրը)

_____
(նշել լիազորագիրը տալու ամսաթիվը՝ բառերով)

□ (նշել ֆիզ. անձի դեպքում) Ես՝ _____-ս,
(անուն-ազգանուն)

հաշվառված_____,
(նշել հաշվառման վայրի հասցեն)

անձնգ.՝ _____, սույնով լիազորում եմ
(նշել անձնագրի սերիան)

□ (նշել իրավք. անձի դեպքում) Ես՝ _____-ի
(նշել իրավաբանական անձի անվանումը)

_____,
(պաշտոն, անուն-ազգանուն)

գործելով կանոնադրության հիման վրա, սույնով լիազորում եմ _____-ին
(անուն-ազգանուն, առկայության դեպքում՝ պաշտոնը (իրավք. անձի դեպքում))

(հաշվառված _____,
(նշել հաշվառման վայրի հասցեն)

անձնգ.՝ _____,

(նշել անձնագրի սերիան)

ինձ/ընկերությանը ներկայացնել բոլոր դատական ատյաններում՝ օժտելով իմ/ընկերության անունից
դատավարական գործողություններ իրականացնելու իրավունքով, այդ թվում՝
(ընդգծել)

1. վերաքննիչ բողոքը ստորագրելու (այո) (ոչ),

2. արբիտրաժային համաձայնություն կնքելու և վեճն արբիտրաժ հանձնելու վերաբերյալ համաձայնություն տալու (այո) (ոչ),

3. ամբողջովին կամ մասնակի վերաքննիչ բողոքից հրաժարվելու (այո) (ոչ),

4. հաշտության համաձայնություն կնքելու (այո) (ոչ),

5. հաշտարարության վերաբերյալ համաձայնություն կնքելու (այո) (ոչ),

6. արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթացին մասնակցելու. (այո) (ոչ),

7. լիազորությունները այլ անձի փոխանցելու (վերալիազորելու) (այո) (ոչ),

8. դատական ծանուցումները և դատավարական փաստաթղթերը ստանալու (այո) (ոչ),

9. դատական ակտը բողոքարկելու (այո) (ոչ),

10. կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմում ներկայացնելու (այո) (ոչ):

(սույն լիազորություններից յուրաքանչյուրն անհրաժեշտ է ընդգծել լիազորվողին համապատասխան լիազորությամբ օժտելու դեպքում)

Լիազորագիրը տրված է _____ ժամկետով։

(նշել ժամկետը)

ԼԻԱԶՈՐՈՂ՝ _____

(ստորագրություն, անուն-ազգանուն (իրավք. անձի դեպքում՝ պաշտոն, կնիք))

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան Ս.,** Պաշտոնական ոճը և նրա առանձնահատկությունները, «Հայոց լեզու և գրականություն», Եր., 1983, պրակ 1-2, էջ 71-84:
2. **Աղայան Էդ.,** Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:
3. **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984:
4. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1989:
5. **Ավետիսյան Յու.,** Պաշտոնական գրագրություն, Եր., 2001:
6. **Ավետիսյան Յու., Զաքարյան Հ.**, Հայոց լեզու, Եր., 2011:
7. **Ավետիսյան Յու., Թելյան Լ., Սարգսյան Ա.** և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016:
8. **Ավետիսյան Յու., Թելյան Լ.** և այլք, Ուղեցույց հայոց լեզվի. հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն, Եր., 2017:
9. **Գաբրիելյան Վ.**, Գրավոր խոսք, Եր., 2012:
10. **Եզեկյան Լ.**, Ոճագիտություն, Եր., 2003:
11. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. I-IV, Եր., 1969:
12. Իրավաբանական տերմինների բառարան (http://www.irtek.am/views/dictionary.aspx)

13. **Իշխանյան Ռ.,** Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Եր., 1986:

14. ՀՀ Կառավարության՝ 1999 թ. դեկտեմբերի 22 N 767 որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=59409)

15. ՀՀ Կառավարության՝ 2012 թ. ապրիլի 5-ի արձանագրային որոշումը (www.e-gov.am/protocols/item/159/):

16. **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հ. Դ, Եր., 1944:

17. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2002 թ. ապրիլի 3-ին: Ուժը կորցրել է 2018 թ. ապրիլի 7-ին (www.arlis.am/documentview.aspx?docID=90941):

18. «Իրավական ակտերի մշակման մեթոդական ցուցումներ», ՀՀ Կառավարության՝ 2012 թ. ապրիլի 5-ի նիստի N 13 արձանագրային որոշման հավելված (http:// www.e-gov.am/u_files/file/decrees/arc_vorosh um/ 2012/04/qax13-2_1.pdf/)

19. **Մելքոնյան Ս.**, Ակնարկներ հայոց լեզվի ոճագիտության, Եր., 1984:

20. **Մոլիտերնո Ջ., Մելիքյան Ռ., Մելքոնյան Դ.,** Իրավաբանական գիր և վերլուծություն, Եր., 2010:

21. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2018 թ. մարտի 21-ին: (https://www.arlis.am/documentview.aspx?docid=120733)

22. **Պառնասյան Ն.**, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1970:

23. **Պետրոսյան Հ.**, Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., 1972:

24. **Պետրոսյան Հ.,** Հայերենագիտական բառարան, Եր., 1987:

25. **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982:

26. «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006:

27. **Григорьев А. С.**, Юридическая техника: учебное пособие (электронное издание), Тюмень, 2015. https://lawbook.online/yuridicheskoy-tehniki-osnovyi/sposobyi-metodyi-tolkovaniya-normativno-67548.html

28. **Сергеич П.**, Искусство речи на суде, М., 1988.

29. **Честара Дж.,** Деловой этикет (перевод: Бескова Л.), М., 2001.

30. Consumer Product Safety Commission et al. v. GTE Sylvania, Inc. et al.,447 U.S. 102 (1980), Connecticut Nat´l Bank v. Germain, 112 S. Ct. 1146, 1149 (1992) (https://en.wikipedia.org/wiki/Statutoryinterpretation)

31. **Farrell v. Farrell,** 365 Ark. 465, 231 S.W.3d 619. (2006) (https://en.wikipedia.org/wiki/Statutoryinterpretation)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 3
ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ.....7

ՄԱՍ 1. ՄԵԾԱՏԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ
1. 1. Հատուկ անուններ 13
1.2. Հապավումներ 16
1.3. Թվարկվող միավորներ 18

ՄԱՍ 2. ԲԱՌԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒ-ԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2.1. Բառի անհարկի գործածություն 23
2.2. Բառակազմություն, բառակազմական տարբե-րակների ընտրություն..... 54

ՄԱՍ 3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹ-ՅՈՒՆՆԵՐ 70
3.1. Հնաբանական առանձնահատկություններ
3.1.1. Գոյական անուն: Որոշիչ հոդի գործածությունը 71
3.1.2. Գոյականի թիվը..... 73
3.1.3. Հոլովական ձևեր 74
3.1.4. Թվական անուն 78
3.1.5. Շաղկապ 80
3.1.6. Կապ 87

3.2. *Շարահյուսական առանձնահատկություններ* 90
3.2.1. Ենթակայի և ստորոգյալի գործածության յուրահատկություններ 92
3.2.3. Շարադասություն 97

3.3. Շարահյուսական կառույցների ընտրություն. հոմանիշ կառույցներ 113
3.3.1. Դերբայական դարձվածով պարզ և բարդ ստորադասական նախադասություններ 114
3.3.2. Ներգործական և կրավորական նախադասություններ 124
3.3.3. Պարզ և բարդ նախադասություններ 130

3.4. Շարահյուսական այլ իրողություններ
3.4.1. Համաձայնություն 142
3.4.2. Խնդրառություն 147

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Բառակազմական, մասամբ իմաստային ընդհանրություններ ունեցող բառերի ցանկ 151
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Գոյականի հոգնակի թիվը. բառացանկ .. 159
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Խնդրառական բառացանկ 167
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Գրագրության ձևեր 171
1. Ծանուցագիր 172
2. Միջնորդություն 177
3. Դիմում 185
4. Լիազորագիր 193

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 196

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Ս. Դավթյանի

Տպագրված է «Արա Մնացականյան» ԱՁ-ում:
Արհեստավորների 2 փ. 22տ.

Ստորագրված է տպագրության՝ 24.06.2019:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 12.625:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am